

Հաստատված է
Հայաստանի ազգային ագրարային
համալսարանի հոգաբարձուների
խորհրդի նիստում
_____ հունվարի 2014թ.
(արձանագրություն N1)

Խորհրդի նախագահ՝ _____

(ստորագրություն)

_____ հունվարի 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

2013թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Հաշվետվություն

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գործունեության բոլոր ոլորտների արդյունավետ գործունեությունը պայմանավորված են բոլոր կրթական ծրագրերով ուսանողների թվաքանակով և տարեկան շարժով.

1.1. Բակալավրային կրթական ծրագրով առկա ուսուցման գործող ուսանողների թվաքանակը 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում էր 2756 (աղյուսակ 1), որից 2214 (81.1%) վճարովի համակարգում: 2014 թ. հունվարի 1-ի դրությամբ այդ թվաքանակները համապատասխանաբար կազմել են 2806 և 2294 (81.8%): Ուսանողների ընդհանուր թիվը կազմում է 3429:

Հաշվետու տարվա ընթացքում համալսարանն ավարտել են 821 ուսանողներ, որից 600-ը՝ (73.1%) վճարովի համակարգից: Առկա ուսուցման առաջին կուրս ընդունվել են 663 ուսանողներ, որից 585 (88.2%) վճարովի: 2013 թվականին առաջին

կուրս ընդունված ուսանողների թիվը 402-ով պակաս է 2012 թվի ընդունվածներից: Համալսարանից հեռացվել են 100 ուսանող (որից 96-ը վճարովի համակարգից), 623 ուսանողներ ձևակերպել են ակադեմիական արձակուրդ, այդ թվում 616-ը գինվորական ծառայության հետ կապված:

Առկա ուսուցման համակարգում միայն «գերազանց» գնահատականներով սովորում են 329 ուսանողներ, որից 125-ը (38%) վճարովի համակարգից:

Տարվա ընթացքում վարձավճարի գեղչից սահմանված կարգով օգտվել են 253 ուսանողներ, այդ թվում նաև Արմավիրի մարզի կարկտահարությունից տուժված համայնքներից): ՀՀ օրենսդրությամբ և կառավարության որոշմամբ վճարովի համակարգի 31 ուսանողներ լիովին ազատվել են վարձավճարից: Անվանական կրթաթոշակներ ստանում են 15 ուսանողներ համալսարանից, այլ կրթաթոշակներ՝ ԱՄՔՈՐ-43 ուսանող, Թրփանճեան ընտանեկան հիմնադրամ-12 ուսանող, ՎԻՎԱՍԵԼ-ՄՏՍ-18 ուսանող, Հայաստանի Երիտասարդական հիմնադրամ-70 ուսանող, Արմենիա,-բարեգործական հիմնադրամ- 3 ուսանող, «Հայ ուսանողությանը» հիմնադրամ-2, ՀՀ գյուղատնտեսության նախարարի կրթաթոշակ-2 ուսանող: Ընդամենը 165 ուսանողներ, որոնց մի մասը կրթաթոշակները ստացել են վարձավճարի տեսքով:

Համալսարանը շարունակում է իր առաքելությանն ու նպատակներին, պետական կրթական չափորոշիչներին, ՀՀ կրթության զարգացման պետական ծրագրի և համալսարանի զարգացման ռազմավարական հայեցակարգի դրույթներին համապատասխան կրթական, գիտական և խորհրդատվական գործունեության իրականացումը: Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին (ԵԲԿՏ) ինտեգրումը ժամանակի հրամայականն է, ագրարային համալսարանում իրականացվող բարեփոխումների ընթացքը դարձրել է անշրջելի:

Ուսանողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձևավորմանը նպաստող կրթական միջավայրի ստեղծումով և համալսարանի կողմից իրականացվող կրթության որակով է պայմանավորված կրթական ծառայությունների շուկայում համալսարանի հեղինակության ու մրցակցության և աշխատաշուկայում շրջանավարտների պահանջարկի աճը: Ուստի այսօրվա հրամայականներից է համալսարանում որակի ապահովման համակարգի ձևավորումը և հետագա զարգացումը:

Կրթական բարեփոխումների հետագա զարգացումներին համահունչ՝ համալսանը պետք է խթանի ուսուցման ավանդական մեթոդներից անցումը, Ուսանողակենտրոն ուսուցման՝ ուսումնական գործընթացում կարևորելով ուսանողի դերակատարումը: Կրթության որակի գնահատման և ապահովման գործընթացներում էական դեր է հատկացվում ինքնավերլուծությանը և ինքնագնահատմանը՝ համալսարանի գործունեության արդյունավետության ապահովման և կրթության որակի բարձրացման կարևորագույն միջոցներին: Համալսարանում իրականացվող բարեփոխումների, ինքնավերլուծության և հավատարմագրման գործընթացներն այդ ամենի հավաստիացումներն են: Ուսումնական գործընթացների կազմակերպման ոլորտում ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի ներդրումը պահանջում է նաև կրթության կառավարման կառուցվածքային բարեփոխումներ:

Կարևորագույն խնդիրներից են կրթական համակարգի կառավարման արդյունավետության բարձրացումը, համալսարանի կառույցների և ստորաբաժանումների թվաքանակի օպտիմալացումը և դրանց գործունեության ոլորտների, պարտականությունների ու լիազորությունների հստակեցումը, օպերատիվ համագործակցությունը:

Կրթության համակարգը դեռ լիարժեք կերպով չի իրականացնում իր առաքելությունը, մշտապես առաջ են գալիս նոր խնդիրներ ու մարտահրավերներ, որոնց հաղթահարմամբ պայմանավորված են համալսարանի մրցունակությունը, ագրոպարենային համակարգի կրթության ապագան:

1.1.1. Ուսանողների 2012-2013 ուս. տարվա 1-ին և 2-րդ քննաշրջանների արդյունքները և խնդիրները

Համալսարանում 2012-2013 ուս. տարվա կիսամյակային ՎՆամփոփիչ քննությունները պլանավորվել և կազմակերպվել են ըստ ուսումնական պլանների և տարեկան սահմանված ժամանակացույցի:

Քննություններն անց են կացվել կենտրոնացված կարգով՝ ռեկտորատի ներկայացուցիչների, դեկանատների, կրթության որակի ապահովման և վերահսկման բաժնի աշխատակիցների մասնակցությամբ և վերահսկողությամբ: Քննաշրջանների արդյունքները ներկայացնենք ըստ կիսամյակների.

**Տվյալներ ՀԱԱՀ-ի ցերեկային ուսուցման բակալավրային կրթական աստիճանում
սովորող ուսանողների թվաքանակի վերաբերյալ**

Աղյուսակ 1

N	Ֆակուլտետներ Ցուցանիշներ	Ընդամենը համալսարանում		Որից՝ ըստ ֆակուլտետների						
				Ագրոնո- միական	Ագրոբ.և շուկայ.	Տնտեսա- գիտակ.	Պարեն. տեխնոլոգ.	Անասնաբուժ. և անասնաբուծ.	Գ/Ս և Ա/Տ	ՄՁ և ՀՇ
1	Ուսանողների թվաքանակը առ 01.01.13թ.	ընդ	2766	167	707	919	369	159	239	206
		որից վճ	2244	113	652	839	233	89	164	154
2	Ուսանողների թվաքանակը առ 01.01.14թ.	ընդ	2806	165	758	1086	281	133	182	201
		որից վճ	2294	103	683	987	179	76	120	146
3	Շրջանավարտների թվաքանակը տարվա ընթացքում	ընդ	821	72	166	220	130	52	84	54
		որից վճ	600	43	136	183	83	25	56	36
4	Ուսանողների ընդունելությունը տարվա ընթացքում	ընդ	663	42	151	270	56	36	46	62
		որից վճ	585	37	140	255	38	29	36	50
5	Հեռացումներ	ընդ	100	10	26	21	12	11	7	13
		որից վճ	96	9	26	20	11	10	7	13
6	Գտնվում են ակադեմիական արձակուրդում առ 01.01.13թ	ընդ	612	29	176	210	49	27	64	57
		որից վճ	602	27	175	210	47	25	61	57
		որից գին.ծառ.կապակցությամբ	607	28	176	208	48	26	64	57
7	Գտնվում են ակադեմիական արձակուրդում առ 01.01.14թ	ընդ	623	33	170	226	37	34	65	58
		որից վճ	613	32	168	226	35	31	63	58
		որից գին.ծառ.կապակցությամբ	616	1	3	1	36	1	-	-
8	Օգտվել են վարձավճարի գեղչից	12-13 ուս.տ II կիս.	145	10	53	41	12	5	10	14
		13-14 ուս.տ I կիս.	108	12	24	38	11	7	7	9
9	Ազատվել են վարձավճ. օրենսդ. սահմ. կարգ.	վճ.համ.	31	2	6	16	-	1	2	4
10	Գերազանիկ ուսանողների քանակը	ընդ	329	16	70	137	34	6	20	46
		որից վճ	125	-	25	71	-	-	-	29
11	ՀԱԱՀ անվանական կրթաթոշակ.	ընդ	15	2	2	-	-	2	3	2
12	Անվանական այլ կրթաթոշակներ	ընդ	4	-	-	2	2	-	-	-

2012-2013ու. տարվա 1-ին կիսամյակում համալսարանում քննություններին պետք է մասնակցեր 2623 ուսանող, որից՝ ագրոնոմիական ֆակուլտետում՝ 161(կազմում է քննություններին մասնակցող ուսանողների ընդհանուր թվի 6.1%-ը), տնտեսագիտական ֆակուլտետում՝888 (33.9%), անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուժական ֆակուլտետում՝152 (5.8%), պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում՝ 367 (14%), հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետում՝ 198 (7.5%), ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում՝ 635 ուսանող (24.2%), գյուղատնտեսության մեքենայացման և տրանսպորտային փոխադրումների ֆակուլտետում 222 (8.5%):

Առաջին կիսամյակի քննությունների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն է գրանցվել պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում՝ 81.5% (դեկան՝ Ա. Աղաբաբյան), հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետում՝77.3% (դեկան Պ. Էֆենդյան), անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուժական ֆակուլտետում՝76.3% (դեկան՝ Ա. Վարդանյան), իսկ առավել ցածր

առաջադիմություն գրանցվել է ագրոնոմիական ֆակուլտետում՝ 43.5 % (դեկան՝ Գ Սանթրոսյան):

2009-2010, 2010-2011, 2011-2012 և 2012-2013 ուս. տարիների կտրվածքով ուսանողների բացարձակ առաջադիմության ամփոփիչ արդյունքներն ըստ ֆակուլտետների և կիսամյակների բերված են աղյուսակ 2-ում:

Ըստ կուրսերի՝ համալսարանում ամենաբարձր միջին բացարձակ առաջադիմությունը գրանցվել է 5-րդ կուրսում՝ 85%, իսկ ամենացածրը՝ 1-ին կուրսում՝63%:

Ֆակուլտետների ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ առավել ցածր առաջադիմություն է գրնցվել ագրոնոմիական ֆակուլտետի 1-ին կուրսում՝34%, 4-րդ կուրսում՝ 48.2% և 5-րդ կուրսում 35.3%:

1.1.2. Ուսանողների հաճախումների արդյունքները և խնդիրները

Համալսարանում ուսանողների հաճախելիության հարցը միշտ եղել և մնում է կոլեկտիվի, ուսումնական բոլոր ստորաբաժանումների, ռեկտորատի, ֆակուլտետների և ամբիոնների ամենօրյա ուշադրության կենտրոնում: Իրականացված բազմաթիվ միջոցառումների արդյունքում համալսարանում ընդհանուր առմամբ արձանագրվել են ուսանողների հաճախելիության բարձր ցուցանիշներ:

Այսպես՝ 2008-2009 ուս. տարում արձանագրվել է ուսանողների հաճախելիության 93,35% միջին ցուցանիշ, 2009-2010 ուս.տարում՝ 93,13%, իսկ վերջին 3 ուսումնական տարիներին ընթացքում՝91,5%:

Ուսանողների առաջադիմության ամփոփ արդյունքները՝ ըստ ֆակուլտետների (2012-2013 ուս. տարի)

Աղյուսակ 2

Ֆակուլտետը	2012-2013 ուս. տարի						1-ին կիսամյակ						2-րդ կիսամյակ					
	1-ին կիսամյակ			2-րդ կիսամյակ			1-ին վերահանձնում			2-րդ վերահանձնում			1-ին վերահանձնում			2-րդ վերահանձնում		
	Ուս- նողն. թիվը	Առա- ջադի- մութ. %	Միջին գնահա- տակ.	Ուս- նողն. թիվը	Առա- ջադի- մութ. %	Միջին գնահա- տակ.	Ուս- նողն. թիվը	Առա- ջադի- մութ. %	Միջին գնահա- տակ.	Ուս- նողն. թիվը	Առա- ջադի- մութ. %	Միջին գնահա- տակ.	Ուս- նողն. թիվը	Առա- ջադի- մութ. %	Միջին գնահա- տակ.	Ուս- նողն. թիվը	Առա- ջադի- մութ. %	Միջին գնահա- տակ.
Ազրոնոմիական	161	43.6	3.2	137	67.9	3.6	91	65.8	3.0	55	99.4	3.0	43	80.2	3.0	27	93.1	3.0
Անասնաբուծ. բժշկ. և անասնաբուծ.	152	76.3	3.5	155	73.5	3.5	48	90.1	3.1	15	100	3.2	50	92.2	3.1	12	100	3.1
Պարենամթերքի տեխնոլոգիան.	367	81.0	3.7	231	80.0	3.9	55	95.1	3.1	18	100	3.0	32	96.5	3.1	8	100	3
ԳՄ և ԱՏ	222	73.9	3.5	146	68.0	3.5	113	83.3	3.1	37	99.1	3.5	114	84.5	3.2	23	98.5	3.6
ՀՄ և ՀԸ	198	77.0	3.6	144	69.0	3.6	57	87.4	3.1	25	100	3.0	48	98.6	3.2	2	100	3.0
Տնտեսագիտակ.	888	62.4	3.5	843	72.1	3.6	284	89.4	3.2	94	100	3.1	231	90.9	3.3	77	100	3.1
Ազրոբիզնես և շուկայաբանութ.	635	64.9	3.3	579	57.0	3.4	220	81.2	2.7	119	98.3	3.0	288	63.5	3.4	211	98.1	3.5
ՀԱԱԳ	2623	67.4	3.5	2235	68.5	3.6	868	86.2	3.0	363	99.5	3.1	806	83.9	3.2	360	98.5	3.2

Այս ցուցանիշները հանրապետության բարձրագույն կրթական այլ ուսումնական հաստատությունների համեմատությամբ բավականին բարձր են: Այդուհանդերձ, բացակայությունների մոտ 8%-8,5%-ը դեռևս անհանգստացնող խնդիր է և համալսարանի աշխատակազմը դեռ շատ անելիքներ ունի, որպեսզի յուրաքանչյուր ուսանող լիարժեք ընկալի յուրաքանչյուր ժամ բացակայության բացասական հետևանքները:

2012-2013 ուս.տարվա, առաջին կիսամյակում ուսանողների հաճախումների բարձր ցուցանիշ է արձանագրվել պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում՝ 94,5% (դեկան՝ Ա.Աղաբաբյան), իսկ մյուս ֆակուլտետներում գրանցվել են հետևյալ արդյունքները.

- Անասն.բժշկ. և անասնաբուծ.՝ 93% (դեկան՝ Ա.Վարդանյան)
- ԳՄ և ԱՏ՝ 92,4% (դեկան Ն.Բազիկյան)
- ՄՁ և ՅԸ՝ 92,3% (դեկան՝ Պ.Էֆենդյան)
- Ագրոնոմիական՝ 91,6% (դեկան՝ Գ.Սանթրոսյան)
- Տնտեսագիտական՝ 90,8% (դեկան՝ Է.Ղազարյան)
- Ագրոբիզնեսի և շուկայաբանության՝ 89,2% (դեկան՝ Յ.Զավադյան)

1-ին կիսամյակում համալսարանում ուսանողների հաճախումների միջին ցուցանիշը կազմել է 91,3%, իսկ 2-րդ կիսամյակում՝ 91,6%:

1.1.3. Պետական քննությունների և դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանության արդյունքները

Հաշվետու ուսումնական տարին համալսարանի բակալավրի կրթական ծրագրի ուսուցման երկու ժամկետներով բուհ-ն ավարտելու վերջին տարին էր (4 տարի 3 ամիս և 4 տարի 7 ամիս տևողությամբ): Սկսած 2013-2014 ուս. տարվանից՝ առկա ուսուցման համակարգի բոլոր մասնագիտությունների գծով պետական քննությունները կկազմակերպվեն միայն գարնանային կիսամյակում: Տնտեսագիտական բոլոր մասնագիտությունների, ագրոնոմիական և մի շարք այլ (7) մասնագիտությունների գծով շրջանավարտների քննությունները կայացել են 2012 թ. աշնանը:

Մինչև պետական քննությունների սկիզբը առկա ուսուցման համակարգի ավարտական կուրսի ուսանողների թիվը եղել է 871, որից 851-ին թույլատրվել է մասնակցել պետական համալիր քննությունների և դիպլոմայի նախագծերի (աշխատանքների) պաշտպանությանը: Շրջանավարտներից 821-ը (առանց նախորդ տարիների շրջանավարտների) պետական քննությունները և դիպլոմային աշխատանքները

դրական են հանձնել 94,7%, 14 ուսանող (քննության թույլատրվածների 1,6%-ը) ստացել է անբավարար, իսկ 16-ը (1,88%) անհարգելի պատճառով չի մասնակցել քննություններին:

Պետական քննական հանձնաժողովների որոշմամբ 69 ուսանող ստացել է գերազանցության դիպլոմ (8,11%):

Պետական քննությունները միայն գերազանց գնահատականներով են հանձնել 263-ը (32%), գերազանց և լավ գնահատականներով՝ 238-ը (29%), միայն բավարար գնահատականներով՝ 90-ը (11%): Դիպլոմային նախագիծ (աշխատանք) պաշտպանել է 514 ուսանող, որոնցից 243-ը կամ 47,3%-ը ստացել է գերազանց գնահատական, 165-ը՝ (32,1%) լավ, իսկ 1 ուսանող՝ (0,2%) անբավարար: Այսպիսով՝ ցերեկային ուսուցման համակարգում 2012-2013 ուս.տարում համալսարանն ավարտել է 831 ուսանող:

1.1.4. Ուսանողների անվճար-վճարովի համակարգում շրջափոխման արդյունքները

2012-2013 ուս.տարվա շրջափոխման արդյունքները վկայում են, որ ըստ կուրսերի՝ բոլոր ֆակուլտետներում շրջափոխումների տեսակարար կշիռը տարբեր է: Համալսարանի 1-ին կուրսերում վճարովի համակարգից անվճար են տեղափոխվել ուսանողների 48,1%-ը, 2-րդ կուրսերից՝ 58,5%-ը, 3-րդ կուրսերից՝ 14,6%-ը, 4-րդ կուրսերից՝ 14,1%: Համալսարանում միջին մակարդակով այդ ցուցանիշը կազմել է 25,1% (աղյուսակ):

1.1.5. Ուսումնամեթոդական գրականության և հրատարակման արդյունքները

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռազմավարական գործառնություններից է մայրենի լեզվով ուսումնամեթոդական գրականության ստեղծումը և ուսանողության պահանջների բավարարումը: Սակայն դա չի նշանակում, որ նվազում է օտար լեզվուներով գրականությունից օգտվելը կամ ձեռքբերումը: Ընդհակառակը, համալսարանը ամեն տարի գրեթե բոլոր մասնագիտությունների գծով ձեռք է բերում մասնագիտական ամսագրեր, դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ: Այս առումով ֆինանսական խնայողություն չի լինում:

**Ուսանողների շրջափոխման արդյունքները
2012-2013 ուս. տարվա առաջադիմության տվյալներով**

Աղյուսակ 3

N	Ֆակուլտետը	1-ին կուրսից 2-րդ կուրս			2-րդ կուրսից 3-րդ կուրս			3-րդ կուրսից 4-րդ կուրս			4-րդ կուրսից 5-րդ կուրս			Ընդամենը			Վճ-ից անվճ. տեղափոխված ուս. - % Գ
		Անվճար տեղերի քանակը	Նախկինում եղել են անվճ.	Նախկինում եղել են վճար.	Անվճար տեղերի քանակը	Նախկինում եղել են անվճ.	Նախկինում եղել են վճար.	Անվճար տեղերի քանակը	Նախկինում եղել են անվճ.	Նախկինում եղել են վճար.	Անվճար տեղերի քանակը	Նախկինում եղել են անվճ.	Նախկինում եղել են վճար.	Անվճար տեղերի քանակը	Նախկինում եղել են անվճ.	Նախկինում եղել են վճար.	
1	Ագրոնոմիական	14	4	10	4	3	1	9	7	2	28	23	5	55	37	18	32.7
2	Տնտեսագիտական	10	8	2	8	4	4	12	11	1	40	33	7	70	56	14	20
3	Ագրոբիզն. և շուկայաբան	13	9	4	9	0	9	15	10	5	29	21	8	66	40	26	39.4
4	Պարենամթերք. տեխն.	18	6	12	2	2	0	19	19	0	44	41	3	83	68	15	18.1
5	Անասնաբուծ. բժշկ. և Անասնաբուծ.	7	4	3	7	6	1	10	9	1	27	25	2	51	44	7	13.7
6	Գյուղ. մեք. և ԱՏ	10	6	4	3	2	1	9	7	2	27	25	2	49	40	9	18.4
7	Հիդրոմեյ. Հողաշ. և հող. կաղ.	7	4	3	8	0	8	8	7	1	17	14	3	40	25	15	37.5
	Ընդամենը ՀԱԱՀ	79	41	38	41	17	24	82	70	12	212	182	30	414	310	104	25.1

2012-2013 ուս. տարում համալսարանը հրատարակել է լաբորատոր և կուրսային աշխատանքների (նախագծերի) 50 անուն մեթոդական ցուցումներ՝ 76.9 տպագրական մամուլ ծավալով, աշխատանքային տետրեր և ուսումնաարտադրական պրակտիկաների 10 անուն ծրագրեր՝ 23.9 տպագրական մամուլ ծավալով, գիտական ժողովածուներ և տեղեկագրեր՝ 80 տպագրական մամուլ ծավալով, ուսումնական և գործավարական այլ ձևաթղթեր, պատճենահանումներ՝ 1.6 մլն.թերթ, ընդհանուր առմամբ 181 տպագրական մամուլ: Բացի այդ՝ տպագրվել՝ 202.85 տպագրական մամուլ ծավալով 14 անուն դասագիրք և ուսումնական ձեռնարկներ, այդ թվում՝ ՀԱԱՀ-ի և Ստեփանակերտի մասնաճյուղի դասախոսների համատեղ 2 ձեռնարկ:

1.2. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ագրոպարենային համակարգի մասնագետների պատրաստման գործընթացում առկա ուսուցմանը զուգահեռ, շատ կարևոր է հեռակա ուսուցման կազմակերպումն ու իրականացումը, ինչը գյուղատնտեսության տարբեր բնագավառներում ընդգրկված երիտասարդությանը հնարավորություն է ընձեռում արտադրությունից չկտրվելով ստանալ բարձրագույն կրթություն: Հայաստանի գյուղատնտեսության զարգացման միտումներն ուղղված են ինտենսիվ ագրարային տեխնոլոգիաների և երկրագործության վարման արդյունավետ համակարգերի ներդրմանը, գյուղատնտեսական մթերքի արտադրության ծավալների ավելացմանը և ինքնարժեքի նվազեցմանը, շրջակա միջավայրի, կենսական ռեսուրսների անվտանգությանը, գյուղատնտեսական արտադրության կազմակերպմանը և կառավարմանը: Ուստի ագրոպարենային ոլորտի հիմնախնդիրները կապված են կրթության և գիտության բարեփոխումների հետ:

2012-2013 ուսումնական տարվանից ուսումնական գործընթացի բարեփոխումների և կատարելագործման նպատակով հեռակա ուսուցման համակարգում ուսուցումը փորձնական կերպով կազմակերպվեց կիսամյակներով, որն էապես տարբերվում է ուսուցման գործընթացի կազմակերպման նախկին՝ տարեկան ձևից: Կազմվել է ուսումնական պլանի հավելված՝ ըստ հաստատված օրինակելի ուսումնական պլանի, պահպանելով այն պահանջը, որ յուրաքանչյուր ուսումնական տարում լսարանային ուսումնական պարապմունքների ծավալը չպետք է պակաս

լինի 160 ժամից: Նկատի ունենալով ուսումնական գործընթացի կազմակերպման կիսամյակային տարբերակի փորձը և հաշվի առնելով կիսամյակային ուսուցման հնարավոր դժվարությունները և այն հանգամանքը, որ ուսանողները հիմնականում շրջաններից են, որոշվեց ուսանողների գիտելիքների գնահատման և ատեստավորման գործընթացը կազմակերպել կիսամյակային և տարեկան կտրվածքների համատեղումով:

2013թ. ՅԱԿՅ-ի հեռակա ուսուցման ընդունելության արդյունքներով 1-ին կուրս ընդունվեցին 635 ուսանող: Տնտեսագիտական մասնագիտությունների գծով 1-ին կուրս ընդունված ուսանողների համար փորձնական կարգով ներդրվեց ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգը: Կիսամյակի առաջին իսկ օրվանից բոլոր ամբիոնների դասախոսների կողմից ուսանողներին ներկայացվել են յուրաքանչյուր առարկային ամրագրված կրեդիտների քանակը, գնահատման յուրաքանչյուր գործոնի արժեքը և դրա տեսակարար կշիռը ընդհանուր կրեդիտների մեջ:

Հանրապետության տարբեր քոլեջներից, բարձր առաջադիմություն ցուցաբերած 72 շրջանավարտներ ընդունվեցին համալսարանի հեռակա ուսուցման դեպարտամենտի համապատասխան կուրսեր:

Հեռակա ուսուցման բակալավրային կրթական աստիճանում 2013թ. հունվարի 1-ի դրությամբ ուսանողների թվաքանակը 5468 էր, որից գործող` 4754: 2014թ. հունվարի 1-ի դրությամբ հեռակա ուսուցման ուսանողների թվաքանակը 5179 է (աղ.4), հաշվետու տարում շրջանավարտների թվաքանակը 751 է, ընդունելությունը 635 է, 411 ուսանողներին ձևակերպվել է ակադեմիական արձակուրդ գին. ծառայության կապակցությամբ, 14 ուսանողներին ձևակերպվել է ակադեմիական արձակուրդ առողջական վիճակի պատճառով:

Տարվա ընթացքում հեռակա ուսուցման համակարգից հեռացվել է 699 ուսանող:

Այսպիսով 2014թ. հունվարի 1-ի դրությամբ հեռակա ուսուցման համակարգում գործող ուսանողների թվաքանակը 4754 է: Գերազանց և լավ գնահատականներով սովորում են 112 ուսանողներ, 115 ուսանողներ օգտվել են վարձավճարի զեղչի արտոնությունից, 68 ուսանողի վարձավճարը փոխհատուցվում է պետական նպաստի ձևով, օրենքով սահմանված կարգով:

ՏՎՅԱԼՆԵՐ

ՀԱԱՀ-ի հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների թվաքանակի և շարժի վերաբերյալ

Աղյուսակ 4

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ՀԱԱՀ
Ուսանողների թիվը 01.01.2013թ. դրությամբ	5468
Ընդունելության արդյունքներով 1-ին կուրս ընդունվածներ	635
Փոխադրվել են մասնաճյուղից հեռակա ուսուցման դեպարտամենտ	0
Փոխադրվել են այլ բուհերից, քոլեջից	74
Փոխադրվել են ՀԱԱՀ-ի ներսում՝ ցերեկային ուսուցումից հեռակա ուսուցում	236
Վերականգնվել են նախկին ուսանողներ	146
Փոխադրվել են այլ բուհեր,	1
Փոխադրվել են մասնաճյուղեր հեռակա ուսուցման դեպարտամենտից	7
Փոխադրվել են ՀԱԱՀ-ի ներսում՝ հեռակա ուսուցումից ցերեկային ուսուցում	11
Շրջանավարտներ ա/տույն տարվա	662
Շրջանավարտներ ք/նախորդ տարվա	89
Հեռացվել են 2013թ. -ի ընթացքում	699
Գործող ուսանողների թիվը 01.01.2014թ. դրությամբ	4754
Ուսանողների թիվը 01.01.2014թ. դրությամբ	5179
Գտնվում են ակադեմիական արձակուրդում, զին. ծառ. կապակցությամբ	411
Գտնվում են ակադեմիական արձակուրդում, առողջութ. վիճակի պատճ.	14
Օգտվել են վարձավճարի գեղչից	115
Գերազանց և լավ գնահատականներով սովորում են	112
Ազատվել են վարձավճարից օրենսդրության սահմանված կարգով	68

Հաշվի առնելով հեռակա ուսուցման առանձնահատկությունները մասնավորապես ուսանող-դասախոս շփման սահմանափակ հնարավորությունը, դեպարտամենտի և ամբիոնների կողմից անհրաժեշտ է ստեղծել հնարավոր բոլոր պայմանները՝ ուսանողների ինքնուրույն և անհատական աշխատանքների ծավալների մեծացման համար: Հեռակա ուսուցման դեպարտամենտի և ամբիոնների հրատապ խնդիրներից մեկն է հանդիսանում ուսանողների առաջադիմության բարձրացումը: Այդ նպատակին հասնելու համար դեպարտամենտի մեթոդական և գիտական խորհուրդներում պարբերաբար քննարկվում են ուսումնամեթոդական մայրենի լեզվով գրականությամբ, դասախոսությունների տեքստերով և քննական առարկաների հարցաշարերով ամբիոնների ապահովվածության հարցերը:

Հեռակա ուսուցման դեպարտամենտի կողմից ամբիոններում մշտապես ստուգվում են անհրաժեշտ մեթոդական աշխատանքների առկայությունը և հարկ եղած դեպքում ամբիոնի վարիչներին հանձնարարվում է առաջատար դասախոսների

ուժերով թարմացնել կամ մշակել և հրատարակման ներկայացնել նոր մեթոդական աշխատանքներ, որոնք կօգնեն ուսանողներին ժամանակին և անթերի կատարելու իրենց ստուգողական, կուրսային և դիպլոմային աշխատանքները:

2013թ. դեպարտամենտի մեթոդական խորհուրդը քննարկել և ՀԱԱՀ-ի մեթոդական խորհրդին է ներկայացրել 1 ձեռնարկ և 59 մեթոդական ցուցումներ: Համալսարանի գրեթե բոլոր ամբիոններում հեռակա ուսուցման ուսանողների ինքնուրույն աշխատանքների կատարման համար մեթոդական ցուցումները առկա են, սակայն 10 ամբիոններում («Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա», «Ֆինանսներ և վարկ», «Ագրոբիզնեսի կառավարում», «Ապրանքագիտության և մարքեթինգ», «Ագրարային քաղաքականության և խորհրդատվության», «Տնտեսագիտության տեսության», «Գյուղատնտեսության էլեկտրիֆիկացման», «Անտառագիտության», «Գյուղատնտեսական մեքենաշինության տեխնոլոգիաների և նորոգման», «Հողաշինարարության և հողային կադաստր») 24 առարկաների գծով անհրաժեշտություն կա առաջատար դասախոսների ուժերով մշակել և հրատարակման ներկայացնել մեթոդական ցուցումներ:

Դեպարտամենտը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում աշխատանքային, ուսումնական և կատարողական կարգապահության հարցը: Դեպարտամենտի առաջնային խնդիրներից մեկը հանդիսանում է ուսանողների դասընթացների հաճախումների նկատմամբ և դասընթացների լիարժեք կատարման հսկողությունը:

Ուսանողների 3 շաբաթ տևողությամբ դասերի հաճախումների սկզբնական ամփոփումը կատարվում է առաջին շաբաթվա ընթացքում և բացակայող ուսանողներին տեղեկացնելով շտապ հրավիրում ենք համալսարան: Այս կարգի սահմանումը թույլ է տալիս կրճատել բացակայող ուսանողների թվաքանակը: Անհրաժեշտ է բարձրացնել պրոֆեսորա-դասախոսական կազմի պատասխանատվությունը ուսումնական պարապմունքների անցկացման որակի, ինչպես նաև ուսանողներին տրվող նյութերի մատուցման գործում:

Ուսանողների ստուգողական և կուրսային աշխատանքների ընդունման, ստուգարքների հանձնման և ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացը արդյունավետ կազմակերպելու ու իրականացնելու նպատակով, ինչպես հակակոռուպցիոն գործընթացների իրականացման շրջանակներում, 2011թ., 2012թ. և 2013թ. այդ գործընթացները իրականացվում են կենտրոնացված կարգով, հատուկ

առանձնացված լսարաններում՝ ռեկտորատի և հեռակա ուսուցման դեպարտամենտի ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի մասնակցությամբ և հսկողությամբ: Այս միջոցառումների անցկացման արդյունքերի վերլուծությունը ցույց տվեց, որ այն գործում է բավականին արդյունավետ միջոցառումների արդյունքում ավելի մեծ թվաքանակով ուսանողներ հաջողությամբ հաղթահարեցին ուսումնական ծրագիրը, հետևաբար այս գործընթացները շարունակական բնույթ պետք է կրեն:

Մասնագետների պատրաստման համար շատ կարևոր է ուսուցում-արտադրության կապը, որն այսօր լիարժեք չենք օգտագործում: Լուրջ ուշադրություն պետք է դարձնել արտադրական պրակտիկաների կազմակերպման և իրականացման գործընթացներին: Պետք է արդյունավետ օգտագործել այդ նպատակների համար ամբիոններում տրամադրված պրակտիկաների ժամաքանակը: Ազրարային համալսարանը արտադրական պրակտիկա անցկանցնելու համար համապատասխան կազմակերպությունների հետ ունի մի շարք պայմանագրեր: Կրթության կազմակերպման, կրթության որակի բարելավման, նյութատեխնիկական բազայի համալրման պրակտիկաների արդյունավետ կազմակերպման հարցերում համալսարանը հասել է որոշ հաջողությունների, սակայն հեռակա ուսուցման համակարգում կրթության որակի շարունակական բարելավման տեսական և գործնական հարուստ գիտելիքներով զինված մասնագետների թողարկման գործում դեռևս շատ անելիքներ կան: 2012-2013 ուսումնական տարվա տարբեր մասնագիտությունների ավարտական 5-րդ կուրսերի 792 ուսանողներից տեսական կուրսն ավարտած 694-ը թույլատրվել են մասնակցել ամփոփիչ ատեստավորման կամ ավարտական աշխատանքների պաշտպանությանը:

Բոլոր մասնագիտությունների տեսական կուրսն ավարտած ուսանողների պետական քննությունների և դիպլոմային աշխատանքների (նախագծերի) պաշտպանության արդյունքները հետևյալն են.

1-ին պետական քննությանը մասնակցել են՝ 694 ուսանող, որից 8-ը (1.15%) չեն ներկայացել քննություններին, 17 (2.45%) ուսանողներ ստացել են «անբավարար» գնահատական, 403-ը (58.07%) «բավարար», իսկ 266-ը (38.33%) «լավ» և «գերազանց» գնահատականներ:

2-րդ պետական քննությանը մասնակցել են՝ 282 ուսանող, որից 6-ը (2.13%) չեն ներկայացել քննություններին, 1 (0.35%) ուսանող ստացել է «անբավարար»

գնահատական, 180-ը (63.83%) գնահատվել են «բավարար», իսկ 95-ը (33.69%) «լավ» և «գերազանց» գնահատականներ:

Դիպլոմային աշխատանքների (նախագծերի) պաշտպանության մասնակցել են 415 ուսանող, որից 14-ը (3.3%) չեն ներկայացել, 194-ը (46.9%) ստացել են «բավարար» գնահատական, 207-ը (49.9%) ստացել են «լավ» և «գերազանց» գնահատականներ:

Քննությունների և դիպլոմային աշխատանքների (նախագծերի) պաշտպանության արդյունքներում ՊԶՀ-ի նախագահների կողմից կատարվել են մի շարք արժեքավոր առաջարկություններ և դիտողություններ, որոնք քննարկվել են ՀԱԱՀ-ի հեռակա ուսուցման դեպարտամենտի գիտական խոհրդում և մշակվել են համապատասխան միջոցառումներ:

1.3. ՈՒՍՈՒՄՆԱԿՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ և ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Բարձրագույն կրթություն իրականացնելիս, ուսանողների տեսական գիտելիքների ձեռքբերմանը զուգընթաց, շատ կարևորվում է նաև նրանց գործնական և կիրառական հմտությունների և կարողությունների ձևավորումն ու զարգացումը:

Այս տեսակետից, կրթական բարեփոխումների պահանջներին համահունչ, համալսարանի ուսումնական պլաններում, ուսանողի ուսումնական ծանրաբեռնվածության մեջ, ծանրության կենտրոնը տեսական ուսուցումից տեղափոխվում է դեպի ուսանողների պրակտիկ կարողությունների զարգացումը: Ներկայումս մենք պետք է ուսումնասիրենք և արագ արձագանքենք աշխատաշուկայում գործատուների պահանջներին, որոնք համահունչ են ապագա մասնագետների (առավելապես)՝ գործնական գիտելիքների, ունակությունների և հմտությունների զարգացմանը: Ուսումնասարտադրական պրակտիկաները և գործնական պարապմունքները հենց միտված են այդ նպատակներին: Ուսանողների ուսումնական, արտադրական և նախադիպլոմային պրակտիկաները կազմակերպելու և իրականացնելու նպատակով համալսարանը, բացի մեր երկու ուսումնափորձնական տնտեսություններից, համագործակցում է նաև 200-ից ավելի ֆերմերային տնտեսությունների, արտադրական ձեռնարկությունների, գյուղացիական տնտեսությունների, մարզային և տարածքային անասնաբուժական կայանների, գիտական կենտրոնների, բանկերի, պետական և

մասնավոր միջազգային կազմակերպությունների և այլ առաջավոր տնտեսությունների հետ:

Ազգային ագրարային համալսարանում ուսումնաարտադրական պրակտիկաները հիմնականում կազմակերպվում են տարբեր ամիսներին, իսկ մի շարք մասնագիտությունների գծով՝ գարնանային և ամառային ամիսներին, հաշվի առնելով արտադրական գործընթացների սեզոնային առանձնահատկությունները:

Պրակտիկաների կազմակերպման լարվածությունը փոքրացնելու, ուսումնական խմբերին տրանսպորտով ապահովելու համար 2011-2012 ուս. տարվա 2-րդ կիսամյակում կատարվեցին փոփոխություններ. սեզոնայնության հետ կապ չունեցող առարկաների ուսումնական պրակտիկաները ապրիլ-հունիս ամիսներից տեղափոխվեցին հունվար-մարտ ամիսներ, ինչը որոշակիորեն բարելավեց պրակտիկաների անցկացման գործընթացը, և երկրորդ հերթի պրակտիկաների թվաքանակը կտրուկ նվազեց:

Ինչպես 2012թ., այնպես էլ 2013թ. անցած ժամանակամիջոցում կնքվել են նոր պայմանագրեր և վերակնքվել են ժամկետանց պայմանագրերը:

Ֆակուլտետների բոլոր մասնագիտությունները, գրեթե ապահովված են ուսումնաարտադրական պրակտիկաների բազաներով:

Չեռական ուսուցման դեպարտամենտը, մագիստրատուրան և պետական քոլեջը համապատասխան ամբիոնների միջոցով իրենց ուսումնաարտադրական պրակտիկաները անցկացնում են համագործակցող բոլոր վերոհիշյալ բազաներում:

Համալսարանը նորացնելով ու զարգացնելով իր երկու ուսումնափորձմական տնտեսությունների ու գիտական մասնաճյուղերի արտադրական բազան կարող է կազմակերպել ուսումնական և արտադրական պրակտիկաների ողջ ծավալը:

Սահմանված ժամանակակազույցի համաձայն արտադրական պրակտիկայի ղեկավարները գործուղվում են համապատասխան վայրեր, որպեսզի տվյալ մարզի ուսանողության հետ ոչ պակաս քան երկու անգամ, հանդիպեն, օգնեն նրանց, քննարկեն պրակտիկայի ժամանակ ծագած բազմաթիվ հարցերը և տան համապատասխան լուծումներ:

Նախատեսում ենք, որ ուսանողության արտադրական պրակտիկայի և դիպլոմային աշխատանքների պաշտպանությունը կազմակերպենք այն բազաներում, որտեղ ուսանողները անցել են պրակտիկա, որոնց գծով պաշտպանում են

աշխատանքները, իսկ առաջարկությունները տրամադրել համապատասխան կազմակերպությունների ղեկավարներին, որը կլինի համագործակցության նոր քայլ:

Կարծում եմ, որ դրանց արդյունքում կստեղծվեն տեսական և պրակտիկ գիտելիքների համադրման համար նպաստավոր պայմաններ, ինչն էլ կխթանի բարձր որակավորմամբ կադրերի պատրաստմանը և նրանց գործնական գիտելիքների բարելավմանը:

Ընթացիկ ուսումնական տարվանից կիրառվում է ուսուցման քառափուլ մեթոդի հստակեցված մոդելը, ինչը, ենթադրում է գործնական կարողությունների, հմտությունների և իրազեկությունների ձևավորում իրար հաջորդող չորս փուլերով՝ բացատրություն, նմանակում, վարժություն, ապահովելով յուրացման օղակների՝ ընկալման (ըմբռնման) իմաստավորման, ամրապնդման և վերարտադրման առկայությունը:

Քառափուլ մեթոդի առանձնահատկություններն են.

- տեսական և գործնական գիտելիքները հաղորդվում են պարապմունքների սկզբում ուսումնառողների ակտիվ գործունեության ընթացքում,

- ուսումնառողների ինքնուրույն գործունեությունների սահմանափակումը հանձնարարությունների միջոցով,

- ուսումնառողները ուղղորդվում են անհատական ուսումնական մասնագիտական գործունեության՝ առանց մտածողության ավելորդ լարման:

Չամալսարանը բազմիցս կազմակերպում է հանդիպումներ արտադրական պրակտիկաների արտադրական ձեռնարկությունների ղեկավարների, գլխավոր տեխնոլոգների, մասնագետների հետ: Նրանցից շատերը խրախուսվել են համալսարանի կողմից, իսկ մի քանիսը ընդգրկված են գիտական խորհրդում:

Չնայած այս բոլորին, այս հարցում դեռևս առկա են բազմաթիվ դժվարություններ: Մասնավորապես արդեն ժամանակն է հարց բարձրացնել վերադաս մարմինների առջև (կառավարություն, նախարարություններ) որպեսզի պրակտիկայի օբյեկտների ղեկավարները խոչընդոտներ չառաջացնեն համագործակցության, ուսանողների ընդունման, պրակտիկայի կազմակերպման և տվյալների տրամադրման գործում:

1.4 ԱԳՐՈՒԻՉՆԵՍԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏՈՒՄ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Գործունեության տասներեքերորդ տարում ԱՌԿ-ը շարունակեց նոր հաջողություններ արձանագրել, արևմտյան չափանիշների վրա հիմնված ուսումնական պլանի իրականացման, ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկայի կազմակերպման, դասախոսների և ուսանողների մասնակցությամբ գյուղատնտեսության և ագրոբիզնեսի ոլորտի հետազոտական ծրագրերի իրականացման, գյուղատնտեսական բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումների ուղղությամբ կատարվող աշխատանքների, ԱՌԿ-ի՝ որպես տարածաշրջանային և միջազգային կրթահետազոտական կենտրոնի միջազգային վարկի ու հեղինակության բարձրացման ասպարեզներում:

1.4.1. Ուսանողների շարժը

2012-2013 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակ են տեղափոխվել 60 ուսանողներ: Չորրորդ կուրսի ուսանողների թիվը կազմել է 30, որոնցից 7-ը՝ Վրաստանի Հանրապետությունից: Ուսանողներից 2-ը սովորել են անվճար համակարգում: Երրորդ կուրսի ուսանողների թիվը կազմել է 30, որոնցից 5-ը՝ ՎՅ-ից: Ուսանողներից 2-ը սովորել են անվճար համակարգում: Գարնանային քննաշրջանում բոլոր ուսանողները ստացել են դրական գնահատականներ: Տվյալ կիսամյակում անհարգելի բացակայություններ չեն գրանցվել: Ուսանողների հեռացումներ չեն եղել:

2013-2014 ուսումնական տարվա առաջին կիսամյակ են տեղափոխվել չորրորդ կուրսի 30 ուսանողները, որոնցից 5-ը՝ ՎՅ-ից: Չորրորդ կուրսի 30 ուսանողներից 3-ը տեղափոխվել են ուսումը շարունակելու ՀԱԱՀ ԱՇ ֆակուլտետի ԱՇ մասնագիտության 4-րդ կուրսում: Նույն կուրսի ուսանողներ Ալլա Վարդանյանը և Գայանե Պետրոսյանը «Էրասմուս Մունդուս Գործողություն 2» ծրագրի շրջանակում 10 ամիս (16.09.2013-12-07-2014), իսկ Վահե Ավետյանն ու Գևորգ Բաբայանը 6 ամիս (16.09.2013-16.03.2014) ժամկետով գործուղվել են Պորտուգալիայի Մինիո համալսարան՝ ուսումը շարունակելու նպատակով: 2013թ. երրորդ կուրս են հրամանագրվել 17 ուսանողներ: Երրորդ և չորրորդ կուրսում անվճար համակարգում սովորող ուսանողներ չեն եղել: Աշնանային քննաշրջանում բոլոր ուսանողները ստացել են դրական գնահատականներ: Տվյալ կիսամյակում անհարգելի բացակայություններ չեն գրանցվել: Ուսանողների հեռացումներ չեն եղել:

1.4.2. Ավարտական կուրս

2013թ.-ի մայիսի 8-ին և 10-ին և մայիսի 22-23-ին չորրորդ կուրսի 23 ուսանողներ հանձնեցին երկու համալիր պետական քննություններ համապատասխանաբար «Ֆինանսների վերլուծություն», «Մարկետինգի վերլուծություն», «Ռազմավարական կառավարում» և «Միկրոտնտեսագիտություն», «Մակրոտնտեսագիտություն», «Համաշխարհային էկոնոմիկա», «Բնական ռեսուրսների էկոնոմիկա» առարկաներից:

Առաջին համալիր քննությանը մասնակցել են կուրսի 23 ուսանողներ, որոնց ստացած նիշերի 96 տոկոսը կազմել են «գերազանց» և «լավ» գնահատականները: Երկրորդ պետական համալիր քննությանը մասնակցել են կուրսի 23 ուսանողներ, որոնց ստացած նիշերի 87 տոկոսը կազմել են «գերազանց» և «լավ» գնահատականները:

Ագրոբիզնեսի դեպարտամենտի պետական քննական հանձնաժողովի 23.05.13թ. նիստի որոշման համաձայն, «Ագրոբիզնես և շուկայաբանություն» մասնագիտության 23 շրջանավարտներին շնորհվել է տնտեսագետ-շուկայագետի որակավորում: Պետական որակավորման հանձնաժողովի կողմից Արտակ Մելոյանին և Գայանե Սարգսյանին շնորհվել է գերազանցության դիպլոմ:

Ավարտական արարողությունը տեղի ունեցավ 2013 թվականի հունիսի 5-ին, որին ներկա էին ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Ռոբերտ Մակարյանը, ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար Միեր Ղազարյանը, ԱՄՆ դեսպան Ջոն Յեֆերնը, Տեխասի Էյ ընդ Էմ համալսարանի պրոֆեսոր Ջոն Նիքըլզը և պաշտոնատար այլ անձինք:

Ընդունելություն

2013թ. մայիսին դեպարտամենտում տեղի ունեցան 2013-2014 ուսումնական տարվա ընդունելության քննությունները: Առաջին փուլում դիմորդները հանձնեցին գրավոր թեստ տնտեսագիտությունից, մաթեմատիկայից և անգլերենից, իսկ երկրորդ փուլում՝ բանավոր հարցազրույց: Ընդունելության արդյունքներով 25 ուսանողներ ընտրվեցին ամառային նախապատրաստական դասընթացին հաճախելու համար: Ամառային դասընթացներն ընդգրկում են Գյուղատնտեսական էկոնոմիկայի հիմունքներ, Գործարար անգլերեն, Համակարգիչներ և ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառումը ագրոբիզնեսում, և Հռետորական արվեստ առարկաները: Դասընթացների ավարտին նշված չորս առարկաներից հանձնած

քննությունների արդյունքների հիման վրա 17 ուսանողներ շարունակում են ուսումը Ագրոբիզնեսի դեպարտամենտի երրորդ կուրսում:

1.4.2. Ուսումնաարտադրական պրակտիկա

2013թ. հունիսի 17-ից կազմակերպվել է երրորդ կուրսի ուսանողների հինգշաբաթյա ամառային ուսումնաարտադրական պրակտիկան: Պրակտիկան անցկացվել է Հայաստանի և Վրաստանի ագրոբիզնեսի 27 ձեռնարկություններում, բանկերում և միջազգային կազմակերպություններում:

Պրակտիկայի արդյունքները ամփոփվել են պրակտիկայի համաժողովի ժամանակ, որտեղ ուսանողները ներկայացրել են աշխատանքի ընթացքում ձեռք բերած փորձն ու գիտելիքները: Ուսանողների գիտելիքները գնահատվեցին նաև համապատասխան ձեռնարկություններում նշանակված պրակտիկայի ղեկավարների կողմից, որը որոշիչ դեր ունեցավ ուսանողի պրակտիկայի վերջնական գնահատականը նշանակելիս:

Ուսումնական գործուղումներ

Դեպարտամենտի երրորդ և չորրորդ կուրսի ուսանողները տարվա ընթացքում ուսումնական գործուղումների են գնացել Բարի Սամարացի ՍՊԸ, Արմենիա Վայն գինեգործարան, Պռոշյանի կոնյակի գործարան, Գոլդն Գրեյպ Արմաս գինեգործարան, Յունիֆիշ ձկնաբուծարան, Աշտարակ Կաթ, Ամստեր Ֆլաուեր հայ-հոլանդական ջորմոցային տնտեսություն, Արկոլադ շոկոլադի գործարան, Չիզլեր պանրագործարան, ինչպես նաև՝ Ագրոէկոլոգիա և շրջակա միջավայրի պաշտպանություն առարկայի գծով ավանդական այցելություն են կատարել Սևանա լիճ՝ լճի էկոհամակարգին ծանոթանալու նպատակով:

1.4.3. Սեմինարների կազմակերպում և դասավանդում

Հաշվետու տարվա ընթացքում դեպարտամենտում անցկացվեցին մի շարք սեմինարներ սննդի անվտանգության համակարգի կառավարման, օրգանական գյուղատնտեսության, գյուղատնտեսական ֆինանսների, ագրոբիզնեսի արժեքի շղթայի կառավարման թեմաների, ինչպես նաև բանկային ռիսկերի կառավարման և այլնի վերաբերյալ:

Հաշվետու տարում Ագրոբիզնեսի դեպարտամենտում դասավանդել են 6 օտարերկրացի դասախոսներ:

Մասնագիտական կողմնորոշում

2013թ.-ին մասնագիտական կողմնորոշման նպատակով դեպարտամենտ են այցելել Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքի ավագ դպրոցի (ապրիլի 5), Երևանի թիվ 2 ավագ դպրոցի (մայիսի 17), Գեղարքունիքի մարզի Ծաղկունք գյուղի Ագրարային բաց դպրոցի (հունիսի 11) աշակերտներ, ինչպես նաև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին՝ ՀԱԱՀ հենակետային վարժարանի երեք խումբ սովորողներ:

1.4.4. Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագիր (MAB)

2012-2013թ.-ի երկրորդ կիսամյակում Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագրում սովորել են ավարտական կուրսի 18 և առաջին կուրսի 17 ուսանողներ:

2013թ.-ի մայիսի 21-ին ավարտական կուրսի 18 ուսանողները պաշտպանեցին մագիստրոսական ավարտական աշխատանքները՝ ստանալով 8 գերազանց, 9 լավ և 1 բավարար գնահատականներ: Ավարտական արարողությունը տեղի ունեցավ 2013 թվականի հունիսի 5-ին: 18 շրջանավարտներին շնորհվեց տնտեսագիտության մագիստրոսի որակավորում՝ շնորհելով ՀԱԱՀ դիպլոմներ և Տեխասի A&M համալսարանի համապատասխան հավաստագրեր: Պետական որակավորման հանձնաժողովը Մարիամ Մելոյանին, Հայկուհի Ալեքսանյանին, Լենա Մամիկոնյանին և Ալվինա Կոստանյանին շնորհել է գերազանցության դիպլոմ: Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագիրը Ագրոբիզնեսի տնտեսագիտության ոլորտում անգլերենով դասավանդվող տարածաշրջանում միակ մագիստրոսական ծրագիրն է: Բոլոր շրջանավարտներն աշխատում են՝ զբաղեցնելով կարևոր պաշտոններ Ագրոբիզնեսի ձեռնարկություններում, բանկերում, հեռահա-դորդակցության ոլորտի ընկերություններում: Ոմանք էլ հիմնել են սեփական գործ:

2013-2014 ուսումնական տարում Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագիրը համալրվեց 20 ուսանողներով, որոնցից 13-ը այս տարվա շրջանավարտներ են, ընդ որում տասը սովորում են անվճար համակարգում, մեկը՝ դեպարտամենտի նախորդ տարիների, իսկ 6-ը՝ ՀԱԱՀ և այլ բուհերի շրջանավարտներ: Անվճար համակարգի 1-ին կուրսի ուսանող Գայանե Սարգսյանը «Էրասմուս Մունդուս» ծրագրի շրջանակում 10 ամիս (16.09.2013-16-07-2014) ժամկետով գործուղվել է Պորտուգալիայի Մինիո համալսարան, իսկ Արտակ Մելոյանը Բելգիայի Անթվերպեն համալսարան՝ ուսումը շարունակելու նպատակով: Ագրոբիզնեսի դեպարտամենտի այս և նախորդ

տարիների շրջանավարտները ընդունելության մրցույթին մասնակցել են ուսումնառության ժամանակ իրենց ցուցաբերած առաջադիմության միջին միավորի հիման վրա, վճարովի հիմունքներով: Մնացած դիմորդների համար դեպարտամենտում կազմակերպվել են երկամսյա դասընթացներ տնտեսագիտություն, մաթեմատիկա և անգլերեն լեզու առարկաներից, որի ավարտին նրանք մասնակցել են ընդունելության վճարովի տեղերի մրցույթին՝ հանձնելով ընդունելության քննություն (գրավոր տեստ անգլերեն լեզու, մաթեմատիկա և տնտեսագիտություն առարկաներից և բանավոր հարցազրույց): Այս տարվա ընդունելությանը օտարերկրյա քաղաքացիներ չեն դիմել:

Մասնակցություն կրթական ցուցահանդեսներին

2013թ.-ի ապրիլի 17-19-ը Ագրոբիզնեսի դեպարտամենտը մասնակցել է «Ուսուցումը Հայաստանում» ցուցահանդեսին:

1.4.5. Մասնակցությունը միջազգային գիտաժողովներին

2013թ. հունիսի 24-ից մինչև հուլիսի 3-ը Ագրոբիզնեսի դեպարտամենտի պետ Վարդան Ուռուտյանը մասնակցեց Մոնտենեգրոյի Բուդվա քաղաքում կայացած ACRIMBA - AVA 3-րդ միջազգային կոնգրեսին:

2013թ. սեպտեմբերի 19-30-ը Վարդան Ուռուտյանը մասնակցեց ԱՄՆ Ֆեյրֆաքս քաղաքում կազմակերպված Չարգացող երկրների գյուղատնտեսական կրթության և վերապատրաստումների կարողությունների հզորացում միջազգային կոնֆերանսին:

2013թ. նոյեմբերի 6-7-ը Վարդան Ուռուտյանը մասնակցեց Բրյուսել քաղաքում կայացած Հեռանկարային տեխնոլոգիական ուսումնասիրությունների եվրոպական ինստիտուտի կողմից կազմակերպվող գյուղատնտեսության մոդելավորմանն ուղղված ACMEMOD աշխատաժողովին և հանդես եկավ զեկուցմամբ:

2013թ. նոյեմբերի 17-20-ը Վարդան Ուռուտյանը մասնակցեց Մոսկվայի պետական համալսարանի Պարենային ապահովության եվրասիական կենտրոնի կողմից կազմակերպվող միջազգային գիտաժողովին և հանդես եկավ զեկուցմամբ:

2013թ. դեկտեմբերի 10-11-ը Վարդան Ուռուտյանը գործուղվեց Հռոմ՝ Պարենային թափոնների և կորուստների նվազեցման գլոբալ նախաձեռնության

կոնֆերանսին մասնակցելու և ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ղեկավարների հետ հանդիպելու նպատակով:

Պաշտոնական այցելություններ

2013թ. ապրիլին ԱՄՆ չորս համալսարանների կոնսորցիումի կողմից իրականացվող ԻննովեՅԹ («Նորարարություն հանուն գյուղատնտեսական կրթության և վերապատրաստման») ծրագրի շրջանակում ՀԱԱՀ և Ագրոբիզնեսի դեպարտամենտ այցելեցին ԱՄՆ ՄՉԳ գիտական քաղաքականության գծով ավագ խորհրդական Կլարա Քոհենը, Ծրագրի ղեկավար Թոմ Համեթը, Քիդ Մորը (երկուսն էլ Վիրջինիա Թեք համալսարանից), Նիկի Քերնագհանը՝ Ֆլորիդայի համալսարանից, Նթամ Բահարանյին՝ Թասքիգի համալսարանից և Թոմ Ջիլը՝ Փենսիլվանիայի նահանգային համալսարանից: Այցի նպատակն էր մի շարք երկրների շարքում՝ Հայաստանում զարգացնել գյուղատնտեսական կրթության և վերապատրաստման կարողությունները: Հայաստանում ԻննովեՅԹ-ի առաջնային գործընկերը Ագրոբիզնեսի դեպարտամենտն է:

2013թ. մայիսի 2-ին դեպարտամենտ այցելեցին ամերիկահայ բարերարներ Ջութիդ Սարյանը և Վիկտոր Չառուկյանը, ովքեր պարզևատրվեցին դեպարտամենտի պետի կողմից՝ նախորդ տարի դեպարտամենտի համար արևային մարտկոցների՝ Հայաստանում ամենամեծ համակարգի նվիրաբերման համար:

2013թ.-ի հունիսին պաշտոնական այցով հյուրընկալվել է Տեխասի A&M համալսարանի պրոֆեսոր Ջոն Նիքոլզը՝ Ագրոբիզնեսի դեպարտամենտի ավարտական արարողությանը մասնակցելու և դեպարտամենտի պրոֆեսորադասախոսական կազմի հետ խորհրդակցություններ անցկացնելու նպատակով:

2013թ. հուլիսի 22-ին 3-շաբաթյա համալսարան այցելեց Մեծ Բրիտանիայի Զարդիֆի Մետրոպոլիտան համալսարանի ծրագրերի ղեկավար և ավագ դասախոս Արտավազդ Քանեքանյանը, որը գնահատեց և առաջարկեց Պարենամթերքի տեխնոլոգիայի ֆակուլտետի ուսումնական պլանի բարեփոխումներ:

1.5. ՀԱԱՀ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՐԱ

2013թ. հունվարի 1-ի դրությամբ ՀԱԱՀ Մագիստրատուրայում 7 որակավորումների 37 մասնագիտություններում սովորել են 587 մագիստրանտներ, որոնցից 254-ը

հեռակա ուսուցմամբ, 333-ը ցերեկային ուսուցման մագիստրատուրայում, 45-ը գտնվում են տարկետման մեջ: Պետ.պատվերով ուսուցման համակարգում մագիստրանտների թիվը կազմել է 165, իսկ վճարովի համակարգում՝ 422:

Մագիստրատուրայում ուսուցումն ունի երկկողմանի ուղղվածություն՝

1. Լսարանային դասաժամերի (դասախոսությունների, գործնական և լաբորատոր պարապմունքների) անցկացում:

2. Գիտական հետազոտություններ (մագիստրոսական ատենախոսության պատրաստում):

Մագիստրանտների լսարանային բեռնվածությունը շաբաթական չի գերազանցում 20 ժամը:

Մագիստրատուրայի բաժնի կողմից կատարվում է ուսումնական գործընթացի անընդհատության և հաճախումների համակարգված ստուգում:

ՀԱԱՀ Մագիստրատուրայում դասավանդում են 155 դասախոսներ, որոնցից 95-ը գիտությունների թեկնածու են, 37-ը՝ գիտությունների դոկտորներ:

Բոլոր մագիստրանտների գիտական ղեկավարները ունեն գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտ. աստիճան և դոցենտի կամ պրոֆեսորի կոչում:

2012-2013 ուս. տարվա ընթացքում ՀԱԱՀ Ռեկտորի հրամանով ստեղծված ատեստացիոն հանձնաժողովը յուրաքանչյուր ուս. տարվա ընթացքում 2 անգամ ատեստավորում է մագիստրանտների գիտական գործունեությունը:

2012-2013 ուս. տարվա արդյունքներով առկա բոլոր մագիստրանտները անցել են դրական ատեստավորում և թույլատրվել է նրանց շարունակելու գիտ. աշխատանքը և մասնակցելու քննաշրջաններին: Ըստ քննաշրջանների արդյունքների 1-ին և 2-րդ կուրսերում սովորող մագիստրանտների 85 %-ը ստացել են «գերազանց» գնահատականներ:

Մագիստրանտների ավարտական գործընթացը կազմակերպելու նպատակով ռեկտորի հրամանով ստեղծվել են Պետական Որակավորման Հանձնաժողովներ, որոնց ներկայությամբ սահմանված ժամանակացույցի համաձայն մագիստրանտները հրապարակայնորեն պաշտպանել են իրենց մագիստրոսական ատենախոսությունները:

2012-2013 ուս. տարում ՀՊԱՀ մագիստրատուրան ավարտել է 7 մասնագիտական որակավորումների 37 մասնագիտությունների 263 մագիստրոսներ, որոնցից 130-ը Պետական որակավորման հանձնաժողովի որոշմամբ ստացել են գերազանցության դիպլոմներ:

2012-2013 ուս. տարում ՀԱԱՀ Մագիստրատուրա ընդունվել են 359 մագիստրանտներ, որոնցից պետ.պատվեր համակարգում 114, իսկ 245-ը վճարովի ուսուցման համակարգում:

2012-2013 ուս. տարում հեռակա ուսուցմամբ ՀՊԱՀ Մագիստրատուրա ընդունվել են 121 մագիստրանտներ:

2010-2011 ուս. տարվանից ՀՊԱՀ Մագիստրատուրայում գործում է Ագրոբիզնես դեպարտամենտի «Ագրոբիզնես և շուկայաբանություն» մասնագիտությամբ անգլերեն լեզվով միջազգային մագիստրոսական ուսուցում, որտեղ ուսումնառությունը կազմակերպվում է ՀՊԱՀ-ի և Տեխասի A&M համալսարանների կողմից հաստատված ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով: 19 մագիստրանտներ սովորում են նշված ծրագրով:

Շրջանավարտների հետ Մագիստրատուրայի բաժնի մշտական կապը ցույց է տալիս, որ ՀՊԱՀ Մագիստրատուրայի շրջանավարտների գերակշռող մասը աշխատանքի են անցել գյուղատնտեսության և հումքի վերամշակման ոլորտի առաջատար ձեռնարկություններում, բանկային համակարգում, ինչպես նաև մրցութային կարգով աշխատանքի են անցել պետ. ծառայության համակարգ:

Միջազգային և միջբուհական փոխանակային ծրագրերով լավագույն մագիստրանտները իրենց ուսումը, կարճաժամկետ կամ երկարաժամկետ, շարունակել և շարունակում են Տեխասի, Ֆրեզնոյի, Վաշինգտոնի (ԱՄՆ) համալսարաններում, «Տեմպուս» ծրագրի շրջանակներում՝ Հոլանդիայի և Գերմանիայի համալսարաններում, Հունաստանում, Գերմանիայի Վայնշտեֆանի համալսարանում:

Ուսանողների փոխանակային ծրագրերով ՀՊԱՀ Մագիստրատուրան ավարտել են Սիրիայի Արաբական Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ, ինչպես նաև նախատեսվում է այլ օտարերկյա քաղաքացիների ուսուցման կազմակերպումը ՀՊԱՀ Մագիստրատուրայում:

2011-2012 ուս. տարվանից TEMPUS միջազգային կրթական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՀՊԱՀ Մագիստրատուրայում իրականացվում է ուսուցում

«Կիրառական կենսաբանություն» մագիստրոսական ծրագրով՝ «Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա», «Բնապահպանական կենսատեխնոլոգիա», «Սննդի կենսատեխնոլոգիա» և «Առողջապահական կենսատեխնոլոգիա» մասնագիտացումներով:

Մագիստրանտների պրակտիկ գործունեության կազմակերպումը հանդիսանում է ուսումնական պրոցեսի կարևորագույն բաղադրիչներից մեկը, որը իրականացվում է գիտա-արտադրական և գիտա-մանկավարժական պրակտիկաների ձևով՝ Հանրապետության առաջատար ֆերմերային տնտեսությունների, հումքի վերամշակող ձեռնարկությունների, բանկային և հարկային դաշտի կազմակերպությունների հետ սերտ համագործակցության արդյունքում, որն էլ նպաստում է ՀԱԱՀ մագիստրատուրայի շրջանավարտների հետագա աշխատանքային գործունեությունը կազմակերպելուն:

Մագիստրատուրայում ուսումնագիտական գործընթացի կազմակերպման համար ստեղծված է նյութատեխնիկական և ինֆորմացիոն նոր տեխնոլոգիաներով հագեցված պայմաններ, ակտիվորեն օգտագործվում են ՀՊԱՀ Համակարգչային կենտրոնները, Լեզուների կենտրոնը և Գրադարանային ֆոնդը: DAAD-ի կողմից 2010թ. աշնանը հաստատված ֆինանսական աջակցության շնորհիվ ՀՊԱՀ-ում կահավորվել են ժամանակակից տեխնիկական պահանջներին բավարարող 1 լսարան, իսկ TEMPUS-ի «Կիրառական կենսաբանություն» ծրագրի շրջանակներում կահավորվել է կենսատեխնոլոգիայի 1 լաբորատորիա: Գերմանական միջազգային համագործակցության (GTZ) կազմակերպության հետ համագործակցության ընթացքում ՀՊԱՀ գրադարանային ֆոնդը թարմացվել է ժամանակակից նոր գրականությամբ և նախատեսվում է ՀՊԱՀ Բալախովիտի ուսումնափորձական տնտեսությունում գործնական պարապունքների համար նախատեսված լսարանների կահավորում:

Հաշվետու տարում զեղչվել է 19 մագիստրանտների վարձավճարները:

2014թ. հունվարի 1-ի դրությամբ ՀԱԱՀ Մագիստրատուրայում 7 որակավորումների 37 մասնագիտություններում սովորում են 486 մագիստրանտներ, որոնցից 256-ը հեռակա ուսուցմամբ, 228-ը ցերեկային ուսուցման մագիստրատուրայում, 30-ը գտնվում են տարկետման մեջ: Պետ.պատվերով ուսուցման համակարգում մագիստրանտների թիվը կազմել է 154, իսկ վճարովի համակարգում՝ 332, (մանրամասն տվյալները բերված են աղյուսակ 5-ում)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱԳԻՍՏՐԱՆՏՆԵՐԻ ԹՎԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ (2014 թ. հունվարի 1-ի դրությամբ)
ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ**

Աղյուսակ 5

Մասնագիտություն	Գործող												Ընդամենը		
	պետ. պ.					վճարովի							պ.պ	վճ.	
	ընդ.	որիից կին	1-ին	որիից կին	2-րդ	որիից կին	ընդ.	որիից կին	1-ին	որիից կին	2-րդ	որիից կին			
1	Ագրոնոմիա				3	1					1	1	3	1	
2	Բույսերի պաշտպանություն				2	2							2	0	
3	Գյուղ. մշակաբույս. սելեկ. և գենետիկա				1	1					1	0	1	1	
4	Մետառ. տնտեսություն և բնակավ. կանաչապատում			5	3				0	0			5	0	
5	Ագրոէկոլոգիա				1	0					8	7	1	8	
6	Մնասնաբուծություն				2	0					1	0	2	1	
7	Մնասնաբուծություն			8	2				2	0			8	2	
8	Մնասնաբուծ. սան. փորձաքննություն			5	3				1	1			5	1	
9	Ագրարային քաղաք. և տարած. զարգ.				4	2					3	0	4	3	
10	Ագրոպ. համակ.խորհրդ. և տեղեկատվ.				2	2					1	1	2	1	
11	Ապահով. գործ (ագրոպ.համակարգի)				3	2					4	4	3	4	
12	Ագրար. արտադր. Էկոնոմ. և կառավար.				6	3					4	3	6	4	
13	Սննդարդ. Էկոնոմիկա և կառավարում				5	5					1	0	5	1	
14	Ագրոպ. համակ. հաշվ.հաշվ. և աուդիտ				5	3					9	8	5	9	
15	Ագրոպար. համ. ֆինանսների կառ.				5	4					6	4	5	6	
16	Ապրանք. և ապրանքի որակի փորձ.				3	3					0	0	3	0	
17	Ագրոբիզնես և շուկայաբանություն				3	3					2	0	3	2	
18	Ագրոբիզնես և շուկայաբանություն ATC			9	7	9	7			12	7	9	6	18	21

Աղյուսակ 5-ի շարունակությունը

19	Կենս. անվտանգ. և անվ. արտ. իրավիճ.					2	0					1	1	2	1
20	Գյուղ. էլեկտրիֆիկ. և ավտոմատացում					1	0					4	1	1	4
21	Քողար., հող. և ջր. պաշ. օգտ. և պահպ.			5	2					2	0			5	2
22	Քողաշին. և հողային կադաստր			7	1					0	0			7	0
23	Գյուղ. մեքենաներ և սարքավորումներ			6	0					0	0			6	0
24	Գյուղ. մեքենայացում			2	0					0	0			2	0
25	Փոխ. և ճան. երթ. կազմ. և կառավարում			6	1					0	0			6	0
26	Փոխ. կազմ. և կառ. ագրոպ. համակ.			3	0					0	0			3	0
27	Գյ. և պարեն. արտ. փաթեթ. տեխ. և դիզայն					3	3					0	0	3	0
28	Քացի, հրուշ. և մակ արտադր. տեխնոլոգ.			5	5					0	0			5	0
29	Խմորմ. արտ. տեխնոլոգիա և գինեգործ.			5	2					0	0			5	0
30	Պահած. և սննդախտանյութերի տեխն.			1	0					0	0			1	0
31	Մսի և մսամթերքի տեխնոլոգիա			5	3					1	0			5	1
32	Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա			3	3					0	0			3	0
33	Զկան և ձկնամթերքի տեխնոլոգիա			7	6					0	0			7	0
34	Մանկ. և ֆունկց. սննդի տեխնոլոգիա			1	1					0	0			1	0
35	Կաշվի և մորթու տեխնոլոգիա			1	1					0	0			1	0
36	Գյուղ. հումքի պարեն. փորձ, ստ. և սերտ.			10	8					1	1			10	1
	Ընդամենը	0	0	94	48	60	41	0	0	19	9	55	36	154	74
				Ընդամենը ցերեկային											228

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Աղյուսակ 5-ի շարունակությունը

Մասնագիտություն	ընդ.	որից կին	1-ին	որից կին	2-րդ	որից կին	2-րդ ավարտ	որից կին	Ընդամենը
1 Բույսերի պաշտպանություն									
2 Անտառ. տնտ. և բնակ. կանաչ									
3 Անասնաբուժ. սան. փորձաքննություն	8	2			5	1			13
4 Ապահով. գործ (ագրոպ. համակարգի)	3	1			7	4	7	2	17
5 Ագրար. արտադր. էկոնոմիկա և կառ.	8	5			6	4	14	5	28
6 Ագրո. համա. հաշվ. հաշվ. և աուդիտ	10	6			13	3	26	19	49
7 Ագրո. համակ. ֆին. կառավարում	15	6			48	36	32	11	95
8 Բողաշինարար. և հողային կադաստր	4	0			5	0			9
9 Փոխադր. և ճան. երթ. կազմ և կառ.	2	0			3	0			5
10 Փոխադր. կազմ. և կառ. ագրո. համակ.	2	0			2	0			4
11 Խմոր. արտադր. տեխն. և գինեգործ.	7	3			6	0			13
12 Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա	2	2			5	2			7
Ընդամենը	66	26	0	0	107	54	83	38	256
	պպ	վճ.							
Բեռացում	2	9			կուրսի կրկնում				2
Վերականգնում	7				տարկետում				30
Նախապատրաստական	0								

**1.5.1. «ԱԳՐԱՐԱՅԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ
ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

2013թ-ին «Ագրարային մենեջմենթ» մագիստրոսական ծրագրում կատարվել է ընդունելություն 2 անգամ՝ հունվար և սեպտեմբեր ամիսներին:

2013 թ-ի հունվարի դրությամբ «Ագրարային մենեջմենթ» մագիստրոսական ծրագրում սովորել են 35 մագիստրանտներ, որոնցից 16՝ գերմանալեզու առաջին կուրսում, 4՝ հայալեզու առաջին կուրսում 6՝ գերմանալեզու երկրորդ կուրսում և 9՝ հայալեզու երկրորդ կուրսում: 14 մագիստրանտների նկատմամբ եղել է ուսման պրոցեսի դադարեցում՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում պրակտիկա անցնելու և ուսանելու կապակցությամբ: 7 մագիստրանտներ պրակտիկա անցկացրել են Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում ՀԱԱՀ-ի և ՎԿԳՀ-ի միջև համագործակցության շրջանակներում, 5 մագիստրանտներ ընդունվել են ՎԿԳՀ, 2-ը վերադարձել են պրակտիկայի ավարտից հետո: 7 մագիստրանտներ պրակտիկա անցկացրել են Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում ՀԱԱՀ-ի և գերմանական LOFO e.V. կազմակերպության միջև գործող համաձայնագրի

շրջանակներում, որոնցից 6-ը դիմել և պրակտիկան երկարացրել են ևս 6 ամսով, իսկ 1 մագիստրանտ վերադարձել է առաջին 6 ամսում պրակտիկան ավարտելուց հետո:

2013թ-ի սեպտեմբերի դրությամբ „Ագրարային մենեջմենթ“, մագիստրոսական ծրագրում սովորել են 22 մագիստրանտներ, որոնցից 11՝ գերմանալեզու առաջին կուրսում, 8՝ հայալեզու առաջին կուրսում 1՝ գերմանալեզու երկրորդ կուրսում (հոկտեմբեր ամսին 3 մագիստրանտ վերադարձել են պրակտիկայից և վերականգնել ուսումը 2-րդ կուրսում) և 2՝ հայալեզու երկրորդ կուրսում: 1 մագիստրանտի նկատմամբ եղել է ուսման պրոցեսի դադարեցում ՅԱԱՀ-ի և գերմանական LOQO e. V. կազմակերպության միջև գործող համաձայնագրի շրջանակներում պրակտիկա անցնելու կապակցությամբ:

Պետ.պատվեր ուսուցման համակարգում մագիստրանտների թիվը կազմել է 8:

ԱՄՁ-մագիստրոսական ծրագրում ուսուցումն ունի երկկողմանի ուղղվածություն՝

1. Լսարանային դասաժամերի անցկացում:
2. Գիտական հետազոտություններ:

Մագիստրանտների լսարանային ծանրաբեռնվածությունը չի գերազանցում 20 ժամ շաբաթական:

ԱՄՁ գերմանալեզու մագիստրոսական կուրսում հիմնականում դասավանդում են գերմաներենի գերազանց իմացությամբ Վայիենշտեֆանի անվան կիրառական գիտությունների համալսարանի շրջանավարտները (ովքեր վերապատրաստվել են ՎԿԳՀ-ում ՅԱԱՀ-ի և ՎԿԳՀ-ի միջև համագործակցության շրջանակներում), իսկ հայալեզվում դասավանդում են և (ՎԿԳՀ-ի շրջանավարտները և (ՅԱԱՀ-ի համապատասխան ամբիոնների դասախոսները:

ՅԱԱՀ ռեկտորի հրամանով ստեղծված ատեստացիոն հանձնաժողովը յուրաքանչյուր ուս. տարվա ընթացքում երկու անգամ ատեստավորում է մագիստրանտների գիտական գործունեությունը:

2012-2013 ուս. տարում մագիստրանտների ավարտական գործընթացը կազմակերպելու նպատակով ռեկտորի հրամանով ստեղծվել են պետական որակավորման հանձնաժողովներ, որոնց ներկայությամբ, սահմանված ժամանակացույցի համաձայն 14 մագիստրանտները (6 գերմանալեզու և 8 հայալեզու) հրապարակայնորեն պաշտպանել են իրենց մագիստրոսական ատենախոսությունները:

ԱՄՁ-մագիստրոսական ծրագրում ուսուցումը կազմակերպվում է ՅԱԿՅ-ի և ՎԿԳՅ-ի կողմից հաստատված ուսումնական պլաններով և մոդուլներով: 2013թ-ին ռեկտորատի նիստում հաստատվել է նոր ուսումնական պլան, ըստ որի ուսումը դարձել է չորս` նախկին երեք կիսամյակի փոխարեն:

Միջազգային և միջբուհական համագործակցությունների շրջանակներում ԱՄՁ-ի լավագույն մագիստրանտներից 5-ը շարունակում են իրենց ուսումը ՎԿԳՅ-ում, 2-ը անցկացնելով միայն գյուղատնտեսական պրակտիկա ՎԿԳՅ-ում և վերադառնալով, շարունակում են իրենց ուսումը ՅԱԿՅ-ի ԱՄՁ-մագիստրոսական ծրագրում: 6 մագիստրանտ անցկացնում են գյուղատնտեսական պրակտիկա ԼՕԳՕ-կազմակերպությունում, մեկը վերադառնալով շարունակում է իր ուսումը ՅԱԿՅ-ի ԱՄՁ-մագիստրոսական ծրագրում:

ԱՄՁ-մասնագիտության բոլոր մագիստրանտները գիտաարտադրական պրակտիկան անցնում են հանրապետության առաջատար ֆերմերային տնտեսություններում, հումքի վերամշակման ձեռնարկություններում: Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում նմանատիպ տնտեսություններում և ձեռնարկություններում անցած պրակտիկան ճանաչվում է վավեր` հիմք ընդունելով համագործակցության պայմանագրերը և մագիստրանտի վկայականը պրակտիկայի վերաբերյալ:

DAAD-գերմանական փորձի փոխանակման ծառայության նյութական աջակցությամբ տեխնիկապես կահավորվել 1-346 համակարգչային լսարանը և 2-417 լսարանը:

21.07-24.07.2013 ծրագրի շրջանակներում ՎԿԳՅ-ում անցկացվել է ռեկտորների գիտաժողով:

2013թ-ի սեպտեմբեր ամսին ԱՄՁ առաջին և երկրորդ կուրսերի համար կազմակերպվել է մեկամսյա դասընթացներ և տուտորիում գերմանիայից ժամանած երկու ուսանողուհիների կողմից, որոնք դասընթացները անց են կացրել «Բիզնես մենեջմենթ» և «Գյուղ. արտադրության Էկոնոմիկա» առարկաներից:

Սույն թվականի դեկտեմբեր ամսին (02.12-11.12.2013թ) ԱՄՁ առաջին կուրսերի համար կազմակերպվել է սեմինար, գերմանիայից ժամանած երկու մագիստրանտների կողմից, «Ձեռնարկությունների վերլուծություն և վերահսկում» և «Գյուղ. րտադրության Էկոնոմիկա» առարկաներից:

1.6. ՀԱԱՅ-ի Ա.Ե.ՔՈՉԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՔՈԼԵՋ

2013 թվականին Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գյուղատնտեսական պետական քոլեջը անվանափոխվել է հայ նշանավոր պետական և քաղաքական գործիչ Անտոն Երվանդի Քոչինյանի անվամբ: ՀԱԱՅ-ի Քոչինյանի անվան քոլեջում գործում են ուսման առկա և հեռակա ձևերը:

Առկա ուսուցման համակարգում 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակում սովորել են 516 ուսանողեր (աղյուսակ 6):

Հեռակա ուսուցման համակարգում սովորել են 28 ուսանողներ:

(01. 01. 2013ը առ 01. 01. 2014ը)

Աղյուսակ 6

N	Ցուցանիշներ	Առկա ուսուցում		Հեռակա ուսուցում
		ընդ. որից վճ.	516	28
1	Ուսանողների թվաքանակը առ 01.01.2013թ.	ընդ.	516	28
		որից վճ.	442	27
2	Ուսանողների թվաքանակը առ 01.01.2014թ.	ընդ.	719	26
		որից վճ.	618	26
3	Շրջանավարտների թվաքանակը տարվա ընթացքում	ընդ.	28	10
		որից վճ.	26	9
4	Ուսանողների ընդունելությունը տարվա ընթացքում միջևակարգ (լրիվ) ընդհանուր կրթությամբ	ընդ.	4	-
		որից վճ.	-	-
5	Ուսանողների ընդունելությունը տարվա ընթացքում հիմնական ընդհանուր կրթությամբ (9-րդ դաս. հիմքով)	ընդ.	296	-
		որից վճ.	269	-
6	Հեռացումներ	ընդ.	78	-
		որից վճ.	77	-
7	Գտնվում են ակադեմիական արձակուրդում առ 01.01.13թ., որից զին. ծառ. կապակցությամբ	ընդ.	9	5
		որից վճ.	6	5
8	Գտնվում են ակադեմիական արձակուրդում առ 01.01.14թ., որից զին. ծառ. կապակցությամբ	ընդ.	6	3
		որից վճ.	5	3
9	Օգտվել են վարձավճարի զեղչից	12-13 ուս.տ II կիս.	5	-
		13-14 ուս.տ I կիս.	9	-
10	Ազատվել են վարձավճ. օրենսդ. սահմ. կարգ.	վճ. համ.	4	-
11	Գերազանց ուսանողների քանակը	ընդ.	11	-
		որից վճ.	4	-
12	Կրթաթոշակ ստացողներ	ընդ.	71	-

2012-2013 ուստարում քոլեջում դասավանդվող 41 ամբիոնների ամբիոնների ուսումնական ծանրաբեռնվածությունը կազմել է 50503 ժամ, որից 48593-ը՝ ցերեկային, 1910 ժամը հեռակա ուսուցման համակարգում:

ՀՀ ազգային բանակ մեկնելու կապակցությամբ 4 ուսանողներ առկա ուսուցման համակարգից, 1 ուսանող հեռակա ուսուցման համակարգից և 1 ուսանող

արտերկրում ուսումը շարունակելու նպատակով ձևակերպվել է տարկետում, 4 ուսանողներ առկա ուսուցման, 6 ուսանողներ հեռակա ուսուցման համակարգից վերադարձել են ակադեմիական արձակուրդից:

Պետական ավարտական քննություններին և դիպլոմային նախագծերի պաշտպանությանը թույլատրված 38 ուսանողներից մասնակցեցին 38-ը:

Լավագույն ցուցանիշներով առանձնացավ ցերեկային ուսուցման Ֆինանսներ (Ագրոպարենային համակարգում) մասնագիտության 3-րդ կուրսը, որտեղ 9 շրջանավարտներից առաջին համալիր քննությանը «5» գնահատական ստացան 5 ուսանողներ, չորսը՝ «4», միջին բալը կազմեց 4,6 միավոր, առաջադիմությունը՝ 100%, իսկ երկրորդ համալիրին՝ «5» գնահատական ստացան 6 ուսանողներ, երեքը՝ «4», միջին բալը կազմեց 4,7 միավոր, առաջադիմությունը՝ 100%:

Քուլեջի 38 շրջանավարտներից առկա ուսուցման յոթ ուսանողներ արժանացել են գերազանցության դիպլոմների:

1.7. ՀԱՎԱՅ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

2012-2013 ուստարում վարժարանում գործել են հինգ 10-րդ, հինգ 11-րդ և յոթ 12-րդ դասարաններ: Աշակերտների թիվը տարեսկզբին եղել է 411, իսկ տարեվերջին 383 (կարգապահական խախտումների և երկարատև բացակայությունների պատճառով վարժարանից ազատվել են 23 աշակերտ):

2012-2013 ուստարվա սեպտեմբերի 3-ից վարժարանում ուսումնադաստիարակչական աշխատանքները իրագործվել են ելնելով մանկավարժական խորհրդի կողմից հաստատված աշխատանքային պլանից:

Մասնագիտական կողմնորոշում տալու նպատակով 2013 թ. փետրվար - ապրիլ ամիսներին կազմակերպվել են այցելություններ «Ագրոբիզնես» կրթական կենտրոն, ինչպես նաև հանդիպումներ համալսարանի ամբիոնների վարիչների և դասախոսների հետ:

Նախարարության տեսչության կողմից 2013թ.-ի փետրվարի 1-ից մինչև մարտի 1-ը վարժարանում կատարվել են մատենավարության և աշակերտների շարժի վերաբերյալ ստուգումներ, որոնց արդյունքում չի գրանցվել որևիցե թերություն:

2012-2013 ուստարում վարժարանում հաճախակի բացակայություն ունեցող աշակերտների ծնողների հետ տեղի են ունեցել հանդիպումներ, որոնք տեղեկացվել են այն մասին, որ 120-200 ժամ բացակայության դեպքում աշակերտները պետք է

հանձնեն քննություններ 5 առարկայից: Սակայն այդ աշխատանքներից հետո էլ մայիսի 10-ի դրությամբ պարզվել է, որ վարժարանում 120-200 ժամ բացակայություն ունեցող աշակերտների թիվը կազմում է 69, որից 35 աշակերտ 12-րդ դասարանից և 12-ական 10 և 11-րդ դասարաններից: Ելնելով ՀՀ ԿԳ նախարարության համապատասխան կարգից, այդ աշակերտները նախարարի թույլտվությամբ 2013 թ.-ի մայիսի 20-ից 23-ը ներառյալ ըստ նախօրոք սահմանված ժամանակացույցի հանձնել են լրացուցիչ քննություններ 5 առարկայից: Մեկ աշակերտ՝ Նահապետյան Գևորգը, առաջին՝ հայոց լեզվի քննությունից հետո այլևս չի ներկայացել քննություններին և չի ունեցել տարեկան գնահատականներ, ինչի պատճառով չի մասնակցել ավարտական քննություններին: Մնացած 68-ը ստացել են դրական գնահատականներ:

Տարեկան գնահատականներով վերաքննության են մնացել 10-րդ դասարանից 12 աշակերտ, 11-րդ դասարանից՝ 12 աշակերտ: 10 և 11-րդ դասարան են փոխադրվել համապատասխանաբար 85 և 97 աշակերտ:

2012-2013 ուստարվա սովորողների գիտելիքների ստուգման, պետական ավարտական և միասնական քննությունների կազմակերպման և անցկացման կարգի համաձայն մայիսի 29-ից մինչև հունիսի 17-ը ընկած ժամանակահատվածում ՀԱԱՀ վարժարանում տեղի է ունեցել 12ՎՆրդ դասարանի պետական ավարտական և միասնական քննություններ:

Քննություններին մասնակցել են 7 դասարաններ՝ թվով 176 աշակերտ: Մեկ աշակերտ՝ Նահապետյան Գևորգը չի մասնակցել պետական ավարտական քննություններին: Բոլոր աշակերտները ավարտական քննություններին ստացել են դրական գնահատականներ:

2013 թ. առկա ուսուցման համակարգում սովորելու նպատակով միասնական քննություններին հայտ են ներկայացրել 111 աշակերտ, որոնցից 3-ը մինչև քննությունների սկսվելը կատարել են հայտի փոփոխություն, փաստորեն քննություններին մասնակցել են 108 աշակերտ, որոնցից 86-ը ստացել է դրական գնահատական: Հեռակա ուսուցմանը մասնակցել են 67 աշակերտներ, որոնցից 53-ը ընդունվել են ՀԱԱՀ, իսկ ցերեկայինում 60: Ընդամենը ՀԱԱՀ են ընդունվել 113 վարժարանցիներ:

2013-2014 ուստարում վարժարանում գործում են յոթ 10-րդ, հինգ 11-րդ և հինգ 12-րդ դասարաններ: Աշակերտների թիվը տարեսկզբին եղել է 340, իսկ այժմ 331

աշակերտ: Սեպտեմբերի 10-ից 15-ը վարժարանում տնօրինության կողմից 10-րդ և 12-րդ դասարաններում կազմակերպվել է մաթեմատիկա առարկայից ստուգում: Առաջադիմությունը 10-րդ դասարանում կազմել է 25 %, իսկ 12-րդ-ում 50%:

Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին բոլոր դասարանների աշակերտները հաճախել են համալսարանի ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության ամբիոնները ու կատարել մի շարք ծրագրային լաբորատոր փորձեր և ստացել են համապատասխան մասնագիտական կողմնորոշում:

2013թ. հոկտոմբեր- դեկտեմբեր ամիսներին վարժարանի մեթոդիավորումների կողմից կազմակերպվել են փոխադարձ դասալսումներ և արդյունքները քննարկվել են մասնախմբերում:

2013թ.-ի դեկտեմբերի 7-ին վարժարանում կազմակերպվել է ներվարժարանային օլիմպիադա բոլոր առարկաներից: Արդյունքների ամփոփումից հետո յուրաքանչյուր առարկայից կազմվել են խմբեր, որոնք հետագայում կմասնակցեն Երևան քաղաքի տարածքային օլիմպիադաներին:

2013 թ. դեկտեմբերի 16-ին համալսարանի մեծ դահլիճում կազմակերպվել է վարժարանի 12-րդ դասարանի աշակերտների և ծնողների հանդիպումը համալսարանի ռեկտոր պ-ն Թարվերդյանի հետ, որտեղ ռեկտորը մանրամասն ներկայացրել է բոլոր այն առավելությունները, որոնք առկա են լինելու ագրարային համալսարանի այս տարվա ընդունելության կարգում՝ այն է, ավարտական գնահատականներով յուրաքանչյուր աշակարտ կարող է դառնալ համալսարանի վճարովի համակարգի ուսանող, իսկ եթե հանձնեն 1 միասնական քննություն, ապա կարող են դառնալ պետպատվերով(անվճար հիմունքներով) ընդունված ուսանող:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՐ

2.1 ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՐ

Հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղում ուսումնական գործընթացը միտված է եղել ուսման որակի կատարելագործմանը, ուսանողների տեսական և փորձնական գիտելիքների ամրապնդմանը և ուսուցման արդյունավետության մակարդակի բարձրացմանը, ինչը հնարավորություն կտա ԼՂՀ ագրոպարենային համակարգն ապահովել բարձրակարգ մասնագետներով: Այդ իսկ պատճառով մասնաճյուղի դասախոսական կազմը տարեցտարի համալրվում է նոր մասնագետներով: Այժմ դասախոսական կազմը բաղկացած է 98 հիմնական

աշխատողներից, (2012-2013 ուստարվա համեմատությամբ ավելացել է 8-ով) որոնցից 2-ը՝ դոկտոր-պրոֆեսոր, 15-ը գիտությունների թեկնածու, որից 7-ը՝ դոցենտ, մյուսները չունեն գիտական աստիճան ու աշխատում են ավագ դասախոսի, դասախոսի և ասիստենտի տարակարգերով (աղյուսակը 1): Ժամավճարային հի36մունքներով հրավիրվել է 57 դասախոս, այդ թվում 16-ը՝ մայր բուհից, որոնցից 5-ը՝ պրոֆեսոր, 15-ը դոցենտ, 7 ավագ դասախոս, 9 դասախոս, 21 ասիստենտ:

Արդեն իսկ մասնաճյուղի 32 ասիստենտներ ՅԱԿՅ-ի համապատասխան ամբիոններում ձևակերպված են որպես հայցորդներ:

Հաշվետու տարում մասնաճյուղի դասախոսների կողմից հրատարակվել են դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ և գիտական հոդվածներ: Ստեփանակերտի մասնաճյուղը մասնագետների թողարկման կրթօջախ լինելուց բացի իրականացնում է նաև գիտահետազոտական աշխատանքներ, որոնք էլ իրենց հերթին նպաստում են կայուն գիտելիքներով զինված մասնագետների թողարկմանը: Մասնաճյուղի տարբեր ամբիոնների կողմից հրատարակվել է 30-ից ավելի գիտական հոդվածներ: Զայլեր են կատարվում ամբիոններին գիտական ուղղվածություն տալու համար, որը կիթանի գյուղատնտեսության առանձին ճյուղերի զարգացմանը: Արդեն իսկ մասնաճյուղի մասնագետները համապատասխան խորհրդատվություններ են իրականացնում ԼՂՀ կառավարության կողմից կազմակերպված գիտաարտադրական խորհրդակցություններում, մի խումբ դասախոսներ ընդգրկված են Արցախի գիտական կենտրոնում, ղեկավարում են տեղում իրականացվող գիտական թեմաներ և մասնակցում ագրոպարենային ոլորտում ռազմավարական ծրագրերի մշակման գործընթացին:

Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղում կազմակերպվել են նաև խորհրդակցություններ հանրապետության բոլոր շրջանների գյուղատնտես մասնագետների համար: Դա կրում է շարունակական բնույթ: Մասնաճյուղը սերտ կապ է պահում ԼՂՀ-ի բոլոր շրջանների դպրոցների հետ և, պարբերաբար հանդիպելով աշակերտների հետ, տալիս է մասնագիտական կողմնորոշում ու խորհրդատվություններ:

ՈՒսումնական գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար նշված ժամանակաշրջանում անց է կացվել գիտամեթոդական խորհրդի 8 և տնօրինության խորհրդի 8 նիստ, որոնցում քննարկվել են տարաբնույթ 66 հարցեր, այդ թվում 52-ը կամ 78,8%-ը՝ ուսումնագիտական գործընթացին վերաբերող:

Որոշում է կայացվել 2013-14 ուստարվա I կիսամյակում 24 (16 ՄՄԿԾԿ և 8 բակալավր) սոցիալապես անապահով ուսանողի նկատմամբ 25%-ի չափով ուսման վճարի գեղչ կատարել: Մասնաճյուղում գործում է բարձրագույն կրթության երկաստիճան ուսուցման համակարգ՝ բակալավրիատ և մագիստրատուրա: Ուսումնական գործընթացը իրականացվում է երկու ֆակուլտետների՝ «Ագրարային կենսաբանական և տնտեսագիտական» ու «Ագրարային ճարտարագիտական և տեխնոլոգիական» և վեց ամբիոնների կողմից: 2013-2014 ուստարվա ծանրաբեռնվածությունը մասնաճյուղ կազմել է 102865 ժամ, որից՝ ագրարային կենսաբանական և տնտեսագիտական ֆակուլտետում՝ 65555 ժամ, իսկ ագրարային ճարտարագիտական և տեխնոլոգիական ֆակուլտետում՝ 37310 ժամ:

Մագիստրատուրայում ուսումնական գործընթացը իրականացվում էր միայն առկա ուսուցման ձևով՝ 3 մասնագիտությունների գծով, սակայն 2013թ-ից գործում է նաև հեռակա (բացի անասնաբուժությունից) ուսուցման համակարգը՝ 3 մասնագիտությունների գծով (ագրոնոմիա, փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում, ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում): Սակայն, առայժմ ընդունելությունը կատարվել է միայն «Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում» մասնագիտության գծով:

2013թ. հունվարի 1-ի դրությամբ մասնաճյուղում ուսանողների թիվը կազմել է 1600, որից 1111 վճարովի համակարգում, այդ թվում բակալավրի առկա ուսուցման համակարգում՝ 275, որից 22,5%-ը վճարովի, հեռակայում՝ 435, ՄՄԿԾԿ-ի առկա ուսուցման համակարգում՝ 426, որից 39,4%-ը վճարովի, հեռակայում՝ 380, մագիստրատուրայում՝ 81, որից 77,8%-ը վճարովի: 2013թ II կիսամյակում թողարկվել է 245 շրջանավարտ, որից բակալավրի առկա ուսուցման համակարգում՝ 26, հեռակայում՝ 58, ՄՄԿԾԿ-ի առկա ուսուցման համակարգում՝ 99, հեռակայում՝ 32, մագիստրատուրայում՝ 30: 2013-14 ուստարվա I կիսամյակում ՄՄԿԾԿ-ի հեռակա ուսուցման համակարգում թողարկվել է 13 շրջանավարտ: Այսպիսով բակալավրի առկա ուսուցման համակարգում 2013թ. հունվարի 1-ի դրությամբ ուսանողների թիվը կազմել է 275: Հաշվետու ժամանակահատվածում ընդունվել է՝ 53, զինծառայությունից վերադարձել՝ 26, ՄՄԿԾԿ-ից 2-րդ է կուրս տեղափոխվել՝ 26, հեռացվել՝ 13, զինծառայության մեկնել՝ 51, այլ բուհ տեղափոխվել՝ 1, ավարտել՝ 26 ուսանողներ և 2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ուսանողների թիվը կազմել է 289: Բակալավրի հեռակա ուսուցման համակարգում 2013թ. հունվարի 1-ի դրությամբ

ուսանողների թիվը կազմել է 435: Հաշվետու ժամանակահատվածում ընդունվել է՝ 111, զինծառայությունից վերադարձել՝ 12, ՄՄԿԾԿ-ից 2-րդ կուրս տեղափոխվել՝ 72, այլ բուհից՝ 4, հեռացվել՝ 68, զինծառայության մեկնել՝ 32, այլ բուհ տեղափոխվել՝ 1, ավարտել՝ 58 ուսանողներ և 2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ուսանողների թիվը կազմել է 475:

ՄՄԿԾԿ-ի առկա ուսուցման համակարգում 2013թ. հունվարի 1-ի դրությամբ ուսանողների թիվը կազմել է 426: Հաշվետու ժամանակահատվածում ընդունվել է՝ 176, զինծառայությունից վերադարձել՝ 31, հեռացվել՝ 48, զինծառայության մեկնել՝ 7, ավարտել՝ 99 ուսանողներ և 2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ուսանողների թիվը կազմել է 479:

ՄՄԿԾԿ-ի հեռկա ուսուցման համակարգում 2013թ. հունվարի 1-ի դրությամբ ուսանողների թիվը կազմել է 380: Հաշվետու ժամանակահատվածում ընդունելություն չի եղել, քանի որ հիմնական կրթության բազայի վրա հեռակա ընդունելություն չի թույլատրվում, զինծառայությունից վերադարձել՝ 36, այլ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից տեղափոխվել են՝ 28, հեռացվել՝ 89, զինծառայության մեկնել՝ 46, ավարտել՝ 45 ուսանողներ և 2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ուսանողների թիվը կազմել է 264:

**2012-2013 ուստարվա ուսանողների շարժը ՀԱԱՀ-ի Ստեփանակերտի
մասնաճյուղում**

Աղյուսակ 7

Ուսուցման համակարգերը	Ուսանողների թիվը առ 01.01.2013թ.	Մուտք				Ելք			Հոջանավարտ	Ուսանողների թիվը տարեվերջին 31.12.2013թ.
		Ընդունվել են	այլ ուս. հաստատություն ներից	վերադարձել են բանակից	այլ	հեռացվածներ	մեկնել են բանակ	այլ բուհ		
Մագիստրատուրա										
Առկա	84	27	-	-	-	7	-	-	30	74
Հեռակա	-	9	-	-	-	-	-	-	-	9
Բակալավրիատ										
Առկա	275	53	-	26	26	13	51	1	26	289
Հեռակա	435	111	4	12	72	68	32	1	58	475
ՄՄԿԾԿ										
Առկա	426	176	-	31	-	48	7	-	99	479
Հեռակա	380	-	-	36	28	89	46	-	45	264
Ընդամենը	1600	376	4	105	126	225	136	2	258	1590

Մագիստրատուրայում 2013թ. հունվարի 1-ի դրությամբ առկա ուսուցման համակարգում ուսանողների թիվը կազմել է 84: Ըդունվել են՝ 27, հեռացվել՝ 7 և ավարտել՝ 30 ուսանողներ, 2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ուսանողների թիվը կազմել է 74: Հեռակա ուսուցման համակարգի I կուրսում սովորում է ընդամենը 9 ուսանող: Այսպիսով մասնաճյուղում ուսանողների թիվը 2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 1590 ուսանող, ուսանողների շարժի վերաբերյալ տվյալները ներկայացվում են աղյուսակ 7-ում:

2012-2013 ուստարվա II կիսամյակում մասնաճյուղի բակալավրիատի առկա ուսուցման համակարգում անցկացվել է 93 միջանկյալ քննություն, որին 244 ուսանողից մասնակցել են 221-ը, 23 ուսանող չի ներկայացել, 13-ը ստացել են գերազանց, 49-ը՝ լավ և գերազանց, 90-ը՝ խառը գնահատականներ, 51-ը՝ բավարար, 18-ը՝ անբավարար: Առաջադիմությունը՝ 91,9%:

2013-14 ուս տարվա I կիսամյակում անցկացվել է 111 միջանկյալ քննություն, 275 ուսանողներից մասնակցել են 246, 29 ուսանող չի մասնակցել միջանկյալ քննություններին և համապատասխան փաստաթղթեր ներկայացնելուց հետո վերահանձնել են պարտքերի մարման փուլում: 76 առարկաներից կազմակերպված 111 միջանկյալ քննությունների արդյունքներում գրանցվել են հետյալ գնահատականները. 364 գերազանց, 535 լավ, 492 բավարար, 43 անբավարար: Առաջադիմությունը կազմել է 97,1%:

Մասնաճյուղում դեռևս դիպլոմայն աշխատանքների և մագիստրոսական թեզերի բարձր մակարդակով կատարման հարցը գտնվում է թույլ հիմքերի վրա , որի վերացման ուղղությամբ համապատասխան ամբիոնները դեռ անելիքներ ունեն: Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ նշված աշխատանքների իրականացման համար մասնաճյուղի հնարավորությունները նույնպես բարվոք վիճակում չեն, ինչը պայմանավորված է կահավորված լաբորատորիաների բացակայությամբ, ուսումնափորձնական տնտեսությունում պայմանների սղությամբ, ինչպես նաև ԼՂՀ հանրապետությունում գիտահետազոտական լաբորատորիաների բացակայությամբ:

Կրթության որակի բարձրացման համար մասնաճյուղում կազմակերպվում է շարունակական ուսուցում և խորհրդատվությունների անցկացում՝ կապված Բոլոնիայի գործընթացի, մասնավորապես, կրեդիտային համակարգի առանձնահատկությունների, ելքային արդյունքների մշակման և ներդրման մեթոդաբանության

հետ: Այս առումով մասնաճյուղում արձանագրվել է որոշակի առաջընթաց: Ուսումնադաստիարակչական աշխատանքների կարևորագույն սկզբունքներից է սովորողի ճիշտ և արդարացի գնահատումը: 2012-2013 ուստարվա առաջադիմության արդյունքներով, ՀՀ և ԼՂՀ օրենքներով, ՀՀ և ԼՂՀ կառավարությունների որոշումներով և ՀԱԱՀ-ի կանոնակարգի համաձայն, բակալավրի առկա ուսուցման համակարգի 31 խմբերից 26-ում անց է կացվել ուսանողների շրջափոխման մրցույթ: Շրջափոխման արդյունքներից ելնելով՝ վճարովի համակարգից անվճար է տեղափոխվել 12 ուսանող, անվճարից վճարովի՝ 12, մեկը հեռացվել է, ՄՄԿԾԿ-ում 31 խմբերից 22-ում կատարվել է շրջափոխում՝ վճարովի համակարգից անվճար է անցել 21, անվճարից վճարովի՝ 20, 5-ը՝ հեռացվել է:

Ուսանողների տեսական գիտելիքների պրակտիկ ամրապնդման տեսանկյունից անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել լաբորատոր-գործնական պարապմունքների նպատակային անցկացմանը, սակայն մասնաճյուղում լաբորատորիաների բացակայության պատճառով այն պատշաճ մակարդակի վրա չի գտնվում: Մասնաճյուղում առկա միակ ագրոքիմիական լաբորատորիան համապատասխան շենքային պայմանների և անհրաժեշտ սարքավորումների բացակայության պատճառով դեռևս գործում է ոչ լիարժեք:

Ուսանողների տեսական գիտելիքների պրակտիկ ամրապնդման կարևոր գործոններից մեկը համարվում է ուսումնաարտադրական փորձուսուցումների նպատակասլաց անցկացումը: Համաձայն գործող ուսումնական պլանների 2012-2013 ուստարում մասնաճյուղի բակալավրիատի առկա ուսուցման համակարգի II կիսամյակում նախատեսված էր 42 ուսումնական և 38 արտադրական և 6 նախադիպլոմային պրակտիկաներ, իսկ միջին մասնագիտական կրթական ծրագրերի կենտրոնում՝ 32 ուսումնական և 9 արտադրական, 1 նախադիպլոմային և 1 տեխնոլոգիական պրակտիկաներ: 2013-14 ուստարվա I կիսամյակում բակալավրիատի առկա ուսուցման համակարգում 31 խմբերից 20-ում նախատեսված է 20 ուսումնական, 9 արտադրական և 8 նախադիպլոմային, ՄՄԿԾԿ-ի առկա ուսուցման համակարգի 21 խմբերում՝ 25 ուսումնական, 33 արտադրական փորձուսուցումներ:

Մասնաճյուղը նախօրոք 24 կազմակերպությունների հետ՝ (մասնավորապես Արցախ Ֆրոնտի, կաթի գործարանի, հանրապետական բանկերի, «Ստեփանակերտի ավտոկայան» ՓԲԸ-ն, Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի, ԼՂՀ գյուղ նախարարության, Բույսերի պաշտպանության լաբորատորիայի,

Սերմաբուծության և սելեկցիոն նվաճումների պահպանման կենտրոնի, «Տոհմային կայան» ՓԲԸ-ն, գինու և կոնյակի գործարանների, ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության և այլ պետական և մասնավոր հիմնարկ-ձեռնարկությունների) պայմանագրեր է կնքել՝ փորձուսուցումները անցկացնելու համար: Բոլոր փորձուսուցումների հաշվով համապատասխան դասախոս-ղեկավարների կողմից ներկայացվել են հաշվետվություններ, որոնց քննարկումը իրականացվել է ամբիոններում:

Ուսումնական պարապմունքներին ուսանողների հաճախումների հարցը միշտ եղել և մնում է մասնաճյուղի գիտական խորհրդի, տնօրինության, ֆակուլտետների, ամբիոնների ամենօրյա ուշադրության կենտրոնում: Անհարգելի բացակայությունները բացառելու նպատակով կատարվել են հետևողական աշխատանքներ, հրավիրվել են ծնողական ժողովներ՝ հատկապես միջին մասնագիտական կրթական ծրագրերի կենտրոնում: Դրա արդյունքում այս ուսումնական տարում արձանագրվել է ուսանողների հաճախելիության բարձր ցուցանիշ:

Մասնաճյուղում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում դասալսումների: Այդ նպատակով 2013թ II կիսամյակում անց է կացվել 66, 2013-14 ուս. տարվա I կիսամյակում՝ 50 դասալսում և մեկ բաց դասախոսություն, որոնց արդյունքները քննարկվել է համապատասխան ամբիոններում:

2013-14 ուստարվա I առաջին կիսամյակում I կուրսի ուսանողների համար անցկացվել է սեմինար-խորհրդատվություն կրեդիտային համակարգին ծանոթացման համար: Հաշվետու ժամանակահատվածում ուսխորհրդի կողմից կազմակերպվել է բազմաթիվ միջոցառումներ՝ առաջին կուրսեցիների համար ծանոթության երեկո, արշավ դեպի Դադիվանք, կոնֆերանս «ուսանող-դասախոս փոխհարաբերություններ» խորագրով, երիտֆորում 2013թ. ցուցահանդես (որին մասնակցել են ԼՂՀ տարբեր շրջանների 11-12-րդ դասարանի աշակերտները, պատրաստվել են բուկլետներ Ստեփանակերտի մասնաճյուղում գործող մասնագիտությունների ցանկի, վարձավճարների և առօրյա վերաբերյալ ու բաժանվել աշակերտներին մասնագիտական կողմնորոշումներ տալու համար), ֆուտբոլի, վոլեյբոլի, թենիսի, շախմատի առաջնություն, արշավ «Ծիծեռնավանք», այցելություն մանկատուն, ինտելեկտուալ խաղ, բարեգործական համերգ, հանդիպում վարչապետի խորհրդականի և արցախյան պատերազմի վետերանների հետ: Մեր ուսանողները մասնակցել են արտերկրում կազմակերպվող միջազգային սպորտային տարատեսակ

մրցություններին և օլիմպիադաներին՝ գրավելով առաջնակարգ տեղեր: Սակայն մասնաճյուղը այս ուղղությամբ էլ պետք է ընդարձակի պլանավորվող աշխատանքների ծավալը, մեծ տեղ հատկացնելով կազմակերպվող միջբուհական միջոցառումներին մեր ուսանողների ներգրավածությանը:

Ուսումնափորձնական հողամասից ստացված բերքից բարեգործական օգնություն ենք ցուցաբերել «Չանգակ» մանկատանը:

Բարձր մակարդակով մասնագիտական կրթության ապահովման երաշխիքներից առաջնահերթ տեղ է զբաղեցնում բուհը բարձրորակ մասնագետներով համալրված լինելը և ոչ պակաս կարևոր է մասնագիտական գրականությունով հագեցված գրադարանային ֆոնդ ունենալը: Մասնաճյուղի գրադարանային ֆոնդը այսօր կազմում է 16191 գիրք: Հաշվետու ժամանակահատվածում մայր բուհից ստացել ենք 106 մասնագիտական գրականություն, 80 մեթոդական ցուցումներ, ինչպես նաև մասնաճյուղի կողմից ձեռք է բերվել ևս 74 ծրագրային գրականություն: Մասնաճյուղում առկա է նաև 3000-ից ավելի էլեկտրոնային գրականություն:

Մասնաճյուղում դեռևս ոչ պատշաճ մակարդակի վրա է գտնվում գիտահետազոտական աշխատանքների իրականացումը, ինչն ունի նաև իր օբյեկտիվ պատճառները, որոնցից են սեփական շենքային պայմանների, լաբորատորիաների և ուսումնափորձնական տնտեսության բացակայությունը: Գործող ուսումնափորձնական տնտեսությունը գտնվում է բարդ ռեչիեֆային պայմաններում ենթակա չէ մեքենայական մշակման ուստի և չի կարող ծառայել փորձարարական աշխատանքներ կատարելու համար:

2.2. ՎԱՆԱՃՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՂ

Հաշվետու ժամանակահատվածում ՀԱԱՀ-ի Վանաձորի մասնաճյուղում կատարվել են աշխատանքներ ուսումնական գործընթացը համալսարանի ռեկտորի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան և բավարար մակարդակով կազմակերպելու, ուսուցման որակն ապահովելու, ուսումնական բազան լաբորատոր սարքավորումներով և նյութերով համալրելու ուղղությամբ: Մասնաճյուղում ուսումնական գործընթացը ամբողջությամբ կազմակերպվում է մայր բուհ-ի հեռակա ուսուցման դեպարտամենտի կրթական չափորոշիչներին համապատասխան:

2013թ. դեկտեմբերի 25-ի դրությամբ մասնաճյուղի ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 387 ուսանող, որից 24-ը գտնվում են գինվորական ծառայության մեջ: Տարվա ընթացքում մայր բուհ-ից մասնաճյուղ են տեղափոխվել 7 ուսանող, մասնաճյուղից հեռացվել են 19 ուսանող: 2013թ-ին հեռակա ուսուցմամբ մասնաճյուղի առաջին կուրս են ընդունվել 45 ուսանող:

Ստորև ներկայացվում է մասնաճյուղի հեռակա ուսուցման կուրսերի ուսանողների շարժի վերաբերյալ համառոտ տվյալները 25.12.2013թ. դրությամբ.

-	Ուսանողների ընդհանուր թիվը 01.01.2013թ. դրությամբ	- 422
-	Փոխադրվել են այլ բուհ-երից	- 0
-	Փոխադրվել են ՀԱԱՀ-ից	- 8
-	Վերականգնվել են նախկին ուսանողներ	- 1
-	Փոխադրվել են ՀԱԱՀ	- 0
-	Հեռացվել են	- 19
-	Շրջանավարտներ	- 70
-	Ընդունելություն	- 45
-	Գտնվում են գին. ծառայության մեջ	- 24
-	Գործող ուսանողների թիվը	- 363
-	Ուսանողների ընդհանուր թիվը 25.12.2013թ. դրությամբ	- 387

Մասնաճյուղի հեռակա ուսուցման «Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում», «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն», «Հողաշի-նարարություն և հողային կադաստր», «Հաշվապահական հաշվառում և աուդիտ», «Գյուղատնտեսության մեքենայացում», «Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում», մասնագիտությունների գծով 26 կուրսերում ուսումնական գործընթացը կազմակերպվել է մայր բուհի հեռակա ուսուցման դեպարտամենտի կրթական չափորոշիչներին համապատասխան:

Առարկայական ծրագրերին համապատասխան ստուգողական և կուրսային աշխատանքների նախապատրաստման համար ուսանողներն ակտիվորեն օգտվել են մասնաճյուղի կահավորված գրադարան-ընթերցասրահից: Գրադարանում առկա է շուրջ 3100 կտոր մասնագիտական գրականություն, որը հիմնականում մասնաճյուղին է տրամադրվել ՀԱԱՀ-ի գիտական գրադարանի կողմից՝ համալսարանի ռեկտոր Ա.Պ. Թարվերդյանի հանձնարարականին համապատասխան, իսկ մի մասն էլ ձեռք է բերվել գրախանութներից, կամ ստացվել են նվիրատվության կարգով: 2012-

2013 ուսումնական տարվա ընթացքում մասնաճյուղում ժամավճարային հիմունքներով դասավանդել են 66 դասախոս, որոնցից 39-ը Վանաձոր են գործուղվել Հայաստանի ազգային ագրարային համալսարանից, 5-ը մասնաճյուղի հաստի-քային աշխատողներ են, իսկ 22-ը Վանաձոր քաղաքում գործող պետական բուհ-երից, հանրակրթական դպրոցներից և այլ կազմակերպություններից հրավիրված մասնագետներ: Դասավանդող 66 դասախոսներից 39-ը ունեն գիտական կոչումներ և աստիճաններ, որը կազմում է 59 % :

Ուսումնական գործընթացում առկա են եղել նաև թերություններ և բացթողումներ, այդ թվում նաև դասաձախողման փաստեր, որոնք ունեցել են օրեկտիվ և սուբեկտիվ պատճառներ:

Ուսումնական գործընթացի կազմակերպման ամբողջ ընթացքում մասնաճյուղն ստացել է բազմակողմանի աջակցություն և օժանդակություն համալսարանի ռեկտորատի, ուսումնական մասի, հեռակա ուսուցման դեպարտամենտի և ամբիոնների կողմից: Ամենօրյա ուշադրության կենտրոնում է պահվել կրթության որակի ապահովման և վերահսկողության իրականացման, երիտասարդ դասախոսական կադրերի վերապատրաստման հարցերը: Անցած ուստարում թվով 4 երիտասարդ ասիստենտներ ՀԱԱՀ-ում մասնակցել են որակավորման բարձրացման դասընթացներին և ստացել համապատասխան հավաստագրեր:

Մասնաճյուղի բոլոր կուրսերում փոխադրական քննություններն անց են կացվել կազմակերպված և թափանցիկ: Քննություններն կազմակերպվել են մասնաճյուղի ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցին համապատասխան: Քննությունների անցկացման ընթացքը մշտապես գտնվել է մասնաճյուղի տնօրինության ուշադրության կենտրոնում: Անհատական գրույցների, ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվող միջոցառումների և ուսումնական գործընթացին առընչվող հարցերի քննարկումների ժամա-նակ ուսանողները հայտնել են իրենց գոհունակությունը փոխադրական քննությունների ճիշտ կազմակերպման և անցկացման վերաբերյալ:

2012-2013 ուստարում հանձնել են պետական քննություններ և պաշտպանել դիպլոմային աշխատանքներ բակալավրիատի թվով 70 ուսանողներ, որոնցից «Հողաշինարարություն և հողային կադաստր» մասնագիտությամբ 20 ուսանող, «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մասնագիտությամբ 24 ուսանող, «Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում» մասնագիտու-

թյամբ 9 ուսանող, «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն» մասնագիտությամբ՝ 10 ուսանող, «Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում» մասնագիտությամբ 7 ուսանող: Պետական քննությունները և դիպլոմային աշխատանքների պաշտպանությունները անց են կացվել ըստ սահմանված ժամանակացույցի և կարգի:

Պետական քննություններին և դիպլոմային աշխատանքի պաշտպանությանը մասնակցած բոլոր ուսանողները ստացել են դրական գնահատականներ և համապատասխան որակավորում:

Մասնաճյուղի տնօրենի, փոխտնօրենի և երկու առարկայական բաժնի վարիչների կողմից կատարվել են դասալսումներ բակալավրիատի բոլոր խմբերում: Յուրաքանչյուր դասալսումից հետո անց է կացվել քննարկում և կատարվել վերլուծություն, տրվել են կոնկրետ ցուցումներ: Տարվա ընթացքում մասնաճյուղի դասախոսների կողմից կազմվել և տպագրվել են 2 մեթոդական ցուցումներ: Հայաստանի Հանրապետությունում և հանրապետությունից դուրս տարբեր ամսագրերում և շաբաթաթերթերում տպագրվել են երեք մասնագիտական հոդվածներ և արվել են առաջարկություններ առաջավոր փորձի ներդրման և արմատավորման վերաբերյալ :

Բարձրագույն կրթական ծրագրերի իրականացմանը համընթաց մասնաճյուղում քայլեր են արվել նաև առանձին թեմաներով գիտական հետազոտությունների իրականացման ուղղությամբ: Կատարվում են հետազոտական աշխատանքներ, որոնք հիմնականում ուղղված են Լոռու մարզի և Հանրապետության հյուսիսային տարածաշրջանի գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում առաջավոր փորձի տեղայնացմանը, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը, արտադրության արդյունավետության բարձրացմանը և շրջակա միջավայրի պահպանության խնդիրներին: Այս ուղղությամբ իրականացվող աշխատանքներն արդյունավետ կլինեն, եթե մասնաճյուղն ունենա ուսումնափորձնական բազա:

Մասնաճյուղի տնօրինության ուշադրության կենտրոնում են գտնվել նաև ուսումնական բազայի բարեկարգմանն ուղղված աշխատանքների իրականացումը: Հաշվետու տարում ձեռք է բերվել համապատասխան լաբորատոր սարքավորումներ և նյութեր շուրջ 3.668.000 դրամի արժողությամբ:

2.3 ՍԻՍԻԱՆԻ ՄԱՍՆԱԾՅՈՒՂ

ՀԱՂՅ Սիսիանի մասնաճյուղում գործում է ուսուցման հեռակա ձևը:

Մասնաճյուղի հեռակա ուսուցման մասնագիտությունների ցանկը հետևյալն է.

- «Ագրարային արտադրության Էկոնոմիկա և կառավարում» I, II, III, IV, V կուրսեր

- «Ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում և աուդիտ» II, IV կուրսեր

- «Հողաշինարարություն և հողային կադաստր» I, II, III, IV, V կուրսեր

- «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» V կուրս

- «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն» I, II, IV, V կուրսեր

- «Ագրոնոմիա» II, III, IV, V կուրսեր

Մասնաճյուղի հեռակա ուսուցման համակարգում 31.12.2013թ. դրությամբ առկա է 261 ուսանող, որից 242-ը գործող ուսանողներն են, իսկ 19 ուսանողներ գտնվում են ակադեմիական արձակուրդում (աղյուսակ 8):

Տարբեր պատճառներով մասնաճյուղից ազատվել և հեռացվել են 19 ուսանողներ:

Հաշվետու տարվա ընթացքում մասնաճյուղն ունեցել է 48 շրջանավարտ, իսկ առաջին կուրս ընդունվել է 39 դիմորդ: Նախորդ տարվա համեմատությամբ ընդունելությունը նվազել է 20%-ով:

2009թ.-ից մասնաճյուղում գործում են մասնագիտական առարկաների հետևյալ 4 բաժինները.

- «Բնագիտական-կենսաբանական մասնագիտական առարկաներ»

- «Ագրոկենսաբանական և տեխնոլոգիական մասնագիտական առարկաներ»

- «Ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական մասնագիտական առարկաներ»

- «Հումանիտար և տնտեսագիտական մասնագիտական առարկաներ»:

2012-2013 ուս. տարում մասնաճյուղի հեռակա ուսուցման համակարգում 4 բաժինների ուսումնական ծանրաբեռնվածությունը կազմել է 9791 ժամ, որից I կուրսեր՝ 1894 ժամ, II կուրսեր՝ 1328 ժամ, III կուրսեր՝ 1875 ժամ, IV կուրսեր՝ 2399 ժամ, V կուրսեր՝ 2295 ժամ:

2012-2013 ուս. տարում հեռակա ուսուցման համակարգում ուսման բացարձակ առաջադիմությունը կազմել է 95.5 %:

ՀԱՎՅ Սիսիանի մասնաճյուղում սովորող ուսանողների թվաքանակի և շարժի վերաբերյալ (2013 թ.)

Աղյուսակ 8

Ր/Ր	Ցուցանիշները	Հեռակա ուսուցում
1	Ուսանողների թվաքանակը 01.01.2013 թ.	283
2	Ընդունելությունը առաջին կուրս	39
3	Փոխադրվել են մասնաճյուղից ՀԱՎՅ-ի հեռակա ուսուցման դեպարտամենտ	1
4	Փոխադրվել են այլ բուհերից, քոլեջից	0
5	Փոխադրվել են ՀԱՎՅ-ի ներսում`ցերեկային ուսուցումից հեռակա ուսուցում ((մասնաճ-ում)	0
6	Վերականգնվել են նախկին ուսանողները	2
7	Փոխադրվել են այլ բուհեր	0
8	Փոխադրվել են մասնաճյուղ ՀԱՎՅ-ի հեռակա ուսուցման դեպարտամենտից	2
9	Փոխադրվել են մասնաճյուղ ՀԱՎՅ-ի ցերեկային ուսուցման համակարգից	3
10	Փոխադրվել են ՀԱՎՅ-ի ներսում` հեռակա ուսուցումից ցերեկային ուսուցում (մասնաճ-ում)	0
11	Շրջանավարտների քանակը	48
12	Յեռացվել և ազատվել են համալսարանից	19
13	Գտնվում են ակադեմիական արձակուրդում, զին.ծառ. կապակցությամբ 01.01.2013 թ.-ից	10
14	Գտնվում են ակադեմ. արձակուրդ. առողջական վիճակի պատճ և այլն 01.01.2013 թ.-ից	0
15	Գործող ուսանողների թիվը 01.01.2014 թ.	242
16	Ուսանողների թիվը 01.01.2014 թ.	261
17	Գտնվում են ակադեմիական արձակուրդում, զին.ծառ. կապակցությամբ	19
18	Գտնվում են ակադեմիական արձ, առողջական վիճակի պատճառով և այլն	0
19	Օգտվել են վարձավճարի գեղչից	4
20	Գերազանց և լավ գնահատականներով սովորում են	55
21	Ազատվել են վարձավճարից օրենսդր. սահմ. կարգով	4

2012-2013 ուս. տարվա առաջին կանչի սկզբին, բոլոր կուրսերում դասավանդող դասախոսների և ասիստենտների մասնակցությամբ, տեղի են ունեցել հանդիպումներ, որոնց ընթացքում ուսանողները տեղեկացվել են ինքնուրույն և անհատական աշխատանքների, ինչպես նաև կուրսային նախագծերի և աշխատանքների կատարման վերաբերյալ:

Մասնաճյուղում գործող մասնագիտական առարկաների չորս բաժիններն ունեն բաժնի նիստով հաստատված խորհրդատվությունների անցկացման գրաֆիկ, որի կատարումը վերահսկվում է ուսումնական մասի կողմից:

Կրեդիտային համակարգով փորձնական գնահատումը կիրառվում է «Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում» մասնագիտությամբ 2011-

2012 ուս. տարվանից: Ուսումնական պարապմունքների վերահսկողության համար պարբերաբար անցկացվել են ստուգումներ դասահաճախումների վերաբերյալ, որի արդյունքները քննարկվել են մասնաճյուղի չորս բաժինների և տնօրինության խորհրդի նիստերում: Այդ առումով արդյունքները գոհացուցիչ են «Ագրարային արտադրության Էկոնոմիկա և կառավարում» մասնագիտության առաջին, երկրորդ, չորրորդ և հինգերորդ կուրսերում, «Ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում և աուդիտ» մասնագիտության առաջին կուրսում, «Ագրոնոմիա» մասնագիտության առաջին կուրսում, «Հողաշինարարություն և հողային կադաստր» մասնագիտության երրորդ կուրսում, «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն» մասնագիտության առաջին և երրորդ կուրսերում: Ընդհանուր առմամբ 2012-2013 ուս. տարում, ինչպես նաև 2013-14 ուս. տարվա առաջին կիսամյակում, մասնաճյուղում դիտվել է բարձր հաճախելիություն՝ ամենօրյա հետևողական աշխատանքի շնորհիվ:

Դասաճախողումներ քիչ են գրանցվել, քանի որ ուսումնական մասի կողմից ամենօրյա վերահսկողություն է կատարվել դասացուցակով սահմանված ուսումնական պարապմունքների նկատմամբ: Եղած դասաճախողումներն էլ լրացվել են սահմանված կարգով:

Ուշադրության կենտրոնում է պահվել ուսումնական բազան՝ լաբորատոր սարքավորումներով և դիդակտիկ նյութերով ապահովելու, ուսուցման որակը բարելավելու բոլոր հիմնահարցերը:

Տնօրինության և գիտական խորհրդի ուշադրության կենտրոնում է եղել մասնաճյուղի լաբորատորիայի կահավորումը և նյութատեխնիկական բազայով ապահովումը:

ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղի և «Վորլդ Վիժն Հայաստան» ՄԲԿ Սիսիանի տարածքային զարգացման ծրագրի հետ համատեղ ս/թ հուլիս-սեպտեմբեր ամիսներին իրականացվել են «Գյուղատնտեսություն և բիզնես» թեմայով դասընթացներ, որին մասնակցել են մասնաճյուղի ուսանողներ: Այս համագործակցության արդյունքում մասնաճյուղը նվիրատվություն է ստացել Էլեկտրոնային գրատախտակ և պրոյեկտոր, որոնք կնպաստեն ավելի որակյալ և մատչելի դասախոսությունների կազմակերպմանը մայր բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից:

Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերին համընթաց մասնաճյուղում քայլեր են կատարվում նաև առանձին թեմաներով գիտական

հետազոտությունների իրականացման ուղղությամբ: Կատարվում են հետազոտական աշխատանքներ, որոնք հիմնականում ուղղված են Սյունիքի մարզի և հատկապես Սիսիանի տարածաշրջանի գյուղացիական տնտեսություններում առաջավոր փորձի տեղայնացմանը, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը, արտադրության արդյունավետության բարձրացմանը և որ կարևորն է շրջական միջավայրի պահպանության խնդիրներին:

2012-2013 ուս. արվա ընթացքում, ինչպես 2013-2014 ուս. տարվա առաջին կիսամյակում ուսումնական գործընթացի նորմալ կազմակերպման նպատակով «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն» մասնագիտության ուսանողները լաբորատոր-գործնական պարապմունքներն անցկացրել են ՀԱԱՀ-ի համապատասխան ամբիոնների լաբորատորիաներում: Որոշ առարկաների գծով կազմակերպվել են լաբորատոր պարապմունքներ Սիսիանում գործող համապատասխան կազմակերպություններում, որոնց հետ նախապես կնքվել են պայմանագրեր:

Արտադրական պրակտիկայի ղեկավարները պարբերաբար այցելել են պրակտիկաների անցկացման համար համապատասխան կազմակերպություններ և իրենց խորհուրդներով օգնել են ուսանողներին՝ հաշվետվությունները և ծրագրերը կազմելու համար: Մասնաճյուղը որոշել է հետագայում ընդլայնել փորձուսուցման օբյեկտների թիվը, ընդլայնել և ժամանակին կնքել համապատասխան պայմանագրեր: 4-րդ կուրսերի արտադրական պրակտիկաները կանցկացվեն 2014թ. գարնանը՝ ըստ ժամանակացույցի:

Մասնաճյուղի դասախոսական կազմը բաղկացած է 51 ասիստենտներից և դասախոսներից (ներառյալ մայր բուհից հրավիրված 14 դասախոսներ), որոնցից 3-ը՝ դոկտոր-պրոֆեսորներ են, 12-ը՝ գիտության թեկնածուներ, որոնց մեծ մասը դոցենտներ են: Մեր ուշադրության կենտրոնում է սեփական կադրերով ապահովվածության հարցը: Մայր բուհի գիտական խորհրդի որոշումով մասնաճյուղի 2 ասիստենտ ՀԱԱՀ-ի համապատասխան ամբիոններում հրամանագրված են որպես հայցորդներ:

2013թ. մասնաճյուղի 5 մասնագիտությունների ավարտական կուրսերում սովորում էին 53 ուսանող, որոնցից 48-ը հանձնել են պետական քննությունները: «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» մասնագիտությամբ թույլատրվել է 5 ուսանող, «Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում» մասնագիտությամբ՝ 12 ուսանող, «Հողաշինարարություն և հողային կադաստր»

մասնագիտությամբ՝ 14 ուսանող, «Ագրոնոմիա» մասնագիտությամբ՝ 13 ուսանող, «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն» մասնագիտությամբ՝ 9 ուսանող: Պետական քննություններին և դիպլոմային աշխատանքների պաշտպանությանը մասնակցած բոլոր ուսանողները ստացել են դրական գնահատականներ և համապատասխան որակավորում:

Հաշվետու տարում մասնաճյուղ դիմել են 45 դիմորդ, որոնցից դրական գնահատականներ են ստացել 39 դիմորդ: Արդյունքում ձևավորվել են 3 մասնագիտությամբ խմբեր՝ «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն»՝ 14 ուսանող, «Հողաշինարարություն և հողային կադաստր»՝ 12 ուսանող, «Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում»՝ 13 ուսանող:

2013թ. ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղում տնտեսական գծով իրականացվել են մի շարք աշխատանքներ, որոնց շնորհիվ բարելավվել են աշխատանքային և ուսումնական գործընթացների, ինչպես նաև գույքի պահպանման պայմանները:

Գրադարան-ընթերցասրահում կատարվել են վերանորոգման աշխատանքներ, հին պատուհանները փոխարինվել են նոր, մետաղապլաստե պատուհաններով: Համալրվել է նոր գույքով (կլոր սեղան, գրապահարան և այլն):

Համակարգչային լսարանը համալրվել է նոր գույքով՝ էլեկտրոնային գրատախտակ և պրոյեկտոր:

2.4. ՀԱԱՀ ԵՐԱԿԻ Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՈՒԵԶ

«Ապրանքագիտություն» (միջնակարգ ընդհանուր կրթության հիմքով) II և III կուրսեր

Առկա ուսուցման համակարգում 2013թ. հունվարի դրությամբ սովորել է 127 ուսանող, որից 77-ը անվճար համակարգում, իսկ հեռակա ուսուցման համակարգում 2013 հունվարի դրությամբ սովորել է 38 ուսանող:

Առկա ուսուցման համակարգում հաշվետու ժամանակահատվածում վերականգնվել է 8 ուսանող, որից 4-ը անվճար համակարգի ուսանողներ են, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 3 ուսանող, առկա համակարգից հեռացվել են 24 ուսանող, որից 12-ը անվճար համակարգի ուսանողներ են, իսկ հեռակա ուսուցման համակարգից՝ 6 ուսանող:

Քոլեջը ունեցել է առկա բաժնում 74 դիմորդ, որից 53-ը անվճար համակարգի, իսկ հեռակա բաժնում 6 դիմորդ: 2013թ. քոլեջը ունեցել է 34 շրջանավարտ, որից 24-ը անվճար համակարգի ուսանողներ են, իսկ հեռակա բաժնում 20 ուսանող:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՁԵՆՆԱՐԿՎԱԾ ՀԱԿԱԿՈՈՒՊՅԻՈՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում 2009-2013 թվականներին պլանավորվել և բարձրագույն կրթության ոլորտում ներդրվել են համակողմանի բազմաբնույթ միջոցառումներ, որոնք միտված են կոռուպցիոն երևույթների և ռիսկերի նվազեցմանը, սուբյեկտիվ երևույթների կանխարգելմանը, կրթության որակի բարելավմանը, կառավարման արդյունավետության բարձրացմանը, հրապարակայնության և թափանցիկության ապահովմանը:

- Այս տեսանկյունից կարևոր խնդիր է համարվում համալսարանում կրթության ոլորտի կանոնակարգերի, ընթացակարգերի վերանայումը, կոռուպցիոն ռիսկերի գնահատման և դրսևորման կանխարգելման տեսանկյունից: Հաշվետու ժամանակահատվածում վերանայվել են համալսարանում կրթության կազմակերպման և իրականացման վերաբերյալ կանոնակարգերը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության համապատասխան իրավական և նորմատիվային ակտերը, ինչպես նաև ուսանողության և այլ շահառուների (ծնողների, գործատուների) առաջարկությունները:

- Կրթության ոլորտի թափանցիկության ապահովման նպատակով համալսարանում 2010 թվականին ստեղծվել է տեղեկատվական տեխնոլոգիա-ների կենտրոնը և համալսարանի կայքը (anau.am), որտեղ տեղադրված են համալսարանի գործունեությանը վերաբերվող բոլոր կարգերը, որոնցում մանրամասն լուսաբանված են ուսանողների իրավունքները և պարտականությունները, ինչը էապես բարձրացրել է համալսարանում հրապարակայնության և վերահսկողության արդյունավետությունը: Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնը իր մեջ ներառում է՝ գիտական գրադարանը, տեղեկատվական համակարգերի կառավարման բաժինը, տեղեկատվական համակարգերի սպասարկման բաժինը, տեղեկատվական տեխնոլոգիաների գիտելիքի բաժինը, ինչպես նաև էլեկտրոնային ուսուցման և ինտերնետ կապի համակարգչային կաբինետները:

Համալսարանի ուսանողները ունեն ռեկտորի հետ ազատ շփվելու լիակատար հնարավորություն:

Թափանցիկության և հրապարակայնության կարևոր գործոններից է բուհի հոգաբարձուների խորհրդում ուսանողության, ՀՀ ԿԳ նախարարության և ՀՀ կառավարության կողմից նշանակված ներկայացուցիչների ներգրավվածությունը:

- Համալսարանի համար առավել կարևորվում է թափանցիկության ապահովումը քննությունների ու գիտելիքների ատեստավորման ու գնահատման տարբեր մակարդակներում և օբյեկտիվության ապահովումը: Այս նպատակով համալսարանում մշակվել և ներդրվել է ուսանողների գիտելիքների ընթացիկ ստուգման, ստուգարքների և քննությունների անցկացման և գնահատման կանոնակարգ:

Բուհում ընդունված և ներդրված հատուկ կարգ, որի համաձայն կիսամյակային ամփոփիչ բոլոր քննությունները անխտիր կազմակերպվում են գրավոր, ռեկտորատի, դեկանատի, կրթության որակի վերահսկողության բաժնի, ամբիոնի վարիչի և դասախոսի մասնակցությամբ: Բոլոր գրավոր աշխատանքները ստորագրվում են հանձնաժողովի պատասխանատու անդամի կողմից և տրամադրվում է ամբիոնին ստուգման: Ուսանողների իրավունքների պաշտպանության և բողոքարկման հնարավորության ընձեռման տեսանկյունից, իրականացվում են հետևյալ աշխատանքները, գրավոր քննության արդյունքները անմիջապես տեղեկագիր չի անցկացվում, այն քննարկվում է տվյալ խմբի (հոսքի, կուրսի) ուսանողների հետ, բոլոր ուսանողների ներկայությամբ, քննարկվում են բողոքները (առկայության դեպքում) որից հետո արդյունքները գրանցվում են համապատասխան տեղեկագրում: Այս մեթոդի ներդրումը խիստ հավանության է արժանացել ուսանողության շրջանում: 2010-2011 և 2011-2012 ուստարիների ընթացքում նույն սկզբունքը ներդրվել է հեռական ուսուցման համակարգում, որտեղ ստուգողական, կուրսային աշխատանքների ընդունումը և սեսիոն քննությունները իրականացվում է հանձնաժողովների ներկայությամբ: Սկսած 2011-2012 ուստարվանից արմատապես վերանայվել է ուսանողների ավարտական պետական ատեստավորման աշխատանքները: Բոլոր մասնագիտությունների գծով պետական ատեստավորման հանձնաժողովների անդամների 50%-ից ավելին արտադրության, վերամշակող կազմակերպությունների, բանկային, ապահովագրական, ֆերմերային տնտեսությունների և համապատասխան ոլորտների գերատեսչություններից ներգրավված մասնագետներ են, ովքեր կարևոր դերակատարություն ունեն ոչ միայն ավարտական ատեստավորման աշխատանքների հրապակայնության, գիտելիքների գնահատման գործընթացում, այլ նաև իրենց առաջարկություններով նպաստում են առարկաների ծրագրերի բարելավման, կիրառական հմտությունների ձեռք բերման և ընդհանրապես կրթության որակի ապահովման առաջընթացին: Այս համակարգի դրական երևույթներից է նաև այն, որ տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչները շահագրգիռ են լավագույն

շրջանավարտներին ընտրելու և իրենց մոտ աշխատանքի ընդունելու, ինչպես նաև համալսարանի հետ ակտիվ համագործակցելու տեսանկյունից:

Սկսած 2011-2012 ուստարվա երկրորդ կիսամյակից պետական ատեստավորման ողջ գործընթացը ձայնագրվում է, որը հնարավորություն է ընձեռում ուսանողներին բողոքարկելու գնահատման արդյունքները:

- Ուսանողների գիտելիքների գնահատման ողջ գործընթացում կոռուպցիոն դրսևորման երևույթների կանխարգելման լավագույն օրինակներից մեկը, որը համալսարանը ներդնում է սկսած 2009 թվականից, դա գնահատման բազմագործոնային համակարգն է: Այս համակարգի ներդրումը նվազեցնում է դասախոսի դերը ամփոփիչ քննության /գիտելիքների ամփոփիչ ստուգումների/ ժամանակ, քանի որ ուսանողը ամբողջ կիսամյակի ընթացքում կուտակում է միավորներ, իսկ գիտելիքների ամփոփիչ ստուգումը ընդամենը մի բաղադրիչ է:

- Համալսարանում ապահովված է կրթական բարեփոխումների հրապարակայնությունը, թափանցիկությունը և հասանելիությունը բոլոր ուսանողներին: Կանոնակարգերը կամ դրանց հիմնական դրույթները իրենց արտացոլումն են գտնում համալսարանի կայքում, «Հասկ» թերթում, ուսանողների համար հրատարակվող բուկլետներում, կազմակերպվող սեմինարներում:

- Կոռուպցիոն ռիսկերի բացահայտման և կանխարգելման առավել արդյունավետ մեթոդը, որը վերջին տարիներին սիստեմատիկ կիրառվում է համալսարանում, դա յուրաքանչյուր կիսամյակում ռեկտորի պարբերաբար հանդիպումներն են ուսանողական խորհրդի և բոլոր կուրսերի ուսանողների, անրաժեշտության դեպքում նաև ծնողների հետ: Այս հանդիպումներում բացահայտված բոլոր թերությունները, որոնք ուսանողները ներկայացնում են ռեկտորին շատ ազատ և անկաշկանդ, անմիջապես, օպերատիվ քննարկվում են ռեկտորատի նիստերում և ձեռնարկվում անհրաժեշտ միջոցառումներ սկսած սանիտարա-հիգիենիկ պայմաններից մինչև կրթության որակի բարելավման և ապահովման խնդիրները, և տարբեր տիպի դրսևորումները, այդ թվում նաև կոռուպցիոն ռիսկերը:

- Հակակոռուպցիոն միջոցառումների շարքին են պատկանում վերջին տարիներին համալսարանում ներդրված կրթության շարունակության ապահովման գործընթացում գիտելիքների ստուգման (քննությունների) բաղադրիչի վերացումը, ինչպես օրինակ՝ միջնակարգ մասնագիտական կրթության ծրագիրը բարձր գնահատականներով ավարտած շրջանավարտների կրթության շարունակումը

բակալավրիատում, բակալավրիատուրայի շրջանավարտների ընդունելությունը մագիստրատուրայում և երկրորդ մասնագիտության ձեռքբերման հնարավորությունները նախորդ կրթության դիպլոմի միջուկի գնահատականների արդյունքներով: Թվարկած բոլոր կրթական հաջորդական մակարդակների անցումը իրականացվում է դրան նախորդող կրթական ծրագրի ընթացքում ձեռք բերած գիտելիքների միջին ցուցանիշների հիման վրա, մրցութային կարգով, ըստ սահմանված տեղերի և կարգի, որը գերծ է կոռուպցիոն ռիսկից:

- Ակնհայտ է, որ կրթական համակարգում կոռուպցիոն ռիսկերը հիմնականում առաջանում են այն ուսանողների (կամ նրանց հովանավորները) մոտ, ովքեր վատ են մասնակցում ուսումնական գործընթացին: Նման ռիսկը բացառելու կամ հիմնականում մեղմելու նպատակով համալսարանում մշակվել է կանոնակարգ և ներդրվել է ուսանողների հաճախումների խիստ վերահսկողություն: Համալսարանի ուսումնամեթոդական կենտրոնում ստեծված է աշխատանքային հատուկ խումբ, որը յուրաքանչյուր օր և յուրաքանչյուր ժամ ստուգում է ուսումնական պարապմունքների կայացման, ուսանողների հաճախումների վիճակը ամբողջ համալսարանում և յուրաքանչյուր օրվա ընթացքում համալսարանի ղեկավարությունը ստանում է բոլոր տվյալները հաճախումների վերաբերյալ: Ստացված արդյունքների վերլուծության արդյունքում ձեռնարկվում են օպերատիվ միջոցառումներ համապատասխան ֆակուլտետների, ամբիոնների և դասախոսների ու ուսանողների հետ: Անհրաժեշտության դեպքում ֆակուլտետների ղեկանները, իսկ առանձին դեպքերում համալսարանի ռեկտորը կազմակերպում են հանդիպումներ սիստեմատիկ բացակայող ուսանողների ծնողների հետ: Ուսանողների հաճախումների հարցը մշտապես գտնվում է համալսարանի ռեկտորատի ուշադրության կենտրոնում, յուրաքանչյուր ամիս քննարկվում է նախորդ ամսվա հաճախումների արդյունքները և ձեռնարկվում անհրաժեշտ միջոցառումներ: Համալսարանում ներդրված նման համակողմանի աշխատանքների շնորհիվ ուսանողների հաճախելիության մակարդակը կազմում է 90-93%-ի: Նման արդյունքների համալսարանը հասել է ուսանողական խորհրդի և ուսանողության հետ սիստեմատիկ, հետևողական բաց և հրապարակային աշխատանքների շնորհիվ, բայց և այնպես այս գործընթացը առավել բարելավման կարիք ունի, մասնավորապես ուսանողության շրջանում ինքնագիտակցության մակարդակի բարձրացման տեսանկյունից:

- Համալսարանում ուսանողների ներքին և արտաքին շարժունությունը ապահովելու և տարբեր տեսակի ռիսկերը բացառելու նպատակով ստեղծված են հանձնաժողովներ: Մասնավորապես «Էռասմուս-Մունդուս», «Ագրարային մենեջմենտ» ծրագրերի շրջանակներում համալսարանը համագործակցում է Հունաստանի, Գերմանիայի, Պորտուգալիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Հոլանդիայի, Եստոնիայի, Լիտվայի և այլ երկրների ագրարային համալսարանների հետ, որի արդյունքում իրականացվում է ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների և դասախոսների փոխադարձ շարժունություն: Մրցութային կարգով նման գործընթացի իրականացման և շարժունությանը մասնակցող երիտասարդության հետ համակողմանի աշխատանքների արդյունքում, ծրագրերի արտասահմանյան ղեկավարները բազմիցս նշել են ագրարային համալսարանում ստեղծված նպաստավոր պայմանները, թեկնածուների օբյեկտիվ ընտրությունը և ծրագրերի պատշաճ իրականացումը ու հրապարակայնության ապահովումը: Բոլոր ծրագրերի վերաբերյալ տեղեկությունը տանրածվում է համալսարանի կայքի, «Հասկ» թերթի և հայտարարությունների միջոցով:

- ՀՀ կրթության և գիտության նախարարության համապատասխան կարգի և հանձնարարականի հիման վրա համալսարանում մշակվել և ներդրվել են ուսումնական տարվա առաջադիմության արդյունքով ուսանողների շրջափոխման գործընթացը: Այս կարգը համալսարանում ներդրված է շուրջ 7 տարի, որի համար համալսարանում ստեղծված է մանդատային հանձնաժողով, մշակված է կանոնակարգ, որը 2 անգամ վերանայվել և վերահրատարակվել է: Սույն կարգը տեղադրված է համալսարանի կայքում, հրատարակվել է «Հասկ» թերթում: Ուսանողների առաջադիմության արդյունքները բազմագործոնային համակարգով քննարկվում են բոլոր մասնագիտությունների 2-րդ և բարձր բոլոր կուրսերում, ուսանողական խորհրդում, մանդատային (շրջափոխման) հանձնաժողովում և ռեկտորատում: Վերջնական արդյունքները մասսայականացվում են ուսանողության շրջանում: Քննարկումները բաց են բոլոր ուսանողների համար և կոռուպցիոն ռիսկը այս գործընթացում բացառված է, դրա մասին են վկայում այն հանգամանքը, որ 6 տարիների յոթ տարիների ընթացքում շրջափոխման նկատմամբ որևէ բողոք չի արձանագրվել, իսկ եթե որևէ հարց ուսանողի կողմից առաջարկվում է, ապա օպերատիվ քննարկվում է և ըստ գործող կարգի տրվում է համապատասխան լուծում:

-Համալսարանում մշակված են անհրաժեշտ կանոնակարգեր դասախոս-սական կազմի ընտրության, նշանակման, առաջխաղացման և աշխատանքային հարաբերությունների կարգավորման թափանցիկության և հրապարակայնության օրինականությունն ապահովելու ուղղությամբ: Համալսարանում խիստ կարևորվում են պրոֆեսորադասախոսական կազմի բնականոն սերնդափոխության խնդիրները: Մի շարք ամբիոններում դասախոսների միջին տարիքը 60 և ավելի է, սահմանվում են ստաժոր-դասախոսի հաստիք: Այդ էր պատճառը, որ համալսարանում հիմնվեց «Ստաժորի» ինստիտուտ: Այս առումով որևէ ռիսկ բացառելու տեսանկյունից ամբիոնում և ֆակուլտետում քննարկվում և ռեկտորին է ներկայացվում մագիստրատուրան և ասպիրանտուրան հաջող ավարտած երիտասարդ մասնագետների թեկնածությունը ստաժորի տարակարգում ընդգրկելու համար, միաժամանակ ամբիոնը պարտավորվում է ստաժորի դասընթացը ավարտելուց հետո տվյալ երիտասարդին սահմանված կարգով ընդգրկել դասախոսական կազմում: պրոֆեսորադասախոսական կազմի համալրման նման եղանակի կիրառման արդյունքում վերջին տղարիներին ամբիոնները հիմնականում համալրվել են երիտասարդ դասախոսներով : Միայն վերջին 4 տարիների ընթացքում ամբիոնները համալրվել են 81 երիտասարդ դասախոսներով:

-Կոռուպցիոն դրսևորումների բացահայտմանը և կանխարգելման տեսանկյունից համալսարանում յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո կազմակերպվում է ուսանողների կողմից դասախոսների գնահատման անանուն հարցման աշխատանքները, որը իրականացվում է ուսումնամեթոդական կենտրոնի, համապատասխան ֆակուլտետի դեկանատի և ուսանողական խորհրդի անդամների մասնակցությամբ ըստ սահմանված կարգի և հարցաթերթիկի:

Հարցաթերթիկը բաղկացած է 2 բաժնից, յուրաքանչյուրը 6-ական հարցից: Ստացված արդյունքները մշակվում են ըստ դասախոսների, ամբիոնների և ֆակուլտետների: Դասախոսների գնահատումը կատարվում է 5 բալային սանդղակով: Այն դասախոսները, ովքեր ուսանողների կողմից գնահատվում են 3-ից ցածր միավորով, նրանց հետ տեղի է ունենում անհատական քննարկում ռեկտորի, պրոռեկտորի, ֆակուլտետի դեկանի կամ ամբիոնի վարիչի կողմից բացահայտելու այն թերությունները, որոնք նշել են ուսանողները և նախանշել միջոցառումները, որոնք պետք է նպաստեն թերությունների վերացմանը:

- Հակակոռուպցիոն աշխատանքները հրապարակային և թափանցիկ դարձնելու նպատակով 2011-2012 և 2012-2013 տարիների սեմինար պարապմունքներ է իրականացրել տարբեր կուրսերի ուսանողության շրջանում «Մարդու իրավունքների ինտեգրումը, հակակոռուպցիոն օրակարգ. մարտահրավերները, հնարավորություններն և կարողությունները» ծրագրով:

Սեմինարների նպատակն է.

- *Բարձրացնել իրազեկվածությունը և ծավալել քննարկումներ կոռուպցիայի մասին*

- *Ներգրավել ուսանողների թափանցիկության խթանման և կոռուպցիոն դեպքերի դիտարկման խնդիրներին,*

- *Խթանել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարման գործընթացին:*

Այդուհանդերձ, վերը իրականացված բոլոր աշխատանքները այս կարևոր խնդրի լուծման սկզբնական քայլերն են, որը պետք է ունենա շարունակական բնույթ: Հակակոռուպցիոն ծրագրի ամբողջ համատեքստում առավելագույնս կարևորվում է կրթության որակի ապահովման հիմնախնդիրները: Ներկայումս համալսարանը կրթության որակի գնահատման ու բարելավման համակարգում որոշիչ քայլեր է կատարում, ելնելով Բոլոնիայի գործընթացի և այն խնդիրներից, որոնք դրված են բարձրագույն կրթության համակարգի առջև:

Այս տեսանկյունից համալսարանը կարևորել է նախ և առաջ կրթական ոլորտի համապատասխան կառույցի և քաղաքականության մշակումը, ներառելով այն համալսարանի ռազմավարական ծրագրում:

Ակնհայտ է, որ համալսարանում իրականացվող կրթական բարեփոխումները, կրթական ծրագրերի մերձեցումը եվրոպական ընդհանուր չափանիշներին, կհանգեցնի համալսարանի միջազգային մրցակցության և գրավչության բարձրացմանը, պատրաստվող մասնագետների որակի բարելավմանը:

2009-2010 ուսումնական տարում համալսարանում ստեղծվել են կրթության որակի վերահսկման և ապահովման մշտական գործող ներբուհական կառույց ու հանձնաժողով:

Ներքին գնահատման առավել արդյունավետ եղանակների ներդրման՝ ինքնավերլուծության և ինքնագնահատման նպատակով մշակվել և ներդրվում են.

- 2009 թվականին գիտական խորհրդում հաստատվել է Կրթության որակի վերահսկման և ապահովման մշտական գործող հանձնախմբի ժամանակավոր կանոնակարգ (27.10.2009թ., արձ. N2):

- Մշակվել է ՀԱԱՀ-ի «Կրթության որակը և կառավարման ռազմավարությունը»:

-«Հայաստանի ազգային ագրարային համալսարանում կրթության որակի վերահսկման ապահովման» ուղեցույցը:

-«Ուսումնական գործընթացի որակի գնահատման ինտելեկտուալ համակարգը» ուղեցույցը:

-«Կրթության որակի վերահսկումը ՀԱԱՀ-ում» (համակարգվածությունը և հակասությունները):

-2013 թվականից գործում է նաև ուսանողների գնահատման բողոքարկման ընթացակարգը, որի համար հիմք են հանդիսացել ՀՀ ԿԳ նախարարության «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը»:

-«Որակի ներհամալսարանական վերահսկողության ու կառավարման մեթոդաբանությունը»:

-«Ուսուցման որակի մոնիտորինգի դիագրամայի» կառուցման մեթոդով ՀԱԱՀ-ում ինքնավերլուծության գործընթացի իրականացման ուղեցույց:

-«Ատեստավորման և կրթության որակի վերահսկողության անկախ համակարգը»:

-«Ուսումնական գործընթացի որակի վերահսկողություն և ապահովում» ժամանակավոր ուղեցույց:

-Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կրթության որակի վերահսկման և ապահովման հայեցակարգ (2010-2015 թթ.):

2012 թվականին համալսարանի կոլեկտիվը իրականացրել է գործունեության ինքնավերլուծությունը և հոկտեմբերի 2-ին ամբողջ փաթեթը (շուրջ 3500 էջ) ներկայացվել է ՀՀ մասնագիտական Կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամին: Նախատեսվում է մշակել կրթության որակի վերահսկման և կառավարման ներհամալսարանական ռազմավարություն:

2013թվականին համալսարանը ստացել է հավատարմագրման հանձնաժողովի դրական կարծիքը և առաջարկությունները ուսումնական գործընթացի վերաբերյալ և շարունակում է իրականացնել այդ փուլում բացթողումների վերացման ուղղությամբ:

Ինքնավերլուծության արդյունքների հիման վրա, ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող և դրանց մասնագիտությունների հավատարմագրման կարգի» համաձայն Հայաստանի ազգային ագրարային համալսարանը ձեռնամուխ կլինի այդ բարդ և պատասխանատու գործընթացին:

**4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ
(ուս. խորհուրդ)**

ՀԱԱՀ-ի ուսանողական խորհուրդը 2013թ. իր գործունեությունը իրականացրել է հետևյալ հիմնական ուղղություններով

- Ուսումնական,
- Գիտակրթական,
- Ուսումնադաստիրակչական:

Համալսարանի ուսանողական խորհուրդը ունի 25-տոկոսանոց ներկայացվածություն կառավարման բոլոր մարմիններում խորհուրդ, գիտական խորհուրդ, ֆակուլտետային գիտական խորհուրդներ:

Ուսանողական խորհրդի անդամները անմիջական և ակտիվ մասնակցություն են ունեցել ուսանողների շրջափոխման գործընթացին: Ֆակուլտետների դեկանատների և ուսումնական մասի ներկայացուցիչների հետ բոլոր կուրսերում ներկայացվել են շրջափոխման արդյունքները: Ներկայացված արդյունքները ամբողջությամբ ընդունվել են ուսանողների կողմից:

Ուսանողական խորհուրդը ակտիվ մասնակցություն է ունեցել ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցման և անվանական կրթաթոշակների նշանակման գործընթացին:

Ուսանողական խորհրդի ներկայացուցիչները ուսանողների հիմնախնդիրների բացահայտման և լուծման նպատակով հանդիպումներ են ունեցել ինչպես բոլոր կուրսերի, այնպես էլ ֆակուլտետների մակարդակով:

Համալսարանի ուսանողական խորհրդի գործունեության հիմնական ուղղություններից են ուսանողների իրավունքների և շահերի ներկայացումն ու պաշտպանությունը: Տարվա ընթացքում եղել են բազմաթիվ անհատ ուսանողներ, ենթախմբեր, ովքեր ներկայացրել են բազմաթիվ խնդիրներ՝ կապված ուսումնական գործընթացի,

քննությունների կազմակերպման, դասախոսությունների որակի բարելավման և դասախոսների հետ: Դրանք նույնպես ներկայացվել են ամբիոնների, ֆակուլտետների և համալսարանի ղեկավարությանը:

Ուսանողական խորհուրդը գիտական կենտրոնի և ուսանողական գիտական ընկերության հետ համատեղ կազմակերպել են ուսանողական ամենամյա 14-րդ գիտաժողովը: Առաջին փուլը կազմակերպվել է ամբիոններում, ապա ֆակուլտետներում: Վերջում կազմակերպվել է ուսանողական գիտաժողովի համալսարանական փուլը: ՈՒԳԸ-ի հետ իրականացվել են բազմաթիվ քննարկումներ, մասնագիտական օլիմպիադաներ, սեմինարներ, բանավեճ-քննարկումներ:

Համալսարանի ուսանողական խորհուրդը մեծ ուշադրություն է դարձրել ուսանողների ուսումնադաստիրակչական հարցերին: Տարվա ընթացքում իրականացվել են մշակութային, մարզական, ժամանցային, ճանաչողական, բնապահպանակն, առողջապահական և բազմաթիվ այլ միջոցառումներ ու ծրագրեր:

2013թ. միջոցառումները

– Հաշվետու տարում հունվար-փետրվար ամիսներին ուսանողական խորհրդի անդամները ուշադրության կենտրոնում են պահել կիսամյակային քննություններում անբավարար գնահատական ստացած ուսանողներին, աջակցել և իրենց օգնությունն են ցուցաբերել վերահանձնման փուլում դրական գնահատական ստանալու համար:

– Հունվար-փետրվար ամսվա առաջին կեսին ուսանողական խորհուրդը Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հետ միասին կազմակերպել է սոցիալապես անապահով, բարձր առաջադիմություն և բուհում հասարակական ակտիվություն ունեցող, սակայն վճարովի համակարգում սովորող 1-ին կուրսերի ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցման ծրագիրը, հնարավորինս շատ ընդգրկելով ագրարային համալսարանի ուսանողներին, որի արդյունքում համալսարանից 160 ուսանողներ դիմել են կրթաթոշակի մրցույթի համար, որոնցից 70 ուսանող ստացել է ուսման վարձի փոխհատուցում՝ 80000 (ութսուն հազար) ՀՀ դրամ գումար:

– 2013թ. փետրվարի 12-ին ՀԱԱՀ 420 լսարանում «Ես հայ եմ» նախագծի շրջանակներում տեղի է ունեցել սեմինար քննարկում մաշկային հիվանդությունների և ալերգիաների վերաբերյալ, սեմինարը վարեց մաշկաբան Գոհար Մովսիսյանը:

– Փետրվար ամսվա երկրորդ կեսին կազմակերպվել է ուսանողական խորհրդի նախագահի և ուսանողների հանդիպումներ, ինչպես կուրսերով, ենթախմբերով,

այնպես էլ անհատական կարգով, կիսամյակային քննությունների ընթացքում առաջացած խնդիրներին ծանոթանալու համար:

– Մարտի 7-ին Հայաստանի երիտասարդական հիմնադրամի աջակցությամբ կազմակերպվել է «Մայրության և գեղեցկության» տոնին նվիրված միջոցառում:

– Մարտի 13-ին և 14-ին ագրոնոմիական և պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետների թվով 15 ուսանողներ մասնակցել են ագրարային համալսարանի Նալբանդյան փորձակայանում գյուղատնտեսական աշխատանքներին:

– Մարտի 22-ից ապրիլի 8-ը համալսարանի 2013 թվականի զորակոչին ենթական շրջանավարտների հետ «Յետբուհական զինվորական ծառայություն անցնելու պայմանների և պահանջների վերաբերյալ» բացատրական աշխատանքներ անցկացնելու կապակցությամբ կազմակերպել ենք հանդիպումներ ՀՀ ՊՆ կադրերի և ռազմական կրթության վարչության անձնակազմի հետ:

– Մասնակցել ենք մարտի 23-ին և 24-ին համաքաղաքային շաբաթօրյակին:

– Հայաստանում «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամի հետ ստեղծվել է համագործակցություն, որի արդյունքում մարտի 20-ին, ապրիլի 9-ին և 17-ին կազմակերպվել է սեմինար՝ երիտասարդության շրջանակներում դոնորագրումը խրախուսելու նպատակով և համալսարանից թվով 75 ուսանողներ արդեն իսկ հանդիսանում են արյան դոնորներ:

– Ապրիլի 23-ին մասնակցել ենք ջահերով երթին:

– Մարտի 25-ից ապրիլի 23-ը ընկած ժամանակահատվածում իրականացվել է «Ուսանողական գարուն 2013» սպորտային, ինտելեկտուալ, մշակութային միջոցառումներ, որին մասնակցել են համալսարանի ավելի քան 350 ուսանողներ:

– ՀԱԱՀ 15 ուսանողներ ապրիլի 22-ից 24-ը ակտիվորեն մասնակցել են ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից կազմակերպված «Հայերենն իմ սրտում է» համահայկական երիտասարդական համաժողովին:

– Ապրիլի 24-ին կազմակերպվել է երթ դեպի Ծիծեռնակաբերդ, որից հետո եղել է այցելություն ցեղասպանության թանգարան:

– Մայիսի 9-ին Հայրենական մեծ պատերազմի և արցախյան ազատամարտի հաղթանակների կապակցությամբ կազմակերպվել է այցելություն Հաղթանակի զբոսայգի:

– ՀԱԱՀ ՏՏ կենտրոնի և գրադարանի հետ համատեղ ապրիլի 15-ից 25-ը կազմակերպել ենք «Գրադարան՝ այժմ նաև թվային» ուսուցողական սեմինար

Էլեկտրոնային դասացուցակից, Էլեկտրոնային գրադարանից օգտվելու հումտություններին ծանոթանալու համար:

– 2013թ. մայիսի 16-ին ուսանողական վարկեր ստանալու կարգի մասին տեղեկություններ ստանալու համար կազմակերպվել է հանդիպում Կոնվերս բանկ ՓԲԸ-ի ներկայացուցիչների հետ:

– Մայիսի 28-ին կազմակերպվել է այցելություն Սարդարապատի հուշահամալիր:

– 2013թ. հունիսի 4-ին «Դոկորներ» միջազգային օրվա կապակցությամբ ՀՊԱՀ ուսանողական խորհրդի ակտիվիստները մասնակցել են բարեգործական արյունատվության:

– Հունիսի 4-ից 7-ը ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը, գիտական կենտրոնի հետ համատեղ իրականացրել են ուսանողական 14-րդ գիտաժողովի ամփոփիչ հալսարանական նստաշրջանը

– Հաշվետու տարվա հունիսի 28-ից 30-ը կազմակերպվել է 70 ուսանողների ակտիվ հանգիստ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Չարթոնք հանգստյան տանը՝ 50% զեղչով:

– Հունիս-օգոստոս ամիսներին կազմակերպվել է էքսկուրսիաներ դեպի Հայաստանի պատմամշակութային կոթողներ, եկեղեցիներ, թանգարաններ և պատկերասրահներ:

– Հուլիսի 11-ից 13-ը ագրարային համալսարանի 24 ուսանողներ և մագիստրանտներ, ռեկտոր Թարվերդյանի գլխավորությամբ այցելել են Լեռնային Ղարաբաղի հանրապետություն, ծանոթանալու ԼՂՀ ագրոպարենային համակարգի խնդիրներին, որի ընթացքում տեղի է ունեցել պաշտոնական հանդիպում ԼՂՀ վարչապետ Ա. Հարությունյանի հետ, այնուհետև այցելություն ագրարային համալսարանի Շուշի քաղաքում կառուցվող մասնաճյուղ, ապա էքսկուրսիաներ Աղդամ, Ասկերան, Գանձասար:

– Օգոստոսի 12-ից 18-ը ագրարային համալսարանի ուսանողական ջոկատը Ծաղկաձորում մասնակցել է «Բազե-2013» համահայկական երիտասարդական հավաքին:

– Օգոստոսի 29-ին տեղի է ունեցել ուսանողական խորհրդի ֆակուլտետային ակտիվիստների հանդիպում ուսանողական խորհրդի նախագահության անդամների

հետ, սեպտեմբերի 1-ին առաջին կուրսեցիների ընդունելություն ճիշտ և պատշաճ կազմակերպելու համար:

– Հաշվետու տարվա սեպտեմբերի առաջին շաբաթում տեղի է ունեցել ուսանողական խորհրդի ֆակուլտետային նախագահների հանդիպումները առաջին կուրսեցիների հետ:

– Սեպտեմբեր ամսվա 2-րդ կեսին ուսանողական խորհուրդը ձևավորել է 5 ուսանող-մագիստրանտներից կազմված խումբ, ովքեր կրթության որակի վերահսկողության խմբի և ուսումնամեթոդական կենտրոնի հետ համատեղ իրականացրել է ուսանողների անհատական հաշվառման գործընթացի, ինչի օգնությամբ ուսանողական խորհրդի նախագահները պարբերաբար հանդիպումներ են ունեցել հաճախումների վատ ցուցանիշներ ունեցող ուսանողների հետ:

– Համալսարանի ուսանողական խորհուրդը սեպտեմբեր ամսին համագործակցելով «Դու միայնակ չես» նախաձեռնության խմբի հետ անապահով ընտանիքների ցուցաբերել է օգնություններ:

– Հաշվետու տարվա ընթացքում ուսանողական խորհուրդը մասնակցել է համաքաղաքային բոլոր շաբաթօրյակներին, ծառատունկներին, որոնցից հատկանշական են «Վալեքս» ընկերության և «Նիգ Ապարան» ՀԿ կողմից կազմակերպված ծառատունկները:

– Հոկտեմբերի 4-ին համալսարանի գիտական խորհրդի դահլիճում կազմակերպվել է հուշ-ցերեկույթ նվիրված հայ մեծանուն բանաստեղծ Պարույր Սևակին:

– Հոկտեմբերի 5-ին պարենամթերքի տեխնոլոգիաների ուսանողական խորհուրդը մասնակցել է Արենի համայնքում կազմակերպված գինու փառատոնին, այնուհետև այցելել են Պարույր Սևակի տուն թանգարան:

– Հաշվետու տարվա ընթացքում կազմակերպվել է ներֆակուլտետային 15 ինտելեկտուալ, 35 և ավելի սպորտային խաղ մրցույթներ, միջֆակուլտետային ավելի քան 25 սպորտային և ինտելեկտուալ առաջնություններ:

– Հոկտեմբերի 12-ին մեծ շուքով մասնակցել են Էրեբունի-Երևան տոնակատարություններին:

– Հաշվետու տարում պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի 2 ուսանողներ արժանացել են «Հայ ուսանողությանը» հիմնադրամի կրթաթոշակի:

– Կազմակերպվել են հանդիպումներ մշակույթի, սպորտի, գիտության և արտադրության ճանաչված գործիչների հետ:

– Տարվա ընթացքում պարբերաբար բացատրական աշխատանքներ են տարվել ցածր առաջադիմություն և վատ հաճախումներ ունեցող ուսանողների հետ:

– Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կազմակերպվել է հանդիպումներ 1-ին կուրսեցիներ հետ կուրսերում և ֆակուլտետներում, որի ընթացքում ուսանողներին հիմնականում բացատրվել են իրենց պարտականությունները և համալսարանի ներքին կարգապահական մի շարք կանոններ:

– Հոկտեմբերի 20-ին ուսխորհուրդը մասնակցել է ARMPRODEXP-2013 միջազգային մասնագիտացված ցուցահանդեսին:

– Կազմակերպվել է «Երիտասարդության ազատությունը և դրա սահմանափակումները» թեմայով բանավեճ:

– Սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին կազմակերպվել է ուսանողների (շաբաթական 50 ուսանող) այցելությունները պետական թատրոններ:

– Նոյեմբերի 11-ին կազմակերպվել է ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպված 14-րդ գիտաժողովի պարգևատրման արարողությունը:

– Ուսանողության միջազգային օրվա կապակցությամբ ուսանողական խորհրդի 15 անդամներ ներկա են գտնվել ՀՀ վարչապետ Տ. Խարզայանի և ՀՀ Կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանի կողմից կազմակերպված ընդունելությանը:

– Նոյեմբերի 12-ին համալսարանի ուսխորհուրդը ներկայացվել է «Հայացք ապագային» խորագրով հասարակական կազմակերպությունների և ուսանողական ինքնակառավարվող մարմինների էքսպո ցուցահանդեսին:

– Ագրարային համալսարանի 3 սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներ ուսանողության միջազգային օրվա կապակցությամբ ներկայացվել են «Արմենիա» բարեգործական հիմնադրամի կրթաթոշակի, յուրաքանչյուրը ստացել է 200.000 ՀՀ դրամ օգնություն:

– Հաշվետու տարվա ընթացքում պարբերաբար կազմակերպվել են այցելություններ ՀԱԱՀ հանրակացարան, ծանոթանալու հանրակացարանաբնակ ուսանողների խնդիրներին, և խնդիրների մասին զեկուցվել է համալսարանի ռեկտորատում:

– Շարունակվել է համագործակցությունը հանրապետության և արցախի պետական բուհերի ուսանողական կազմակերպությունների, Հայաստանի

երիտասարդական հիմնադրամի, Հայաստանի երիտասարդության ազգային խորհրդի, Հայաստանի ուսանողության ազգային ասոցիացիայի հետ:

– Նոյեմբերի 20-ին տեղի է ունեցել ուսանողների հանդիպում ռեկտոր Ա.Թարվերդյանի հետ:

– Նոյեմբերի 22-ին ՀԵՀ-ի հետ համատեղ իրականացվել է «Եղիր իրագել, և մի վախեցիր ՄԻԱՎ-ից» խորագրով միջոցառում:

– Դեկտեմբերի 2-ից 13-ը կազմակերպվել է միջֆակուլտետային ուսանողական սպորտային և ինտելեկտուալ խաղ մրցույթներ:

– Դեկտեմբերի 20-ին կազմակերպվել է ուսանողական խորհրդի հիմնադրման 20- ամյակին նվիրված հանդիսավոր նիստ:

– Դեկտեմբերի 25-ին կազմակերպվել է «Ոսկե հասկ» ամենամյա 7-րդ մրցանակաբաշխությունը:

– Հաշվետու տարվա ընթացքում ՀԱԱՀ ուսանողները արժանացել են տարբեր կրթաթոշակների

– Հայաստանի ազգային ագրարային համալսարանի անվանական կրթաթոշակառուները - 15 ուսանող:

– ԱՄՔՈՐ Հայաստանյան բարեգործական հասարակական կազմակերպության կողմից Ուսանողների ուսման վճարների փոխհատուցման ծրագրի շրջանակներում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կրթաթոշակառուները (ուսանողները ստացել են կրթաթոշակ ուսման վարձի տեսքով) -43 ուսանող:

– Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Թրփանճեան ընտանեկան հիմնադրամի և Ագեյան հիմնադրամի Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կրթաթոշակառուները (ուսանողները ստացել են կրթաթոշակ ուսման վարձի տեսքով) ՎՆ 12 ուսանող:

– «ՎԻՎԱՍԵԼ» ընկերության Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կրթաթոշակառուները (ուսանողները ստացել են կրթաթոշակ ուսման վարձի տեսքով) -18 ուսանող:

– Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կրթաթոշակառուներ (ուսանողները ստացել են կրթաթոշակ ուսման վարձի տեսքով) - 70 ուսանող:

– Համալսարանի կողմից ֆինանսական օգնություն ստացած ուսանողներ (ուսանողները ֆինանսական օգնությունը ստացել են ուսման վարձի տեսքով)- 15 ուսանող:

– «Արմենիա» բարեգործական հիմնադրամի կրթաթոշակառուներ ՎՆ 3 ուսանող:

– «Հայ ուսանողությանը» բարեգործական հիմնադրամի կրթաթոշակա-ռուներ - 2 ուսանող:

5. ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ, ՈՐԱԿԻ ԱՊԱՅՈՎՄԱՆ, ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ, ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐ

Բոլոնիայի գործընթացին համահունչ՝ բարձրագույն կրթության Եվրոպական տարածքին ինտեգրման քաղաքականությունը ագրարային համալսարանի համար շարունակում է մնալ միջազգային համագործակցությանը խթանող հիմնական գործընթացներից մեկը: Ակնհայտ է, որ համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի մերձեցումը Եվրոպական ընդհանուր չափանիշներին ու չափորոշիչներին կհանգեցնի համալսարանի միջազգային մրցունակության ու գրավչության բարձրացմանը և միաժամանակ կխթանի տարածաշրջանի երկրներից դեպի համալսարան արտասահմանյան ուսանողների ներհոսքին:

Բոլոնիայի գործընթացներին ինտեգրումը համալսարանին հնարավորություն է ընձեռում բարեփոխելու, վերակառուցելու և արդիականացնելու իր կրթական համակարգը՝ որակի ապահովման Եվրոպական չափանիշներին համապատասխան և այն ներդաշնակ ու համադրելի դարձնելու Եվրոպական կրթական համակարգին:

Կրթական բարեփոխումների անհրաժեշտությունը թելադրված է երկու հիմնական գործոններով՝ որակյալ կրթություն ապահովելու նպատակով համալսարանում կրթական գործընթացների իրականացման արդյունավետության բարձրացմամբ և Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում (ԵԲԿՏ) ուսումնառողների կրթական արդյունքների արժևորման, պաշտոնական ճանաչման և բուհից-բուհ նրանց շարժունությունը դյուրացնելու նպատակով՝ ակադեմիական կրեդիտների կուտակման ու փոխանցման Եվրոպական համակարգի հիմնումով:

Կրթական կրեդիտների վրա հիմնված ուսումնական գործընթացի կազմակերպումը, ծրագրային փոփոխություններին զուգահեռ, պահանջում է նաև ուսումնական գործընթացի կառավարման հետ կապված կառուցվածքային ու կազմակերպչական վերափոխումներ, որոնք թելադրված են կրեդիտային հենքով կառուցված կրթական ծրագրերի տրամաբանությամբ:

Բոլոնիայի գործընթացի վերջին զարգացումները շեշտադրում են համալսարանի ռազմավարության մեջ որակի մշակույթի ձևավորման ու զարգացման գործընթացներին առաջնային տեղ հատկացնելուն, որն անհրաժեշտ փոփոխություններ է ենթադրում կրթության որակի հետ առընչվող բոլոր ստորաբաժանումների գործառույթներում, ինչպես նաև ուժերի կենտրոնացում իրականացվող գործընթացների որակի ապահովման վրա:

Բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի ձևավորման ու հետագա զարգացման գործընթացներում մեծ տարածում է գտել որակի արտաքին գնահատումը, որի հիմնական նպատակն է համալսարանում կրթության որակի բարձրացումը, համալսարանում իրականացվող գործընթացների թափանցիկության ապահովումը:

Կրթության որակի ապահովման ու գնահատման և արտաքին հավատարմագրման համակարգում հիմնական դերը՝ հատկացվում է ինքնավերլուծության և ինքնագնահատման գործընթացներին՝ որպես համալսարանի գործունեության ապահովման և որակի բարձրացման կարևորագույն գործիքի:

«Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող միջին և բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ անկախ գերատեսչական ենթակայությունից և կազմակերպահրավական ձևից, պետք է անցնեն պետական հավատարմագրում, որն իրականացվում է երկու գործընթացներով՝ ենթակառուցվածքային (ինստիտուցիոնալ) հավատարմագրում և ըստ մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ ծրագրային հավատարմագրում:

Հավատարմագրումը մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց կողմից իրականացվող կրթական ծրագրերի արդյունավետության, որակի և ակադեմիական ազնվության ճանաչման գործընթաց է, որը միտված է համալսարանի նկատմամբ ապահովելու կրթական համայնքի և հասարակության վստահությունը:

Մասնագիտական կրթության հավատարմագրման հիմնական նպատակն է հավաստել համալսարանական հանրությանը, ուսանողներին, նրանց ծնողներին, գործատուներին և շահագրգիռ հասարակությանը, որ համալսարանում իրականացվող մասնագիտական կրթության որակը ճանաչելի է պետության կողմից:

Մասնագիտական կրթության ոլորտում պետական հավատարմագրման գործընթացն ունի մի շարք կարևոր գործառույթներ, որոնցից ամենակարևորը կրթական գործընթացի արդյունավետությանն ուղղված քայլերի խրախուսումն է: Հավատարմագրման գործընթացը պահանջում է, որ համալսարանը ինքնավերլուծության գործընթացի միջոցով մանրամասն ուսումնասիրի իր առաքելությունը, նպատակները, գործընթացներն ու ձեռքբերումները և բացահայտի իր ուժեղ ու թույլ կողմերը և արտաքին վտանգները:

Ինքնավերլուծությունը նպաստում է նաև համալսարանում որակի կառավարման ու ապահովման մշակույթի ձևավորմանը: Այն համալսարանի ողջ գործունեության շարունակական բարելավման և զարգացման հիմնական նախապայմաններից մեկն է:

Ենթակառուցվածքային և ծրագրային հավատարմագրման գործընթացներն իրականացվում են երեք հաջորդական փուլերով՝

- Ուսումնական հաստատության ինքնավերլուծություն,

- Անկախ փորձագետների խմբի կողմից համալսարանի արտաքին գնահատում,

- Ինքնավերլուծության և փորձաքննության արդյունքների հիման վրա Որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի «ՈԱԱԿ» հավատարմագրման խորհրդի կողմից դրական կամ բացասական եզրակացության մասին որոշման կայացում:

Ինքնավերլուծությունը համալսարանի և կրթական ծրագրերի վերաբերյալ բազմաբնույթ և տարբեր աղբյուրներից որակական ու քանակական տվյալների և տեղեկատվության հավաքագրման, վերանայման և օգտագործման համակարգային գործընթաց է, որն իրականացվում է համալսարանի կամ մասնագիտությունների կրթական ծրագրերի շրջանակներում՝ գնահատելու համալսարանի մատուցած կրթական ծառայությունների որակը և կրթական ծրագրերը:

Ինքնավերլուծությունը միտված է ուսանողների ուսումնառության բարելավմանը և ակադեմիական ու կրթական չափորոշիչների իրականացմանը, այն նաև նպաստում է համալսարանում որակի մշակույթի ձևավորմանը և միաժամանակ հանդիսանում է համալսարանի գործունեության բոլոր ոլորտների շարունակական բարելավման գործընթացի հիմնական բաղադրիչը:

Ինքնավերլուծության նպատակներն են՝

- *Բարձրագույն կրթության բարեփոխումների խթանումը,*

– Համալսարանում որակի բարելավումը և հաշվետվողականության ապահովումը,
– Համալսարանի գործունեության, ռազմավարական ուղղվածությունների, գործընթացների, ծառայությունների, կազմակերպական և ինտելեկտուալ միջավայրերի ու կրթական ծրագրերի գործունեության բարելավումը:

– 2012թ-ի ապրիլի 18-ին ԿԳ նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի և Հայաստանի պետական ագրարային համալսարանի միջև կնքվեց եռակողմ պայմանագիր համալսարանի փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրումը կազմակերպելու և իրականացնելու վերաբերյալ:

Միաժամանակ կազմվեց և հաստատվեց ագրարային համալսարանում հավատարմագրման գործընթացների իրականացման ժամանակացույցը:

ՈԱԱԿ-ի կողմից սահմանված և հոգեբարձուների խորհրդի կողմից հաստատված Ինքնավերլուծության Ձևաչափին համապատասխան 2012թ-ի ապրիլից մինչև սեպտեմբերը համալսարանում կազմակերպվեց և իրականացվեց ենթակառուցվածքային ինքնավերլուծություն և ներքին գնահատում, որն ընդգրկեց համալսարանի գործունեության գրեթե բոլոր ոլորտները:

Ինքնավերլուծության գործընթացի իրականացմանը մասնակցեցին համալսարանի գրեթե բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները, որոնք բարձր պատասխանատվությամբ և բարեխղճորեն օժանդակեցին ինչպես ինքնավերլուծության գործընթացին ընդհանրապես, այնպես էլ անհրաժեշտ փաստաթղթերի, տեղեկատվության և այլ անհրաժեշտ նյութերի տրամադրման գործում:

Ինքնավերլուծության գործընթացի իրականացման, վերլուծության մեթոդների ու մեխանիզմների լուսաբանման և այլ նպատկներով՝ ինքնավերլուծության ընթացքում Ուսումնամեթոդական կենտրոնի կողմից տարբեր ձևաչափերով կազմակերպվեց և իրականացվեց 100-ից ավելի սեմինար-խորհրդակցություններ:

Ինքնավերլուծության գործընթացը նախաձեռնելու համար կատարվեցին նպատակների և վերջնարդյունքների հստակեցում, ընտրվեցին չափման և գնահատման մեթոդաբանություն, գործիքներ և մեխանիզմներ, իրականացվեց տվյալների հավաքագրում և կատարվեց վերլուծություններ ու գնահատում:

Ինքնավերլուծության գործընթացն իրականացվեց ինքնավերլուծության հայտնի գործիքների ու մեխանիզմների միջոցով, որակական ու քանակական տվյալների համադրման մեթոդով, հետադարձ կապի մեխանիզմների միջոցով

ստացված տեղեկատվության, վիճակագրական տվյալների և կատարողականի ցուցիչների ու կրթական գործընթացի արդյունքների գնահատման միջոցով:

Ինքնավերլուծության գործընթացին զուգահեռ մշակվեցին Ինքնավերլուծության Ձևաչափի պահանջներից բխող, առաջնային կարևորություն ունեցող 40-ից ավելի փաստաթղթեր, որոնց ստեղծման անհրաժեշտությանը բխում էր նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012թ-ի մարտի 15 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթական համակարգի՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման գործընթացի ընդլայնման» ծրագրի ու ժամանակացույցի պահանջներից:

Մշակվեց և բոլոր ուսումնական ստորաբաժանումներին տրամադրվեց «Բարձրագույն կրթության ռազմավարական պլանավորման» մեթոդական ուղեցույցը:

«Եվրոընդլայնման» ծրագրի և ժամանակացույցի դրույթներին համապատասխան համալսարանի ռազմավարական պլանի մշակման հանձնաժողովի կողմից մշակվեց, հրատարակվեց և բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներին տրամադրվեց «Հայաստանի պետական ագրարային համալսարանի 2012-2017թթ. ռազմավարական պլանը» և «Հայաստանի պետական ագրարային համալսարանի 2012-2017թթ. և մինչև 2020թ-ի ռազմավարական ծրագիրը», որոնցում ներկայացված են ագրարային կրթության ներկա մարտահրավերները, համալսարանի առաքելությունն ու տեսլականը, կրթության զարգացման ազգային համատեքստը, կրթական, գիտական, խորհրդատվական, ֆինանսական, սոցիալական գործունեության և միջազգայնացման ռազմավարությունները, հիմնական նպատակներն ու խնդիրները:

Մշակվեցին և հաստատվեցին նաև հեռակա ուսուցման դեպարտամենտի, ցերեկային ուսուցման բոլոր ֆակուլտետների, Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի, համալսարանի պետական քոլեջի և համալսարանի վարժարանի 2012-2017թթ. զարգացման ռազմավարական հայեցակարգերը:

Ուսումնամեթոդական կենտրոնի կողմից մշակվեց և համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատվեց համալսարանի «Որակի ապահովման ձեռնարկը» և մասնագիտությունների կրթական ծրագրերի, որակի ապահովման, որակի վերահսկման ու աուդիտի, համալսարանի ֆինանսական գործունեության, տեղեկատվական միջավայրի կառավարման, միջազգային համագործակցության և այլ բնագա-

վառների գործունեությանը վերաբերվող շուրջ 40 փաստաթղթեր, որոնք վերաբերվում են համալսարանում իրականացվող տարբեր գործընթացների քաղաքականությանը, ընթացակարգերին, աշխատակարգերին և մեթոդաբանությանը:

Ինքնավերլուծության գործընթացը հնարավորություն տվեց քննադատաբար վերանայելու համալսարանում պլանավորված գործողությունները և իրականացվող գործընթացները, գնահատելու ստացված արդյունքները և հայտնաբերելու առկա խնդիրներն ու բարելավման ենթակա ոլորտները:

Ինքնավերլուծության Ձևաչափի բոլոր տասը ոլորտների վերաբերյալ SWOT վերլուծության միջոցով իրականացվեց համալսարանի ներքին՝ ուժեղ և թույլ կողմերի, և արտաքին հնարավորությունների ու վտանգների ուսումնասիրություն, որն օգնելու է համալսարանին ճիշտ պլանավորելու հետագա անելիքները:

Ինքնավերլուծության Ձևաչափին համապատասխան՝ ըստ սահմանված չափանիշների ու չափորոշիչների համալսարանում ինքնավերլուծությունը իրականացվեց սահմանված ժամանակացույցին համապատասխան և ինքնավերլուծության փաստաթղթերը՝ 3700 էջ ընդհանուր ծավալով, 2012թ.-ի հոկտեմբերի 2-ին պետական բուհերից առաջինը ներկայացվեցին ՈԱԱԿ:

Հավատարմագրման գործընթացի շրջանակներում, հաստատված ժամանակացույցին համապատասխան դեկտեմբերի 3-ից 7-ը տեղի ունեցավ արտաքին փորձագիտական խմբի այց համալսարան, որի հիմնական նպատակներն էին՝ պարզել ինքնավերլուծության մեջ նշված փաստերի և տեղեկատվության հավաստիությունը, հանդիպումների ու հարցումների միջոցով ձեռք բերել լրացուցիչ տեղեկատվություն, ինչպես նաև ուսումնասիրել իրականացվող կրթական գործընթացները և լրացուցիչ այլ փաստաթղթեր:

Փորձագիտական խմբի կազմում ընդգրկված էին տեղական և միջազգային փորձագետներ հայաստանյան տարբեր բուհերից և միջազգային կառույցներից:

Համալսարանի կողմից փորձագիտական խմբի այցը կազմակերպվեց և իրականացվեց պատշաճ մակարդակով՝ սահմանված պահանջներին համապատասխան:

2013թ-ի փետրվարին համալսարանին ներկայացվեց փորձագիտական խմբի զեկույցի նախնական տարբերակը, իսկ 2013թ-ի դեկտեմբերին համալսարանի՝ գործունեության հիմնական տասը ոլորտների վերաբերյալ փորձագիտական խմբի վերջնական եզրակացությունը:

Համալսարանի ենթակառուցվածքային կարողությունները հնքնավերլուծության բոլոր տասը չափանիշների վերաբերյալ գնահատվել է առավելապես դրական շեշտադրումներով և համաձայն փորձագիտական խմբի վերջնական եզրակացության՝ ողջամիտ ժամանակահատվածում, անհրաժեշտ բարելավումներ իրականացնելու դեպքում իրատեսական է, որ համալսարանի գործունեությունը կհամապատասխանի սահմանված չափանիշների բոլոր պահանջներին:

հնքնավերլուծության արդյունքների ուսումնասիրման և փորձագիտական այցի արդյունքները ներառող ՈԱԱԿ-ի եզրակացությունը և փորձագիտական խմբի վերջնական զեկույցը ներկայացված են Հավատարմագրման հանձնաժողովին՝ վերջնական որոշում, կայացնելու համար:

հնքնավերլուծության և ինքնագնահատման գործընթացները համարվելով որպես որակի ապահովման առանցքային բաղադրիչներ, առաջիկայում անհրաժեշտ է համալսարանում ստեղծել հստակ գործող գնահատման համակարգ ու ներդնել ինքնագնահատման կայուն և արդյունավետ մեխանիզմներ՝ ձևավորելով մի մշակույթ, որն արժևորում է տրամադրվող կրթական, խորհրդատվական, սոցիալական և այլ ծառայությունների մատուցման որակը:

Հավատարմագրման գործընթացում ինքնավերլուծության զեկույցի ներկայացումը որակի մշակույթի ձևավորման առաջին քայլն է: Դեռևս շատ անելիքներ կան ինքնավերլուծության ձևաչափով սահմանված տարբեր գործառույթներին վերաբերվող քաղաքականությունների, ընթացակարգերի, աշխատակարգերի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի մշակման ու հաստատման, համալսարանական հանրության շրջանում ինքնավերլուծության գործընթացի ու դրա արդյունքների մասսայականացման, ինքնավերլուծության արդյունքների հիման վրա համալսարանի ղեկավարության կողմից որոշումների կայացման ու նոր ռազմավարությունների և զարգացման ծրագրերի մշակման, ինչպես նաև համալսարանում որակի մշակույթի ձևավորման, զարգացման ու տարածման ուղղությամբ:

Համալսարանում իրականացված ենթակառուցվածքային ինքնավերլուծության հիմնական արդյունքները համալսարանական հանրությանը ներկայացնելու, համալսարանի ձեռքբերումների, առկա մարտահրավերների, հնարավոր արտաքին վտանգների, համալսարանի ուժեղ ու թույլ կողմերի և ուսանողների ու դասախոսների բացահայտված կարիքների ներկայացման, ինչպես նաև որակի մշակույթի տարածման նպատակով Ուսումնամեթոդական կենտրոնի կողմից

հեռակա և ցերեկային ուսուցման ուսանողների և համալսարանի բոլոր աշխատկիցների համար կազմակերպվեց և իրականացվեց շուրջ 40 աշխատաժողովներ և սեմինարներ:

Համալսարանի ֆակուլտետային որակի ապահովման հանձնախմբերի, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և համալսարանի Ստեփանակերտի, Սիսիանի ու Վանաձորի մասնաճյուղերի աշխատակիցների համար՝ Որակի ապահովման ու կառավարման, ինքնավերլուծության արդյունքների և հավատարմագրման գործընթացների վերաբերյալ տարբեր թեմաներով, 2013թ-ի մարտ-հուլիս ամիսներին, Ուսումնամեթոդական կենտրոնի կողմից անցկացվեցին ավելի քան 30 սեմինարներ և աշխատաժողովներ:

Բացի այդ, կազմվեց և համալսարանի ուսանողներին և բոլոր աշխատակիցներին տրամադրվեց «Ինքնավերլուծությունը որպես համալսարանի որակի ապահովման համակարգի ձևավորման մեխանիզմ» համառոտ տեղեկատվական թերթիկը:

Համաշխարային բանկի կողմից իրականացվող «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման և դրանց հետագա բարելավման նպատակով բուհերին դրամաշնորհների տրամադրման» ենթածրագրի շրջանակներում համալսարանում կրթության որակի ապահովման ներհամալսարանական նոր մեխանիզմների ներդրման, դրանց շարունակական զարգացման և որակի ապահովման ներքին ստորաբաժանումների հետագա զարգացման ուղղությամբ իրականացվեցին մի շարք գործառույթներ.

- Որակի ապահովման մասնագիտացված կառույցի համար ձեռք բերվեց կահույք, համակարգչային տեխնիկա և այլ անհրաժեշտ սարքավորումներ,

- Մշակվեցին և հաստատվեցին համալսարանի որակի ապահովման գործընթացները կանոնակարգող մի շարք փաստաթղթեր,

- Կրթության ոլորտում որակի ապահովման Եվրոպական փորձին ծանոթանալու նպատակով համալսարանի հինգ աշխատակիցներ գործուղվեցին Գերմանիայի Դաշնության Կասսելի և Ֆուլդայի համալսարաններ,

- Համալսարանի վարչական ու պրոֆեսորադասախոսական կազմի համար 2013թ-ի ապրիլին Գերմանիայի Դաշնության Ֆուլդայի համալսարանից հրավիրված

պրոֆեսոր Յոհան Յանսենի կողմից «Որակի կառավարում» թեմայով իրականացվեցին թվով 12 սեմինարներ,

- Համալսարանի որակի ապահովման պատասխանատուների համար բազմաթիվ սեմինարներ անցկացվեցին ՈԱԱԿ-ի և «Կրթության որակ» ՓԲԸ-ի մասնագետների կողմից:

Համալսարանում իրականացված ենթակառուցվածքային ինքնավերլուծության արդյունքների, որակի արտաքին գնահատման ու հավատարմագրման և որակի ապահովման ներքին համակարգի կայացման գործընթացների վիճակի և առկա մարտահրավերների վերաբերյալ հարցերը 2013թ-ի ընթացքում երկու անգամ քննարկվել են համալսարանի գիտական խորհրդում, դրանց վերաբերյալ կայացվել են որոշումներ և տրվել են համապատասխան հանձնարարականներ:

Համալսարանի գիտական խորհրդի 2013թ-ի փետրվարի 14-ի նիստում քննարկվեց և հաստատվեց ըստ առանձին չափանիշների փորձագիտական խմբի կողմից արված դիտողություններին և առաջարկություններին համապատասխան, համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների բարելավման Պլան-Ժամանակացույց, որում հստակ ամրագրվեցին պլանավորվող գործողությունները, դրանց կատարման ժամկետները, ակնկալվող չափելի արդյունքները և պատասխանատու կառույցներն ու անձինք:

2013թ-ի ընթացքում երեք փուլով համալսարանի թվով 23 աշխատակիցներ մասնակցեցին ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված որակի կառավարման և ինքնավերլուծության կազմակերպման գործընթացներին վերաբերվող տարբեր թեմաներով սեմինարներին և ստացան համապատասխան սերտիֆիկատներ:

2013թ-ին հունիսին համալսարանի 5 աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ԿԳ նախարարության կողմից կազմակերպված «Հայաստանում բարձրագույն կրթության կարիքներն ու մարտահրավերները» թեմայով սեմինարին, իսկ հուլիս ամսին ևս 3 աշխատակիցներ մասնակցեցին «Տեմպուս» հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպված «Որակի ապահովման ներքին համակարգը Հայաստանում» թեմայով սեմինարին:

2013թ-ի ընթացքում Համալսարանում ներքին և արտաքին աուդիտների իրականացման շրջանակներում համալսարանի ցերեկային ուսուցման երեք ֆակուլտետների թվով 14 ամբիոններում համապատասխան հանձնաժողովների

կողմից իրականացվեցին ուսումնասիրություններ ուսումնական գործընթացի կազմակերպման, ամբիոններում անհրաժեշտ փաստաթղթերի ու ուսումնամեթոդական գրականության ապահովվածության և այլ հարցերի վերաբերյալ:

Բացի այդ արտաքին աուդիտի շրջանակներում Երևանի պետական, Յայաստանի պետական ճարտարագիտական և Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարաններից հրավիրված մասնագետներից կազմված հանձնաժողովների կողմից ուսումնասիրվեցին համալսարանի ևս 5 ամբիոնների գործունեությունը:

Համալսարանում դասավանդման որակի գնահատման, դասավանդման որակի մշտադիտարկման, դասավանդման մեթոդաբանության ուսումնասիրման և դասավանդման գործընթացի բարելավման նպատակներով 2013թ-ին համալսարանում իրականացվեցին 50-ից ավելի ներքին և շուրջ 30 արտաքին մասնագետների կողմից իրականացվող դասալսումներ:

Ամբիոնների ուսումնասիրությունների և դասալսումների արդյունքները ամփոփվեցին և քննարկվեցին նաև համալսարանի գիտական խորհրդի նիստերում: Դրանց հիման վրա կայացվեցին որոշումներ և տրվեցին համապատասխան հանձնարարականներ:

2013թ-ի մայիսին համալսարանի կողմից մի շարք առաջարկություններ ներկայացվեցին ՀՀ ԿԳ նախարարության կողմից շրջանառության մեջ դրված Որակավորումների Ազգային Շրջանակի նախագծի բոլոր ութը մակարդակների վերաբերյալ:

ՀՀ ԿԳ նախարարության կողմից իրականացվող բուհերի փորձնական վարկանիշավորման գործընթացի շրջանակներում, 2013թ-ի մայիսին համալսարանի կողմից ներկայացվեցին անհրաժեշտ տվյալներ 139 ցուցանիշների վերաբերյալ:

Կրթական բարեփոխումների շրջանակներում վերջին տարիներին համալսարանում որոշակի աշխատանքներ են տարվում նաև ծրագրային բարելավումների առումով:

Ելնելով աշխատաշուկայի պահանջների փոփոխությունից և Բոլոնիայի գործընթացի պահանջներից վերջին տարիներին վերանայվեցին և կրեդիտային

հենքով կազմվեցին ցերեկային ուսուցման բոլոր մասնագիտությունների, հեռակա ուսուցման, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսումնական պլանները:

Այնուամենայնիվ ծրագրային բարեփոխումների, մասնավորապես մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայման ու բարելավման առումով համալսարանում դեռևս շատ անելիքներ կան:

Եվրոպական ստանդարտներում ձևակերպված հիմնարար սկզբունքներից մեկի համաձայն՝ մասնագիտության կրթական ծրագրերի որակը պետք է բարելավվի և բարձրանա ուսանողների և բարձրագույն կրթության մյուս շահեկիցների սպասելիքներին համահունչ:

Մասնագիտության կրթական ծրագրերը պետք է համապատասխանեն ՀՀ կրթության Որակավորումների Ազգային Շրջանակի, որակավորման բնութագրի և պետական կրթական չափորոշիչների պահանջներին, ինչպես նաև համալսարանի առաքելությանը:

Ծրագրային բարեփոխումների առումով 2013թ-ին համալսարանում իրականացվեցին մի շարք գործառույթներ.

-Համալսարանի ներքին և արտաքին շահեկիցների կրթական կարիքների բացահայտման նպատակով ՈԱԱԿ-ի մասնագետների օգնությամբ մշակվեցին և հաստատվեցին դասախոսների կրթական կարիքների գնահատման, ուսանողների կողմից համալսարանի ռեսուրսների ու ծառայությունների գնահատման և համալսարանի շրջանավարտների կրթական մակարդակից համապատասխան ոլորտի գործատուների բավարարվածության գնահատման Հարցաթերթեր:

Այդ Հարցաթերթերի միջոցով 2012-2013 ուս. տարում համալսարանի տարբեր ֆակուլտետների 208 դասախոսների ու 1254 ուսանողների և 2013-14 ուս. տարում համալսարանի բոլոր ֆակուլտետների 613 դասախոսների և 934 ուսանողների ու 90 մագիստրանտների շրջանում Ուսումնամեթոդական կենտրոնի կողմից կազմակերպվեց և իրականացվեց համալսարանի ուսումնառողների և դասախոսական կազմի կրթական կարիքների վերհանման հարցումներ:

Դրանց արդյունքները մշակվեցին, ամփոփվեցին և ներկայացվեցին համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը, կայացվեցին որոշումներ և տրվեցին համապատասխան հանձնարարականներ:

2013թ-ի հունիսին Ուսումնամեթոդական կենտրոնի կողմից մշակվեց ու կազմվեց Մասնագիտության Կրթական Ծրագրի (ՄԿԾ) մշակման ընթացակարգ, կատարվեց գործընթացի իրականացման քարտեզագրում և կազմվեց ՄԿԾ-ի պատասխանատուի աշխատանքային նկարագիրը:

Մշակվեց նաև Մասնագիտության Կրթական Ծրագրի Ձևաչափ, որի հիման վրա փորձնական կարգով մշակվեցին «Խմորման արտադրությունների տեխնոլոգիա և գինեգործություն» և «Գյուղ. մեքենայացում» մասնագիտությունների ՄԿԾ-ի Ձևաչափերը:

2013թ-ի ընթացքում Ուսումնամեթոդական կենտրոնի կողմից մշակվեցին և գիտական խորհրդի կողմից հաստատվեցին Ծրագրային բարելավումների առումով առաջնային կարևորություն ունեցող հետևյալ փաստաթղթերը.

-Մասնագիտական կրթական ծրագրերի և որակավորումների արտոնման, հաստատման, մոնիթորինգի և պարևբերական վերանայման կանոնակարգը,

-Առարկայական ուսումնական ծրագրերի մշակման ուղեցույց,

Կուրսային նախագծերի (աշխատանքների) հանձնարարման, կազմակերպման, կատարման, պաշտպանության և հետագա պահպանման կանոնակարգը,

-Մասնագիտության կրթական ծրագրերի նախագծման և մշակման ընթացակարգը,

-Կրթական ծառայությունների որակի ապահովման ու գնահատման քաղաքականությունը,

- Դասավանդման որակի գնահատման կարգը,

- Ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականությունը,

- Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականությունը

և այլ փաստաթղթեր:

2013թ-ի դեկտեմբերին համալսարանի ռեկտորի հրամանով, ըստ մասնագիտությունների, ստեղծվեցին Մասնագիտությունների Կրթական Ծրագրերի վերանայման ու բարելավման հանձնախմբեր, որոնցում ընդգրկվեցին համա-պատասխան մասնագիտությունների լավագույն մասնագետները, տվյալ մասնագիտությունից լավագույն ուսանողներ, ինչպես նաև համապատասխան ոլորտի գործատուներ:

Ուսումնամեթոդական կենտրոնի կողմից 2013թ-ի դեկտեմբեր ամսին ՄԿԾ-ների վերանայման աշխատանքային հանձնախմբերում ընդգրկված շուրջ 40

ուսանողների, մագիստրանտների ու ասպիրանտների համար իրականացվեցին թվով 5 սեմինարներ՝ ՄԿԾ-ների վերանայման ու բարելավման թեմաներով:

Մասնագիտության կրթական ծրագրերի վերանայման ու բարելավման գործընթացների իրականացումը ոչ միայն կբարելավի համալսարանում իրականացվող Մասնագիտությունների Կրթական Ծրագրերի որակը, այլ նաև լուրջ նախադրյալներ կստեղծի առաջիկա ծրագրային հավատարմագրումը բարեհաջող իրականացնելու համար:

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2013 թ. ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կազմում, որպես կառուցվածքային ստորաբաժանումներ գործում են երկու գիտահետազոտական ինստիտուտ (ԳՀԻ)՝ «Գյուղատնտեսության մեքենայացման, էլեկտրիֆիկացման և ավտոմոբիլային փոխադրումների», «Պարենամթերքի տեխնոլոգիաների, սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիաների», «Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության» հետազոտական կենտրոնը ինչպես նաև հինգ պրոբլեմային լաբորատորիա՝ «Պեստիցիդների և բույսերի պաշտպանության», «Բույսերի գենոֆոնդի և սելեկցիայի», «Էկոլոգիայի և օրգանական գյուղատնտեսության», «Անասնաբուժություն և անասնաբուժական սանիտարական փորձաքննություն», «Գյուղատնտեսական կենդանիների սելեկցիայի, գենետիկայի և կերակրման», մասնաճյուղի կարգավիճակով երեք գիտական կենտրոն «Հրանտ Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորայիայի գիտական կենտրոն»-ը (ՀԱՄԳԿ), «Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն»-ը (ԽՊԳԳԿ) և «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն»-ը

**ՀՀ պետական բյուջեից ՀԱԼՀ-ում «Գիտական գիտատեխնիկական գործունեության
են թակառուցվածքի պահպանում և զարգացում»
բաղադրիչով ֆինանսավորման ծավալների բաշխվածությունը**

Աղյուսակ 9

Գիտական կառուցվածքի անվանումը	Հաստիքների քանակը	Ֆինանսավորման ծավալը, հազար դրամ
Գյուղատնտեսության մեքենայացման, էլեկտրիֆիկացման և ավտոմոբիլային փոխադրումների ԳՀԻ	17	15788,6
Պարենամթերքի տեխնոլոգիաների, սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիաների ԳՀԻ	18	16717,3
Գյուղատնտեսական կենդանիների սելեկցիայի, գենետիկայի և կերակրման պրոբլեմային լաբորատորիա	7	6501,2
Պեստիցիդների և բույսերի պաշտպանության լաբորատորիա	10	9287,4
Գիտական կենտրոնի ստեղծում և զարգացում	8	7429,9
Բույսերի գենոֆոնդի և սելեկցիայի լաբորատորիա	7	6501,2
Էկոլոգիայի և օրգանական գյուղատնտեսության պրոբլեմային լաբորատորիա	5	4643,2
Անասնաբուժության և անասնաբուժական սանիտարական փորձաքննության պրոբլեմային լաբորատորիա	14	13002,4
Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոն	6	5500,0
Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն	34	34706,2
Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն	23	24742,0
Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն	74	79604,8
Ընդամենը	223	224424,7

Համալսարանում իրականացվող գիտահետազոտական ծրագրերի ֆինանսավորման աղբյուրը 2013թ. (ինչպես նախորդ տարիներին) մնում է հանրապետության պետական բյուջեն, որից «Գիտական, գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բազային բաղադրիչով ֆինանսավորումը կազմել է 224,425 միլիոն դրամ (աղյուսակ 9), ինչպես նաև գիտական աստիճանների համար հավելավճար 21,52 միլիոն դրամ ծավալով:

Պետական բյուջեից տրամադրված ֆինանսական միջոցներից աշխատավարձի ֆոնդը կազմել է մոտ 81,03 %:

Գիտական կենտրոններում, ԳՀԻ-ներում գիտական պրոբլեմային լաբորատորիաներում ընդգրկված են 307 աշխատակիցներ, այդ թվում՝ վարչատնտեսական աշխատողներ 59, լաբորատորիայի կամ բաժնի վարիչ՝ 22, գլխավոր գիտաշխատող՝ 9, առաջատար գիտաշխատող՝ 34, ավագ գիտաշխատող՝ 48, գիտաշխատող՝ 72, կրտսեր գիտաշխատող՝ 26 և լաբորանտ՝ 37: Գիտական կենտրոններում, ԳՀԻ-ներում և պրոբլեմային լաբորատորիաներում աշխատում են գիտությունների 37 դոկտոր և 121 թեկնածու: (աղյուսակ 10)

Գիտական ստորաբաժանումներում աշխատակիցների կազմը, ըստ տարակարգերի

Աղյուսակ 10

	Վարչատնտեսական աշխատակիցներ	Լաբ. կամ բաժնի վարիչ	Գլխ. գիտ. աշխ.	Կռաջ. գիտ. աշխ.	Ավագ գիտ. աշխ.	Գիտ. աշխ.	Կրտսեր գիտ. աշխ.	Օժանդակ (լաբ.) անձ.	Ընդամենը
Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն	15	3	-	5	7	5	2	2	39
Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն	34	6	-	1	10	5	3	20	79
Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն	10	-	-	-	5	4	1	4	24
ՀԱԱՀ-ի գիտական կառույցներ	-	13	8	28	26	58	20	11	165
Ընդամենը	59	22	9	34	48	72	26	37	307

Համալսարանում 2013 թ.-ին իրականացվել է նաև ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող վեց դրամաշնորհային ծրագիր 11.62 միլիոն դրամ ֆինանսավորմամբ, որոնք ավարտվել են 2013 թ. ապրիլ - հունիս ամիսներին:

2013 թ. հուլիս ամսից ֆինանսավորվում են ութ դրամաշնորհային նոր ծրագրեր, որոնց ֆինանսավորումը ընթացիկ տարում կազմել է 27.29 միլիոն դրամ:

2013 թ. համալսարանի երկու աշխատակից պաշտպանել են դոկտորական, 64 աշխատակից և ասպիրանտ թեկնածուական ատենախոսություն, որոնցից 25 համալսարանի հեռակա ուսուցման ասպիրանտ՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ: Ատենախոսությունների պաշտպանությունները ըստ մասնագիտությունների ունի հետևյալ պատկերը՝ տնտեսագիտական՝ 19 թեկնածուական, ագրոնոմիական՝ 2 դոկտորական և 18 թեկնածուական, գյուղատնտեսության մեքենայացում՝ 8, անասնաբուժական՝ 4, անասնաբուժական՝ 2, տեխնոլոգիական՝ 6, հողաշինարարություն՝ 3 և հիդրոմելիորացիա՝ 2 թեկնածուական ատենախոսություններ, թեկնածուական ատենախոսություն պաշտպանողներից երեքը ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղից են:

2013թ. նոյեմբերին ագրարիան համալսարանում կազմակերպվեց «Պարենային անվտանգության և կենսաբազմազանության հիմնախնդիրներ»-ը անվանումով

միջազգային գիտաժողով, որին մասնակության հայտեր էին ներկայացրել արտերկրի և ՀՀ-ի 78 գիտակրթական կառույցներից 185 զեկուցումով, գիտաժողովի 10 բաժանմունքներում կարդացվել են 135 զեկուցում:

2003 թ. ագրարային համալսարանը ռուսերեն և անգլերեն լեզուներով գունավոր տպագրությամբ, հրատարակում է «Հայաստանի ազգային (պետական) ագրարային համալսարանի տեղեկագիր» գիտական միջազգային պարբերականը: 2013 թ. 4-րդ համարով հրատարակվել է 125 հոդված, բացի ՀԱԱՀ-ից ներկայացվել են հանրապետության տարբեր բուհերից, գիտական կենտրոններից և արտերկրից: Արտերկրի հոդվածների թիվը կազմում է 40:

2003թ. Հայաստանի ազգային ագրարային համալսարանը Թբիլիսիում Վրաստանի, Ադրբեջանի ագրարային համալսարանների և Գերմանիայի Դաշնության բնապահպանության գործակալության հետ համատեղ տպագրում է «Ագրարային գիտությունների տեղեկագիր» գիտական միջազգային պարբերականը, որի համահրատարակիչներն են նաև Վիենայի բնապահպանական ռեսուրսների և կյանքի մասին գիտության համալսարանը, Գերմանիայի հողերի գնահատման բյուրոն, Իտալիայի հողերի Եվրոպական ցանցի բյուրոն, Ռուսաստանի Վ. Դոկուչանի անվան հողագիտության ինստիտուտը, Ռուսաստանի ազգային ակադեմիայի հողագիտության ինստիտուտը, ինչպես նաև Վրաստանի տարբեր գիտակրթական կառույցներ: 2013թ. գիտական պարբերականում տպագրվել է ՀՀ գիտնականների կողմից ներկայացված 22 հոդված:

«Հայաստանի ազգային ագրարային համալսարանի տեղեկագիր» գիտական միջազգային պարբերականը գիտական հրատարակումների հետ համագործակցության և խմբագրական զարգացման միջազգային «Թոմսոն Ռոյթերս» կառույցների ցուցակներում ընդգրկվելու համար 2012թ.-ից տարվում են նպատակադիր աշխատանք: Հստակեցվել են նշված կառույցին անդամակցելու չափորոշիչները, որոնցից մեծ մասին այն է ունենալ միջազգային խմբագրական խորհուրդ, տպագրել արտերկրի տարբեր գիտակրթական կառույցների հետազոտողների հոդվածներ, հոդվածները պարտադիր պետք է գրախոսվել, առաքել հեղինակների և տարբեր գրադարաններին տեղեկագիրը բավարարում է: 2013թ. հոկտեմբերին համալսարանի գիտական խորհուրդը որոշում ընդունեց պարբերականը 2014 թ. երկրորդ համարից սկսած պարբերականը հրատարակել անգլերեն լեզվով, հայերեն և ռուսերեն ավելի

ծավալուն ամփոփագրերով և տարեվերջին դիմել միջազգային «Թոմսոն Ռոյթերս» կառույցին անդամագրվելու համար:

2013թ. հրատարակչական-խմբագրական բաժինը տպագրության է հանձնել հետևյալ նյութերը.

- մեթոդական ցուցումներ՝ 80 անվանում՝ 139,0 տպ. մամուլ ընդհանուր ծավալով.

- գիտական պարբերական (4 համար) և գիտական աշխատությունների մեկ ժողովածու՝ 98,0 տպ. մամուլ.

- հաշվետվություններ, տարեկան զեկույց, բուկլետներ և այլ նյութեր՝ 42,0 տպ. մամուլ:

2013թ. ընթացքում տպագրված աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է 279,0 տպ. մամուլ:

Համալսարանում ուսանողական ամենամյա գիտաժողովին 2012-13 ուստարում զեկույցներ են ներկայացրել թվով 195 ուսանողներ, որոնցից ամբիոնային և ֆակուլտետային փուլերից հետո ուսանողական գիտաժողովի համալսարանական ամփոփիչ նստաշրջանին թույլատրվել է թվով 54 զեկուցում:

Գիտաժողովի ամփափոման արդյունքում 33 զեկուցողներ (ըստ բաժանմունքների) արժանացել են ութ առաջին, տասներեք երկրորդ և տասներկու երրորդ կարգի մրցանակների և դիպլոմների:

Հաշվետու տարում վեց ուսանողներ մասնակցել են միջազգային տարբեր գիտաժողովների, տպագրել են 10 ուսանողական գիտական հոդված:

2013թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ագրարային համալսարանի դոկտորանտների, ասպիրանտների և հայցորդների թիվը կազմում է 173, այդ թվում ասպիրանտուրայի առկա անվճար ուսուցման համակարգում 20 հեռակա 53, որից Հայաստանի Հանրապետությունից 27, 27-ն էլ անվճար համակարգում, 26-ը Իրանի Իսլամական Հանրապետությունից, որպես հայցորդներ ձևակերպված են 100-ը, որից 28-ը ԼՂՀ-ից (աղյուսակ 11):

ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված ագրարային համալսարանում 21 մասնագիտությունների գծով ասպիրանտների ղեկավարումն իրականացնում են գիտությունների 47 դոկտորներ և 19 թեկնածուներ:

Առկա ուսուցման ասպիրանտուրան 2013 թ. ավարչտել են 9 ասպիրանտ, որոնցից 8-ը պաշտպանել են թեկնածուական ատենախոսությունը:

Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի, համալսարանի ասպիրանտների համար ատենախոսական աշխատանքները կատարելու համար ստեղծվել են բոլոր անհրաժեշտ պայմանները, ամեն տարի գարնանը և աշնանը կազմակերպվում են թեկնածուական քննությունները հանձնելու հատուկ դասընթացներ, պայմաններ է ստեղծվում գիտական հոդվածները տարբեր պարբերակներում և ամսագրերում տպագրելու, միջազգային գիտաժողովներում գեկուցումներ կարդալու համար: Սակայն կան որոշակի դժվարություններ ատենախոսական աշխատանքները անգլերեն և հայերեն լեզուներով ներկայացնելու առումով, քանի որ հաճախ ասպիրանտների ղեկավարները, մասնագիտական խորհրդի անդամները, ընդդիմախոսներն ու առաջատար կազմակերպության մասնագետները ունեն անգլերեն լեզվով հաղորդակցվելու խնդիր:

«Բարձրագույն և հետբուհական կրթության» մասին ՀՀ օրենքով ասպիրանտուրան կամ հետբուհական կրթությունը համարվում է բարձրագույն կրթության երրորդ աստիճանը, որը ավարտելուց հետո ասպիրանտը կամ սովորողը ստանում է հետազոտողի դիպլոմ: Նշված օրենքի պահանջներին համապատասխան և ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված հետազոտողի կրթական ծրագիրը իրականացնելու նպատակով ագրարային համալսարանում բոլոր մասնագիտությունների համար մշակվում էլ ուսումնական պլաններ և առարկայական ծրագրեր:

Կազմակերպվել դասընթացներ ըստ ուսումնական պլանների առկա, հեռակա ուսուցման ասպիրանտների համար, ինպես նաև նոր ձևակերպված հայցորդների համար:

Հետազոտողի ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերն ընդգրկել են ասպիրանտների գիտելիքների, ունակությունների և կարողությունների ավելի լայն շրջանակ, ապահովելով ընդհանուր բազային հետազոտական կարողությունների ուսուցում, կառավարման և հաղորդակցման կարողությունների ձևավորում, մասնագիտական գիտելիքների և կարողությունների ուսուցում, դասավանդման և գիտամանկավարժական ձիրքերի ձևավորում:

Ծրագիրը բաղկացած լինելով երկու փոխկապակցված կրթական և հետազոտական բաղադրիչներից մշակել է խնամքով և ճիշտ հաշվի առնելով բոլոր մասնագիտությունների առանձնահատկությունները և համալսարանի հնարավորություններն ու զարգացման հեռանկարները:

	I		II		III		IV		Ընդամենը
	արվյա	հեռավա	արվյա	հեռավա	արվյա	հեռավա	արվյա	հեռավա	
Ագրոնոմիական	1/0		-	0/1	1/0	0/1	-	0/	
Տնտեսագիտական	1/0	3/4	-	2/3	3/0	4/2	-	3 /2	
Ագրոքիզնես			1/0	1/0		0/2	-	1/2	
Տեխնոլոգիական	1/0	1/2	1/0	2/1	3/0	1/	-	0/0	
Ճարտարագիտական	1/0	2/0	1/0	2/		0/	-	0/0	
Անասնաբուժական	-	1/0	3/0	0/1		1/3	-	0/2	
Հիդրոմեխիորացիա	1/0	-	1/0	2/	1/0	1/	-		
Ընդամենը	5	13	7	15	8	15	-	10	73
Այդ թվում արտերկրից		6	-	6	-	8	-	6	26

* Հայաստանից /իրանի Իսլամական Հանրապետությունից

Ընդհանուր 73 ասպիրանտ, որից

Առկա՝ 20

հեռավա

Հայաստանի Հանրապետությունից 27 ասպիրանտ

իրանի Իսլամական Հանրապետությունից 26 ասպիրանտ

Չեռացված՝ 2 ասպիրանտ Հայաստանի Հանրապետությունից
9 ասպիրանտ Իրանի Իսլամական Հանրապետությունից

Ավարտած՝ 10 ասպիրանտ Հայաստանի Հանրապետությունից
50 ասպիրանտ Իրանի Իսլամական Հանրապետությունից

Հայցորդներ 100, որից 28-ը LՂՀ-ից, 72-ը ՀՀ-ից

*Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտահետազոտական
ինստիտուտներում, գիտական պրոբլեմային լաբորատորիաներում 2013 թ.
իրականացված հետազոտական աշխատանքների համառոտ բնութագիրը*

**1. Գյուղատնտեսության մեքենայացման էլեկտրիֆիկացման և ավտոմոբիլային
փոխադրումների գիտահետազոտական ինստիտուտը**

1.1. Դաշտավարության մեքենայացման բաժնում 2013 թ. շարունակվել են ուսումնասիրությունները խաղողի այգու շարքերի երկկողմանի մշակության այգեփոր մեքենայի փորձնական նմուշի դաշտային փորձարկումները: Տարվում են աշխատանքներ մեքենայի սերիական արտադրությունը Չինվան գործարանում կազմակերպելու ուղղությամբ:

խաղողի մամլվածքից սերմերի անջատման և նրանցից խաղողի բուսայուղի ստացման մեքենայացված հոսքագծի մշակում

Աշխատանքի նպատակն է կատարելագործել խաղողի մամլվածքի վերամշակման տեխնոլոգիական գործընթացները՝ գանգվածից սերմերի անջատման և նրանցից խաղողի սերմերից բուսական յուղի ստացման համար:

Աշխատանքի հիմնական փուլերը, ծրագրի կատարման պլանավորվող քառամյա ժամկետի համար ներառում են՝ հոսքագծի բաղադրիչ բանվորական հանգույցների պարամետրերի ճշգրտում և փորձնական նմուշի պատրաստում:

Ըստ հաստատված օրացուցային պլանի կատարվել է խաղողի մամլվածքի բաղադրակազմը ուսումնասիրում և սերմերի չափակշռային, խոնավության և ամրության ցուցանիշների ճշգրտում:

խաղողի այգեբաց մեքենայի մշակում

Աշխատանքի նպատակն է մշակել ձեռքով թաղված խաղողի այգիների այգեբաց մեքենայի տեխնոլոգիական սխեման և բանող օրգանները, որի համար ստացվել է գյուտի 2452A,25.10.2010թ հեղինակային վկայագիր:

Այգեբաց մեքենան պետք է ապահովի ձեռքով թաղված խաղողի վազերի բացումը 90-95 %-ով, չվնասելով վազերը:

Մեքենայի ժամային արտադրողականությունը պետք է կազմի ոչ պակաս 0,35 հա/ժամ:

Անպոմպ սրսկիչի կառուցվածքի մշակում և պարամետրերի հիմնավորում

Աշխատանքի նպատակը՝ հիմք ընդունելով 2011-2012 թթ. կատարված գիտահետազոտական աշխատանքների ու լաբորատոր փորձարկումների արդյունքները

պատրաստել ափսեաձև փոշեարար նոր գլխիկներ և կազմակերպել դրանց արտադրական փորձարկումները:

Փոքր չափերով հողատարածքները (1,0-2,0 հա) ունեցող տնտեսությունների մեծ մասում մշակվում է ցածրացողուն մշակաբույսեր (կարտոֆիլ, լոլիկ, վարունգ, պղպեղ և այլն/ և հատապտուղներ /հաղարջ, մոշ, ազնվամորի), որոնց հիվանդությունների և վնասատուների դեմ քիմիական պայքարի համար նպատակահարմար է օգտագործել առաջարկվող անպոմպ սրսկիչը:

Փոսհորատիչի կատարելագործում գեմենտագված հողային պայմաններում աշխատելու համար

Աշխատանքի նպատակը՝ կատարելագործել ՀՀ հողային պայմաններում աշխատող փոսհորատիչ մեքենաները.

- կատարել թրթռիչով և կոնական դանակային ծայրադիրով համալրված փոսհորատիչի օպտիմալ պարամետրերի վերջնական ճշգրտում,

- թրթռիչով և կոնական դանակային ծայրադիրով համալրված փոսհորատիչի գործարանային նմուշի պատրաստում և արտադրական փորձարկումների իրականացում:

Սածիլատնկիչի ոռոգման ջրի ակոսահանիչ հարմարանքի մշակում

Աշխատանքի նպատակը՝ մշակել սածիլատնկիչ մեքենայի հետ համալրված սկավառակային ակոսահան հարմարանք, որը ի տարբերություն ПНБ-6 ակոսահանի, կապահովի. դիմարքային միջշարքային ոչ մեծ քան 70 սմ հեռավորություն կապահովի սածիլված շարքի դիմացի ակոսապատի նվազագույն ջրաֆիլտրացիան նվազեցնելով ոռոգման ջրի ծախսը:

Այդ նպատակի իրականացման համար մշակել է սկավառակային ակոսահանի դիրքի կազավորման հատուկ կառուցվածք, որը անկախ գրոհի անկյունից իրականացնում է սկավառակի թեքված դիրքի սահուն փոփոխություն:

Բաժնի աշխատակիցների կողմից տպագրվել է երեք գիտական հոդված և ստացվել է գյուտի մեկ արտոնագիր:

1.2 Անասնապահության և կերարտադրության մեքենայացման բաժնում

2013 թ. նախատեսվել է գիտահետազոտական և նախագծակոնստրուկտորական աշխատանքները կատարել գոմաղբի ու թռչնաղբի հավաքման, մշակման և օգտագործման տեխնոլոգիաների ու մեքենասարքավորումների կատարելագործման, որոշ նմուշների պատրաստման, լաբորատոր ու արտադրական պայմաններում փորձարկման վերաբերյալ:

- Դրանց գիտափորձնական ու արտադրական փորձարկումների արդյունքների վերլուծությունը հնարավորություն կտա ճշտել բոլոր անհրաժեշտ պարամետրերը և մշակել աշխատանքային նախագծեր զանգվածային ներդրման համար:

Տպագրվել է երկու գիտական հոդված, ստացվել է գյուտի մեկ արտոնագիր:

1.3 Ավտոմոբիլային տրանսպորտի քաժնի աշխատակիցները Երևանի Կենտրոն համայնքում ավտոմոբիլային շարժիչներից արտանետված գազերի մեջ CO-ի քանակի որոշումը կատարել են հիմք ընդունելով շարժիչի տարբեր աշխատանքային ռեժիմներում CO-ի ծավալային փոփոխությունը և տարբեր շահագործական պայմաններում երթային ցիկլերի բաղկացուցիչ ռեժիմների տեսակարար կշիռը:

Հետազոտվել է Երևանի Կենտրոն թաղամասի ճանապարհափողոցային ցանցում փոշու առկայությունը դրա խտությունը և բաշխումը տարածության մեջ:

Երևանի մթնոլորտային օդի մոնիթորինգի մեթոդիկայի կատարելագործման

Նպատակն է՝ Երևանի մթնոլորտային օդի աղտոտվածության վրա տրանսպորտային հոսքերից արտանետվող թունավոր բաղադրիչների հաշվարկման և գնահատման մեթոդիկայի բարելավումն է ըստ քաղաքաշինական, աշխարհագրական ինչպես նաև մթնոլորտը բնութագրող գործոնների և տրանսպորտային հոսքերի փաստացի ինտենսիվության:

Տպագրվել է երկու գիտական հոդված:

2. Պարենամթերքի տեխնոլոգիաների սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտ

2.1. - «ԲՈՒՄԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԹԵՐՔԻ ԵՎ ՀՈՒՄՔԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺԻՆ»

Բաժնում իրականացվող ծրագիրը ներառում է 4 ենթաթեմաներ՝

Արևային Էներգիայի, Էներգախնայողական տեխնոլոգիաների և համակցված չորացման սկզբունքների կիրառումով պտղաբանչարեղենային հումքի չորացման տեխնոլոգիայի մշակում:

Կատարված գիտափորձարարական հետազոտությունների հիման վրա ստացվել են էական գիտական նորույթ ներկայացնող արդյունքներ.

Թեմայի տեսական և փորձարարական հետազոտությունների արդյունքները հաջողությամբ կիրառվել են սննդարդյունաբերության և գյուղատնտեսական հումքի վերամշակման ձեռնարկությունների վերագինման և նոր արտադրությունների կազմակերպման գործընթացներում («Լևոն» ՍՊԸ):

Թեմայի հիմնական դրույթների հիման վրա մշակված տեխնիկական միջոցները փորձարկվել և հավանության են արժանացել պահածոների ամրագրանշարտեղենային չոր սննդամթերքի արտադրության «Լևոն» ՍՊԸ-ի կողմից, Արմավիր մարզի Յոկոտեմբեր գյուղի համալիրում իրականացվել են արտադրական փորձարկումներն ու մշակված համակցված չորացման տեղակայանքի ներդրում:

- **«Չամակցված և նուրբ ջերմային մշակմամբ պտուղբանջարտեղենային պահածոների արտադրության տեխնոլոգիայի մշակումը»:**

Սույն հետազոտությունների նպատակն է մշակել պտուղբանջարտեղենային պահածոյատեսակների պատրաստման այնպիսի ջերմային և օգոնացման տեխնոլոգիական ռեժիմներ, որոնք ապահովում են վերջնական արտադրանքում վիտամինների, այլ կենսաբանորեն ակտիվ բաղադրիչների առավելագույն պահպանությունը և մանրէաբանական կայունությունը:

Հաշվետու ժամանակաընթացքում քաղցր աղանդներ պատրաստելու նպատակով, որպես հումք, օգտագործվել է ծիրանի, դեղձի, սալորի խյուսեր մշակվել է դրանց տեխնոլոգիական ռեժիմները:

«Բուսական ծագման ոչ ավանդական հումքատեսակների օգտագործումով ֆունկցիոնալ և բուժիչ-կանխարգելիչ նշանակության հացաբուլկեղենի, հրուշակեղենի և մակարոնի արտադրության տեխնոլոգիաների մշակում»

Յետազոտող խմբի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

- ուսումնասիրվել է ալրային արտադրատեսակներում շաքարի փոխարեն ստեփոզիդի օգտագործման հնարավորությունը,
- ուսումնասիրվել է թխվածքաբլիթներում տարեկանի թաղանթանյութից և ծովակաղամբից բաղկացած խառնուրդի օգտագործումը,
- ուսումնասիրվել է ալրային հրուշակեղենում սոյայի իզոլյատի և ոլոռի օգտագործման հնարավորությունը,
- մշակվել է ֆունկցիոնալ նշանակության ամոքային թխվածքաբլիթների արտադրության տեխնոլոգիական սխեման և այդ նպատակով ֆունկցիոնալ հավելումների օգտագործման եղանակը,
- մշակված ֆունկցիոնալ նշանակության ալրային հրուշակեղենի արտադրության տեխնոլոգիաները ներդրվել են արտադրությունում («ԱՍԻԿՍ» ՍՊԸ, ք. Երևան):

Տպագրվել է 4 գիտական հոդված, ստացվել է մեկ հեղինակային արտոնագիր:

6.2.2 ԿԵՆՂԱՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՀՈՒՄԵԻ ԵՎ ՄԹԵՐՔԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԲԱԺՆԻ

Հաշվետու ժամանակաշրջանում կաթնաթթվային բակտերիաների արժեքավոր շտամների սելեկցիայի նպատակով որպես մանրէների անջատման աղբյուր ուսումնասիրվել է ՀՀ տարածաշրջանների թվով 25 դեղաբույսերի Էպիֆիտային միկրոֆլորայի նմուշներ:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրվել է անջատված կաթնաթթվային ստրեպտոկոկների շտամների թթվագոյացման էներգայի ցուցանիշները, պրոտեոլիտիկ ակտիվությունը, մակարոֆի խտությունն ու մածուցիկությունը, սիներեզիսը, դիագետիլի գոյացումը:

Հետազոտվել է անջատված շտամների հակաբիոտիկ ակտիվությունը աղիքային ցուպիկի՝ E.Coli և ոսկեգույն ստաֆիլակոկի՝ Str.aureus նկատմամբ:

Տպագրվել է երկու գիտական հոդված, ստացվել է գյուտի հեղինակային արտոնագիր:

6.2.3 Սննդամթերքի անվտանգության և կենսատեխնոլոգիայի բաժնի ուսումնասիրությունների հիմնական ուղղություններն են հանդիսացել

ՀՀ տարբեր տնտեսություններում ոչխարների մոտ սալմոնելակրության տարածվածության ուսումնասիրությունը և սննդի, սննդային հավելումների անվտանգության տեսանկյունից:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ ՀՀ տարբեր տարածաշրջանների ոչխարների մոտ գաղտնի սալմոնելակրություն կա նորմայի սահմաններում, բայց տարածաշրջանի ոչխարները վտանգ են ներկայացնում մարդկանց աղիքային միկրոֆլորայում հակաբիոտիկառեսիստենտության տարածման համար: Մշակվել է անասունների գաղտնի սալմոնելակրության վրա պրոբիոտիկների ազդեցության հետազոտման ծրագիր և համապատասխան մեթոդիկա:

Տպագրվել է 9 գիտական հոդված, որից 6-ը զեկուցվել է տարբեր միջազգային գիտաժողովներում, ստացվել է գյուտի մեկ հեղինակային վկայական:

6.3. Պրոբիոտիկային լաբորատորիաներ

6.3.1 Գյուղատնտեսական կենդանիների գենետիկայի, սելեկցիայի և կերակրման պրոբիոտիկային լաբորատորիան

2013 թ. իրականացվել են հետևյալ գիտահետազոտական աշխատանքները

Անասնաբուծությունն ճյուղում շարունակվել են

Բուծման հնարքների կիրառմամբ ցանկալի հատկանիշներով օժտված եռացեղ և քառացեղ կենդանիների խմբաքանակների ստեղծման և ընտրասերման պարամետրերի սահմանման աշխատանքները:

ՀՀ Կառավարության ծրագրով Ավստրիայից, Գերմանիայից և Չեխիայից ներմուծված շվից, հոլշտին, ֆլեկֆի ցեղերի երինջների մաքուր բուծմամբ և տրամախաչմամբ շարունակվել է սինթետիկ պոպուլյացիաների ստեղծումը: Կազմակերպվել է մաքրացեղ եռացեղ և քառացեղ մատղաշի նպատակային աճեցումը:

Ծրագրի մեջ է ընդգրկվել նաև ՀՀ ներկրված Էդիլբանյան ցեղի ոչխարների ուսումնասիրությունները: կատարվել են Էդիլբանյան ցեղի տարբեր սեռահասակային խմբերի Էգ արու կենդանիների տարիքի և կենդանի զանգված որոշման խնչպես նաև խատանման աշխատանքներ:

Տոհմային և սելեկցիոն աշխատանքների կատարելագործումը պահանջում է նոր մեթոդների մշակում, որոնք կհիմնվեն իմունազենետիկայի նվաճումների վրա: Հետազոտության եղանակներից մեկն է հանդիսանում արյան սպիտակուլցների և ֆերմենտների պոլիմորֆ համակարգերի ուսումնասիրումը, որպես մոլեկուլյար և գենետիկայի մարկերներ:

Տպագրվել է 8 գիտական հոդված:

6.3.2 Էկոլոգիայի և օրգանական գյուղատնտեսության պրոբլեմային լաբորատորիայում

2013 թվականին շարունակվել են ուսումնասիրությունները հանրապետության տարբեր հողակլիմայական պայմաններում, հատկապես տեխնաժին աղտոտված գոտիներում կենսատեխնոլոգիական մեթոդներով ստացված օրգանական պարարտանյութերի ֆոնի վրա ցեոլիտի, հրաբխային խարամի, բենտոնիտային կավի (մոնտմորիլոնիտի) տարբեր չափաքանակների և աճի խթանիչների արդյունավետությունը գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերում բացահայտելու և մշակելու Էկոլոգիական տեսակետից անվտանգ բուսաբուծական մթերքների արտադրության տեխնոլոգիաներ, հաշվի առնելով հանրապետության առկա հնարավորությունները:

Աշխատանքի նպատակն է Հայաստանի Հանրապետության տարբեր հողակլիմայական պայմաններում ուսումնասիրել ու պարզել օրգանական պարարտանյութերի այն նվազագույն չափաքանակները, որոնք կարող են նպաստել բարձր

բերքի ստացմանը, ծանր մետաղներով և զանազան թունավոր ու բալաստային նյութերով հողերի աղտոտվածության նվազեցմանը:

Տպագրվել է 7 գիտական հոդված:

6.3.3 Բույսերի գենոֆոնդի և սելեկցիայի պրոբլեմային լաբորատորիայում

իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ներկայումս ՀԱԱՀ Գենոֆոնդի և սելեկցիայի պրոբլեմային լաբորատորիայում պահպանվում են վայրի ցորենի, գարու, աշորայի, այծակնի (սերմերի, հասկերի, հասկիկների, հերբարիումների տեսքով), բանջարաբույսերի վայրի որոշ ազգակիցների և վայրի ուտելի բանջարային բույսերի (ճակնդեղ, գազար, սոխ, սպանախ, հազար, ծնեբեկ, խավրժիլ, ծովաբողկ, սիբեխ, ավելուկ, շուշան և այլն), համեմունքային (գինձ, մաղադանոս, կոտեմ, ծիտրոն և այլն), որորշ հատիկաընդեղենների (տափուլոռ, ոսպ, վիկ, երեքնուկ, առվույտ), դեղատու և արոմատիկ շատ բույսերի (ուրց, քեմոն, կղմուխ, ճարճատուկ և այլն), պտղատուների (տանձ, խնձոր, սալոր, նուշ և այլն) սերմանմուշներ, ինչպես նաև լաբորատորիայում ստեղծված հացազգի բույսերի ամֆիդիպլոիդների ու որոշ մշակաբույսերի տեղական ծագման հին սորտանմուշների ընդհանուր թվով 4412 նմուշ:

ՀՀ տարբեր մարզերում կազմակերպվել են արշավախմբային ուսումնասիրություններ, որի ընթացքում հավաքվել են սերմային նոր նմուշներ, պատրաստվել են բազմաթիվ նոր հերբարիումներ

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են և շարունակվում են դաշտային լաբորատոր և սելեկցիոն աշխատանքները:

Որպես նոր ուղղություն Լաբորատորիայում սկսվել են իրականացվել ՀԱԱՀ-ում ex situ պահպանվող հավաքածույի առկա նմուշների գնահատում գենային մակարդակով՝ ագրոկենսաբանական տարբեր հատկանիշներ՝ չորադիմացկունություն, հիվանդությունների և վնասատուների նկատմամբ կայունություն, պահունակություն, սննդի տեսակետից արժեքավոր նյութերի մեծ առկայություն և այլ հատկանիշներ պայմանավորող գեների հայտնաբերման և ուսումնասիրման, դրանց գենային քարտեզի կազմման ուղղությամբ: Արդյունքում կգնահատվի մշակաբույսերի վայրի ցեղակիցների սելեկցիոն պոտենցիալը՝ սելեկցիոն աշխատանքներում դրանց հետագա կիրառման նպատակով, գենետիկական բազմազանությունը, գենետիկական էռոզիայի աստիճանը, ինչպես նաև ՄԿՑ-ների, հիբրիդների և մշակության մեջ տարածված որոշ սորտերի մուտացիոն փոփոխությունների առաջացման պատճառները և հետևանքները:

Տպագրվել է 8 գիտական հոդված:

6.3.4 Բույսերի պաշտպանության և պեստիցիդների սինթետիկ պրոբլեմային լաբորատորիա

Ժամանակակից բնապահպանական պահանջները բավարարող նոր արդյունավետ պեստիցիդների մշակումը բավական բարդ ու դժվարալուծ հիմնահարց է և պատահական չէ, որ այն դարձել է ժամանակակից սինթետիկ օրգանական քիմիայի կարևոր խնդիր:

Պրոբլեմային լաբորատորիայում երկար տարիներ լայնածավալ և նպատակային աշխատանքներ են իրականացվել կենսաբանորեն ակտիվ միացությունների սինթետիկ ուղղությամբ, հատկապես հետերոցիկլիկ միացությունների շարքում, քանի որ բնական, ինչպես նաև սինթետիկ ծագում ունեցող բազմաթիվ պատրաստուկների բաղադրության հիմքում ընկած են հիևզ և վեց անդամանի հետերոցիկլիկ օղակ պարունակող միացությունները և դրանց ածանցյալները:

Աշխատանքները տարվում են երեք հիմնական ուղղություններով.

1. Հայտնի հետերոցիկլիկ համակարգերի ֆունկցիոնալացում, այդ շարքերում նոր կենսաբանորեն ակտիվ միացությունների հայտնաբերում:

2. Երկու և երեք տարբեր հետերոցիկլերից կազմված նոր, նախկինում չուսումնասիրված համակարգերի ածանցյալների սինթեզ:

3. Ակտիվ միացությունների սինթեզների մշակում՝ հիմնված «Կանաչ քիմիայի» սկզբունքների վրա, որը նախատեսում է պինդ ֆազում կամ ջրային լուծույթում բարձր ելքերով ընթացող ռեակցիաների մշակում, էներգակիրների և թափոնների նվազեցում, սինթեզվող նյութերի (պեստիցիդների) արագ քայքայում շրջակա միջավայրում և այլն:

Լաբորատորիայի աշխատակիցների կողմից կատարած գիտական ուսումնասիրությունների արդյունքում տպագրվել է: 16 գիտական հոդված, որոնցից տարբեր միջազգային գիտաժողովներում կարդացվել է 7 գեկուցում և 3 ստացվել է գյուտի արտոնագրեր:

6.3.5 Անասնաբուժական և անասնաբուժական սանիտարական փորձաքննության պրոբլեմային լաբորատորիայում

Հետազոտությունները կատարվել են հետևյալ ուղղություններով վարակունակ սալմոնելաներ են անջատվել սատկած աղավախների, հավերի ներքին օրգաններից, ոսկրածուծից, սրտի արյունից, իֆչպես նաև ձվից: Մանրէների վարակունակությունը

որոշվել է սպիտակ մկների վրա, օգտագործելով սալմոնելաների 24- ժամյա աճեցվածքը:

Աշխատանքում նպատակ է դրվել մշակել գյուղատնտեսական կենդանիների մատղաշների, մասնավորապես հորթերի և խոճկորների սալմոնելյոզների նկատմամբ հիվանդության հարուցիչների տեղային շտամներից ստանալ իմունաձին հատկությամբ օժտված վակցինա:

Կլիմայական փոփոխությունները Հայաստանում և տավարի պիրոպլազմոզ հիվանդության հնարավոր զարգացումները

Ուսումնասիրվել է Հայաստանում կլիմայական փոփոխությունների հետևանքով գյուղատնտեսական կենդանիների պիրոպլազմոզ հիվանդության օջախային բնկումների առաջացման և տարածման պատճառները ու մշակել կանխարգելման եղանակ:

Հանրապետության մակարդակով մշակվել է պիրոպլազմոզ հիվանդության նկատմամբ կանխարգելիչ միջոցառումների փաթեթ, որի կիրառումը հնարավորության սահմաններում կնվազեցնի կլիմայական փոփոխությունների հետևանքով պիրոպլազմոզ հիվանդության հնարավոր զարգացումները և դրա տարածման շրջանակների ընդլայնումը:

Կովերի անպտղության կանխարգելումը, թարախակատարային սուր Էնդոմետրիտների և մաստիտների բուժմամբ և արհեստական սերմնավորման ներդրմամբ

Աշխատանքի նպատակն էր կանխելու կովերի շրջանում լայնորեն տարածված և հանրապետության տավարաբուժությանը մեծ չափերի հասնող տնտեսական վնաս հասցնող անպտղությունը: Ելնելով դրանցից աշխատանքի հիմնական նպատակն է գինեկոլոգիական հիվանդությունների ու մաստիտների բուժման և արհեստական սերմնավորման նոր եղանակների մշակմամբ ու ներդրմամբ կանխել կովերի անպտղությունը:

Հետազոտությունների մյուս ոլորտը սպառման համար արտադրված սննդամթերքի անվտանգության ցուցանիշների ուսումնասիրությունն է:

Բաժնի աշխատակիցների կոմիտեից հրատարակվել է ութ գիտական հոդված:

6.3.6 2013 թ. հունվարից ագրարային համալսարանում գործում է «Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոն»-ը

2013 թ. իրականացնելու է հետևյալ գիտահետազոտական աշխատանքները.

ՀՀ ագրարային ոլորտի պետական կարգավորման գործիքների և կառուցակարգերի կատարելագործում

Հետազոտության նպատակն է ՀՀ ագրարային ոլորտի ներկա վիճակի վերլուծության և միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա ներկայացնել ագրարային ոլորտի պետական կարգավորման առավել արդյունավետ գործիքներ և դրանց կիրառման կազմակերպատնտեսական կառուցակարգեր:

- ՀՀ ագրարային ոլորտի առանձնահատկություններին համապատասխան առաջարկվել է պետական աջակցության գերակա ուղղություններ, արդյունավետ ձևեր, մեխանիզմներ և գործիքներ:

ՀՀ գյուղատնտեսությունում ռիսկերի գնահատման ապահովագրական համակարգի ներդրման կառուցակարգերի մշակումը

Աշխատանքի նպատակը՝ ռիսկերի գնահատման և գյուղատնտեսության ապահովագրության միջազգային փորձի ուսումնասիրման, գյուղատնտեսական ռիսկերի գնահատման մեթոդաբանության և ցուցանիշների համակարգի մշակման, գյուղատնտեսության ապահովագրության ներդրման խոչընդոտների վերհանման, դրանց կանխարգելման տարբերակների առաջարկման, ապահովագրական սակագների հաշվարկման, պետական աջակցության ձևերի ընտրության, սուբսիդիաների սահմանաչափերի սահմանման, իրավական դաշտի կարգավորման մոտեցումների հիման վրա մշակել ՀՀ-ում գյուղատնտեսական ռիսկերի գնահատման և ապահովագրական համակարգի ներդրման համապատասխան կառուցակարգեր:

ՀՀ-ում գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման 2014-2024թթ. զարգացման ծրագրի մշակում

Աշխատանքի նպատակը՝ փոքր չափեր ունեցող տնտեսությունների՝ հողային, ջրային և աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, ներդրանքների մատակարարման, արտադրանքի իրացման, վարկավորման և ապահովագրության, նրանց փոխհարաբերությունների կատարելագործման նպատակով կոոպերացիայի տարբեր ձևերի ներդրման հիմունքների և ծրագրի մշակում:

6.4. Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն մասնաճյուղ

Հայաստանի Հանրապետության առաջնահերթ խնդիրներից է գյուղատնտեսական մթերքների արտադրության ընդլայնումը, կենսատեխնոլոգիայի կիրառումը դառնում է ավելի հրատապ՝ հատկապես մշակաբույսերի առողջացման և մասսայական արտադրության գործում:

Կենտրոնում գիտահետազոտական աշխատանքներ են իրականացվում գյուղատնտեսական մշակաբույսերի, մասնավորապես՝ կարտոֆիլի, ունաբի, խաղողի, անփուշ մոշի, կորիզավորների կլոնային պատվաստակալների, դեկորատիվ մշակաբույսերից՝ վարդի, մեխակի, քրիզանթեմի, յուստումայի, շուշանի, գլոքսենիայի, մանուշակի, ֆիկուսի, դեղաբույսերից՝ ստեվիայի, միրտի in vitro բազմացման տեխնոլոգիաներ մշակելու ուղղությամբ:

Բույսերի բազմացման ավանդական մեթոդների համեմատ կենսատեխնոլոգիական մեթոդներով բույսերի բազմացումը ունի մի շարք առավելություններ:

Այդ մեթոդների կիրառմամբ կարելի է ողջ տարվա ընթացքում, սահմանափակ տարածության մեջ, կախում չունենալով սեզոնային փոփոխություններից, արագ ու արդյունավետ եղանակով ստանալ գյուղատնտեսական մշակաբույսերի առողջ, միատարր, մեծաքանակ տնկանյութ:

Կարտոֆիլի համար արդեն մշակված է ամբողջական տեխնոլոգիա, որը հնարավորություն է տալիս կազմակերպել միջազգային ստանդարտներին համապատասխան կարտոֆիլի բարձրորակ տնկանյութի արտադրություն:

Հյուսվածքային կուլտուրաների կիրառմամբ մշակվել են նաև ծաղկային ու դեկորատիվ կուլտուրաների (մեխակ, Էուստոմա, գլոքսենիա և այլն), դեղաբույսերի (Ստեվիա և այլն), անփուշ մոշի առողջացված տնկանյութի զանգվածային արտադրման ամբողջական տեխնոլոգիաներ:

Աշխատանքերը շարունակվում են կորիզավոր կուլտուրաների (ծիրան, դեղձ) կլոնային պատվաստակալների բազմացման տեխնոլոգիաների բարելավման ուղղությամբ:

Մշակված է ունաբենու առողջացված տնկանյութի զանգվածային բազմացման ամբողջական տեխնոլոգիան:

2013 թ. կատարվել է միկրոբազմացման տեխնոլոգիաների մշակում մեխակի երեք հեռանկարային սորտերի համար (Չագոր, Մադամ Կոլետ, Ռուդոլֆ): Այս սորտերի առողջացված բույսերը կարելի է բազմացնել արտադրական նպատակներով:

Կենսատեխնոլոգիական մեթոդների կիրառմամբ կատարվել են աշխատանքներ խաղողի տեղական անհետացող սորտերի (կաքավիկ, Նազելի) վերականգման ուղղությամբ, որն ունի կարևոր նշանակություն նաև գենոֆոնդի պահպանման տեսանկյունից:

Փորձարկումները իրականացվում են խաղողի 6 սորտի և 1 կլոնի վրա՝ Խիշրաու, Դեղին քիշմիշի կլոն, Դեղին քիշմիշ, Փարվանա, Սև քիշմիշ, Վարդագույն քիշմիշ, Մարմարի: Ներկայումս աշխատանքները ընթանում են թե լաբորատոր, և թե ջերմատնային պայմաններում (բույսերի ադապտացում): Պատրաստի տնկանյութը կտրամադրվի 2014 թ. մայիսին:

Խաղողի in vitro բույսերը լինելով փոքր ի տարբերություն ավանդական եղանակով բազմացված տնկանյութի կարիք են զգում ջերմատնային պայմաններում հետագա խնամքի: Գիտական կենտրոնը չունի հատուկ մասնագիտացված ջերմատներ և ջերմատնային պայմաններ, որոնք ապահովեն մասսայաբար բազմացրած խաղողի in vitro բույսերի հետագա խնամքը:

Գիտական կենտրոնի բույսերի գենբանկ ում իրականացվում են տեղական ծագման մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների գենետիկական ռեսուրսների ձեռք բերում, ռեգեներացիա, բնութագրում և պահպանում:

2013 թ. իրականացվել է միջազգային երկու և տեղական մեկ գիտարշավ:

1.VIR-ի (Համառուսաստանյան բուսաբուծության ինստիտուտ) և Նիդերլանդների՝ Վագենինգենի համալսարանի մասնագետների մասնակցությամբ:

Տեղական գիտարշավ՝ Հանրապետության տարբեր մարզերից հավաքվել են գյուղատնտեսական տարբեր կուլտուրաների և դրանց վայրի ազգակիցների սերմեր գենբանկում պահպանելու նպատակով:

Ներկայումս Գենբանկում պահպանվում է շուրջ 2600 սերմերի նմուշներ, որոնք դրված են երկարատև պահպանության (- 18՝ C ` 50-100 տարի տևողությամբ):

Գենբանկում in vitro պայմաններում պահպանվում են վեգետատիվ բազմացող մշակաբույսերի (կարտոֆիլ, ունաբ, Խաղող, ծիրան, դեղձ, նուշ) թվով 150 նմուշներ: Այս տարի նախատեսվում է իրականացնել ևս մեկ տեղական գիտարշավ:

Գիտական կենտրոնի մասնաճյուղի աշխատակիցները տպագրել են տասը գիտական հոդված:

6.5.«Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի» գիտական կենտրոն մասնաճյուղ թեմատիկ ֆինանսավորման գծով 2013 թ. կատարվել ավարտվել են 3 թեմաներ՝ 5-ական կատարողներով /ընադամենը 15 կատարող/ և 1 հիմնարար-կիրառական համաֆինանսավորմամբ ծրագիր 6 կատարողներով:

Գյոթալ կլիմայափոխության ազդեցությունը լանջային ագրոցենոզների անապատացման գործընթացների վրա և դրա դեմ պայքարի արդյունավետ միջոցառումների մշակումը 11-1c090 ծածկագրով

Չետագոտական ծրագրի շրջանակներում հանրապետության լեռնատափաստանային գոտու երոզացված լանջային ագրոցենոզներում՝ /վարելահողեր, գյուղատնտեսական կերահանդակներ, դաշտապաշտպան անտառաշերտեր/ ուսումնասիրվել է համընդհանուր կլիմայափոխության ազդեցությունը երոզիոն գործընթացների ուղղորդվածության, լանջային վարելահողերում խոնավության և օրգանական ածխածնի պաշարների վրա:

Մասնատված փոքրածավալ լանջային վարելահողերում փորձարկվել է ոռոգման նոր ավելի խնայողական և քիչ ծախսատար եղանակներ, ինչպես նաև ճանապարհային երոզիայի հետևանքների բացահայտման և կանխարգելելու միջոցառումներ մշակվելու ուղղությամբ հետազոտություններ:

Ստացված արդյունքները ներդրվել են շուրջ 50 ֆերմերային տնտեսություններում, տրվել են ԳԱՄԿ-ին խորհրդատվական թերթիկներ

- «Մշակել Արարատյան հարթավայրի հողերի մելիորատիվ-էկոլոգիական վիճակի բարելավման նոր տեխնոլոգիաներ (ծածկագիր 11-4c091)»

Ուսումնասիրվել է կերակրի աղի էլեկտրաքիմիական ճանապարհով ստացված թթվային լուծույթների ազդեցությունը աղուտ-ավկալի հողերի մելիորատիվ վիճակի վրա: Ցույց է տրվել, որ այդ լուծույթների օգտագործումը հնարավորություն է տալիս բարելավել ավկալիցած հողերի քիմիական և ֆիզիկական հատկությունները, բարձրացնում դրանց բերրիությունը:

- «Էկոլոգիական կատակլիզմների ազդեցությունը հողի ֆաունայի կենսաբազմազանության վրա» (ծածկագիր 11-1f 339)

Աշխատանքի նպատակն էր. կլիմայական փոփոխությունների պայմաններում Չայաստանի տարբեր բնակլիմայական գոտիներում ուսումնասիրել հողային ֆաունայի կենսաբազմազանության փոփոխությունները և գնահատել հողի համաճարակաբանական նշանակությունը կենդանիների և մարդու առողջության պահպանման գործում:

Մշակվել է մեթոդական ցուցում և խորհրդատվական թերթիկ և բաժանվել ԳԱՄԿ-երին:

- Չիմնարար-կիրառական ծրագրի գծով՝ «Նանոակվախելատային մետաղների կիրառման ազդեցությունը աղտոտված հողերի բերրիության

վերականգնման և Էկոլոգիապես անվտանգ սննդամթերքների ստացման գործընթացում»

Հայաստանի հանրապետությունը այն տարածաշրջաններից է, որտեղ Էկոլոգիան գտնվում է ոչ բարելավ վիճակում՝ կապված տնտեսական զարգացման ուղղությունների, երկրաբանական կառուցվածքի, սակավահողության, սակավաջրության, բնակչության խտության, ինչպես նաև մաքրող սարքավորումների բացակայության հետ:

Հայաստանում առկա էին ավելի քան 70 իսկ այժմ 85-90 հազ. հա ծանր մետաղներով տարբեր աստիճանի աղտոտված հողեր, որոնց բերրիության բարձրացումը և Էկոլոգիապես անվտանգ գյուղատնտեսական մթերքի ստացումը ունի գիտական, կիրառական, սանիտարահիգիենիկ, տնտեսական և բնապահպանական նշանակություն:

3. Պետրոսյանի անվան Հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոնը այն գիտական կառույցն է, որը իրականացնում է հողերի գենեզիսի, դրանց զարգացման, աշխարհագրական տարածման օրինաչափությունների, ագրոարտադրական խմբավորման, հողերի շրջանացման, բոնիտիրովայի, որակական և տնտեսական գնահատման, հողային կադաստրի գիտական հիմնավորման, հողերի դասակարգման, նոմենկլատուրայի, բնահողային և ագրոկլիմայական գոտիների առանձնացման և բնութագրման, Էրոզիոն գործընթացների, հակաէրոզիոն միջոցառումների, հողագոյացման և հողմահարման պրոցեսների առանձնահատկությունների, աղուտ-ալկալի հողերի մելիորացիայի նոր մեթոդների, երկրորդային-աղակալման ալկալիացման դեմ պայքարի, հողերի ֆերմենտատիվ ակտիվության և կենսաքիմիայի, հողերի բերրիության պահպանման և բարձրացման, տարբեր մշակաբույսերի պարարտացման օպտիմալ չափաբաժինների որոշման, նոր պարարտանյութերի ստացման և փորձարկման, հողերի մակրո և միկրո սննդատարրերով ապահովվածության աստիճանների հետազոտման, հողերի ֆիզիկական, ֆիզիկա-մեխանիկական, ջրաֆիզիկական, ֆիզիկա-քիմիական և այլ հարցերի ուսումնասիրություններ:

Աշխարհում ընթացող կլիմայափոփոխության ներկայիս պայմաններում, մեր երկիրը դժվարությամբ կարող է դիմակայել անապատացման այնպիսի երևույթների դեմ, ինչպիսին է հողային հատկությունների վատթարացումը կամ հողերի դեգրադացիան իր բոլոր բացասական դրսևորումներով: Նշվածը բացատրվում է

նաև նրանով, որ Հայաստանը գտնվում է մերձարևադարձային չոր կլիմայական գոտում և իր վրա է կրում տարածաշրջանի արիդացման ամբողջ բարդությունները: Միայն հողերի արդյունավետ օգտագործումն է, որ պետք է հնարավորություն ընձեռնի երկրին լուծելու այնպիսի ռազմավարական նշանակություն ունեցող խնդիրներ, ինչպիսիք են՝ ապահովել երկիրը սեփական հացով, կարտոֆիլով, վերամշակող ձեռնարկությունները՝ գյուղատնտեսական մթերքներով, անասնապահությունը և թռչնաբուծությունը՝ կերային պաշարներով և այլն: Այսինքն, այս բոլորը հանդիսանում են նաև ազգային անվտանգության նշանակություն ունեցող խնդիրներ:

2013թ. ընթացքում անգլիական Գեոդիմ կազմակերպության հետ կատարվել է «Ամուլսարի հանքավայրի հողերի հիմնական տիպերի կառուցվածքի և ֆիզիկաքիմիական կազմի հետազոտություն, և ներկայացվել հաշվետվություն:

«Արփա - Սևան» կազմակերպության «ԾԻԳ»-ի հետ ուսումնասիրվել է Արարատյան հարթավայրի /Մասիս, Էջմիածին/ գետնաշրերի իջեցման հետևանքով հողերի ֆիզիկաքիմիական, ջրաֆիզիկական հատկությունների փոփոխությունները:

Ստացված արդյունքների հիման վրա 2012-2013 թթ հրատարակվել է շուրջ 55 գիտական հոդված, որոնց զգալի մասը միջազգային պարբերականներում, ինչպես նաև մեկ կոլեկտիվ մոնոգրաֆ աշխատանք տպագրված Իտալիայում /2013թ./:

6.6. «Խաղողապտղագինեգործության» գիտական կենտրոնի մասնաճյուղ

Գիտական կենտրոնի 2013 թ. գիտական գործունեությունը.

ՀՀ պետական բյուջեից բազային ֆինանսավորման ծրագրի շրջանակներում 2013թ. հետազոտական աշխատանքները իրականացվել են քիչ տարածված, անհետացման եզրին գտնվող, նոր հայտնաբերված սորտերի և կլոնների հայտնաբերման, ուսումնասիրության և բազմացման ուղղությամբ:

Աշխատանքներ են տարվել նաև մի շարք սորտերի ագրոկենսաբանական առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրության հիման վրա այգիների խնամքի (մասնավորապես՝ էտ և ձևավորում) տեխնոլոգիաների մշակման ուղղությամբ:

Պտղաբուծության մասնագետների կողմից աշխատանքներ են իրականացվում նոր բարձրարժեք սորտերի հայտնաբերման և ուսումնասիրման ուղղությամբ:

Գինեգործության ոլորում իրականացվում են բուսական արտադրության տարբեր ծագմամբ սպիրտների հնեցման և տարբեր տիպայնությամբ գինեյությունների

(մուսկատային, շամպայն, լիկյորային և այլն) ստացման տեխնոլոգիաների մշակման ուղղությամբ:

Ֆիզիոլոգիայի բնագավառում աշխատանքներ են իրակացվում Հայաստանի ազգային ագրարային համալսարանում և Կենսատեխնոլոգիայի ինստիտուտում ստացված օրգանական կենսապարարտանյութերի (ԱՏՖ, Կոմպլեքսոն, Ազոտովիտ և Ազոցեովիտ-1) փորձարկման ուղղությամբ:

Վերոհիշյալ պրեպարատները հանդիսանում են նաև աճի խթանիչներ և նպաստում են խաղողի կտրոնների արմատագոյացմանը, կտրոնների կաչողականության բարձրացմանը և բարձրորակ տնկանյութի ստացմանը:

Պայմանագրային թեմատիկ ծրագրի շրջանակներում աշխատանքներ են իրականացվում «սառցե գինի»-ների ստացման տեխնոլոգիաների մշակման ուղղությամբ:

«Հայաստանի հանրապետությունում խաղողի թանկարժեք և հազվագյուտ որոշ սորտերի բազմացման արդյունավետ տեխնոլոգիաների մշակում ու դրանց հիման վրա այդ սորտերի մայրուտային այգու հիմնում» նպատակային ծրագրի հիմնական նպատակն է՝ մշակել և ներդնել խաղողի արժեքավոր, հազվագյուտ, քիչ տարածված որոշ սորտերի բազմացման արդյունավետ մեթոդներ, դրանց կիրառմամբ հիմնել համապատասխան մայրուտային այգի և տալ այդ սորտերից ստացված արտադրանքի համալիր վերամշակման օպտիմալ տեխնոլոգիաները: Մասնավորապես խոսքը վերաբերվում է քիշմիշային և մուսկատային սորտերին:

Ծրագրի շրջանակներում մայիս ամսի վերջին և հունիսի առաջին տասնօրյակում սկսվեցին ծրագրով նախատեսված սելեկցիոն աշխատանքների իրականացումը՝ Արմավիրի մարզի Բաղրամյանի տարածաշրջանի Դալարիկի խաղողի մշակությամբ զբաղվող ֆերմերային տնտեսությունում:

Խաչասերումները իրականացվել են 7 զուգակցությունների շուրջ 40 ողկույզների վրա:

Ընթացքի մեջ են ապրոբացիոն աշխատանքները, որի նպատակն է խաղողագործական շրջաններում թանկարժեք սորտերի և դրանց կլոնների հայտնաբերումը:

Գիտական կենտրոնը Եվրոպական COST ծրագրի շրջանակներում գենետիկական ուսումնասիրությունների ասպարեզում համագործակցում է ինչպես եվրոպական առաջատար գիտական ինստիտուտների, այնպես էլ Հայաստանի պետա-

կան համալսարանի Գենետիկայի և բջջաբանություն և Էկոլոգիայի լաբորատորիայի հետ:

Վերոհիշյալ կազմակերպություններին պարբերաբար տրամադրվում է խաղողի կտրոններ, տերևներ և պտուղներ:

Համագործակցություն է իրականացվում նաև «ՀԱԱՀ» հիմնադրամի «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն» մասնաճյուղի հետ՝ խաղողի “in vitro” բազմացման աշխատանքների շրջանակում:

2013թ գիտական կենտրոնի աշխատակիցների կողմից հրատարակվել է 6 հոդված, 1 մենագրություն և ստացվել է ՀՀ գյուտի 2 արտոնագիր, 5 հոդվածներ գտնվում են խմբագրություններում, իսկ մոտ 10-ը նախատեսվում է հանձնել տպագրության:

7. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԾՐԱԳՐԵԻ ԿԵՆՏՐՈՆԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայումս տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) և ինովացիոն ծրագրերի (ԻԾ) կենտրոնի կազմի մեջ ընդգրկված են հետևյալ ստորաբաժանումները՝ գիտական գրադարանը, տեղեկատվական համակարգերի կառավարման բաժինը, սպասարկման բաժինը, արտաքին կապերի դեպարտամենտը, կարիերայի զարգացման և խորհրդատվության կենտրոնը, տեղեկատվական տեխնոլոգիաների գիտելիքի բաժինը, պատմության թանգարանը, ինչպես նաև Էլեկտրոնային ուսուցման և ինտերնետ կապի համակարգչային կաբինետները:

SS և ԻԾ կենտրոնի գործունեության նպատակն է՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ուսումնասիրությունը և առավել արդյունավետ կիրառումը ուսումնական գործընթացում ու գիտական հետազոտություններում, նորագույն տեխնոլոգիաներին համապատասխան գրադարանային գործի կազմակերպումը և շարունակական զարգացումը, համալսարանում համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաների պատշաճ ուսուցումը, համակարգչային հրատարակչական աշխատանքների իրագործումը, համակարգչային սարքավորումների սպասարկումը և վերազինումը, համալսարանի կառավարման համակարգում տեղեկատվական միասնական քաղաքականության մշակումը և իրականացումը, նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը և արդյունավետ կիրառումը, ինչպես

նաև տեղեկատվության և տեղեկատվական գիտելիքի ստացման, ուսումնասիրության, վերլուծության, մշակման, տարածման աշխատանքների իրականացումը:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնն իրականացրել է համալսարանի գրադարանային գործի ավտոմատացման, գրքային ֆոնդի համալրման, ինչպես նաև ընդհանուր գրադարանային աշխատանքների արդյունավետության բարձրացմանն ուղղված բազմաթիվ այլ գործողություններ, այդ թվում՝ պաշտոնական կայքէջի զարգացմանն ուղղված միջոցառումներ և համալսարանի արտաքին կապերի և միջազգային ծրագրերի զարգացմանն ուղղված գործընթացներ: Շարունակվում են նաև էլեկտրոնային դեկանատների, էլեկտրոնային ուսուցման, ներքին փաստաթղթաշրջանառության, էլեկտրոնային լսարանային ֆոնդի ընդլայնման և մի շարք այլ համակարգերի ստեղծման ու զարգացման աշխատանքները:

Ուսումնական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու և ուսանողներին ինտենսիվ մեթոդներով գիտելիքները յուրացնելու նպատակով պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար կազմակերպվում են տեղեկատվության կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների կրթության, ինչպես նաև համակարգչային հմտությունների դասընթացներ:

2013 թվականին տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի կենտրոնի կողմից իրականացված աշխատանքներից առավել հատկանշական են.

- SS և ԻԾ կենտրոնի աշխատակիցների մասնակցությունը ավելի քան 40 տարաբնույթ, համապատասխան ոլորտներին վերաբերող սեմինարների, կոնֆերանսների և նմանատիպ այլ միջոցառումներին:

- Կենտրոնի կողմից ստեղծված 2 էլեկտրոնային լսարանները: 2013թ. փետրվար ամսին կենտրոնը «Վիվասել USU» ընկերության հովանավորությամբ իրականացրեց էլեկտրոնային համակարգչային լսարանի կահավորում՝ 10 համակարգիչներով, էլեկտրոնային գրատախտակով: Իսկ արդեն հոկտեմբեր ամսին համալսարանի ֆինանսավորմամբ բացվեց երկրորդ համակարգչային լսարան-լաբորատորիան արդեն 16 համակարգիչներով և նույն տեխնիկական հագեցվածությամբ: Այստեղ ուսանողները կարող են մասնագիտական հմտություններ ավելացնել այն առարկաների գծով, որոնց ուսուցանումը պահանջում է համակարգչային տեխնիկայի և արդի ծրագրերի կիրառում:

- 2013 թ. սկզբից Կենտրոնն անցկացնում է դասախոսների համակարգչային վերապատրաստման դասընթացներ: Դասընթացներին առաջինը մասնակցեցին

գյուղմեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի ֆակուլտետի դասախոսները: Գործընթացը շարունակական է և ներգրավելու է բուհի բոլոր ֆակուլտետների դասախոսներին: Դասընթացների հիմնական նպատակն է աշխատակազմին ուսուցանել ժամանակակից ծրագրերով, որը կնպաստի բուհում՝ էլեկտրոնային ուսուցման արդեն իսկ սկսած ծրագրերի առավել ընդգրկուն և արդյունավետ կազմակերպմանը:

– Ուսումնական գործընթացների ավտոմատացման ուղղությամբ, Կենտրոնը համակարգչային ծրագրավորման կենտրոնի հետ համատեղ, հաշվետու տարում մշակեց բուհի էլեկտրոնային դասացուցակի ամբողջական ավտոմատացման համակարգի տեխնիկական պլան առաջադրանքը: Աշխատանքների ավարտը և ծրագրի վերջնական ներդրումը նախատեսվում է 2014թ. սեպտեմբերի 1-ը:

– 2013թ. ապրիլի 15-ից «Ազգային գրադարանային շաբաթվա» շրջանակներում ՏՏ և ԻԾ կենտրոնը և գրադարանը կազմակերպեցին «Գրադարան, այժմ նաև թվային» կարգախոսով միջոցառումների շարք: Յուրաքանչյուր ֆակուլտետի համար առանձին ներկայացվեց «ՀԱԱՀ-ի էլեկտրոնային գրադարանի զարգացման նոր ուղիները և հեռանկարները, առաջարկվող ծառայությունները» թեմայով դասախոսություն, ինչպես նաև ներկայացվեց գրադարանի նոր կայքէջը, նրա բաժիններն ու առավելությունները:

– Ապրիլի 17-19-ը կայացած «ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2013» XI միջազգային ցուցահանդեսին ՀԱԱՀ-ը ներկայացնում էր ՏՏ և ԻԾ կենտրոնը, ինչի համար կենտրոնի կողմից պատրաստվեցին համալսարանի բոլոր կարևորագույն ստորաբաժանումները ներկայացնող բազմաթիվ պաստառներ, բուկլետներ և այլ տեղեկատվական նյութեր: Կենտրոնը 2013 թվականին ներկայացրել է ԲՈՒՀ-ը և նրանում իրականացվող տեղական ու միջազգային ծրագրերը բազմաթիվ տեղեկատվական ցուցահանդեսների և միջոցառումների ժամանակ:

– Կենտրոնը համալսարանում իրականացրել է ամբողջ համակարգչային տեխնիկայի և հարակից սարքավորումների գույքագրում, որի արդյունքում բացահայտվել և շտկվել են մի շարք խնդիրներ, ինչպես նաև առավել արդյունավետ կերպով բաշխվել է 2013 թվականին ստացված համակարգչային տեխնիկան:

ՏՏ և ԻԾ կենտրոնի կողմից բոլորովին վերջերս ստեղծվել են Շրջանավարտների միավորման և Աշխատանքի տեղավորման ու խորհրդատվության կենտրոնի

երկու նոր առանձին կայքէջեր, որոնց շնորհանդեսները տեղի կունենա մոտ ժամանակներս:

«Շրջանավարտների միավորման» կայքի ստեղծման նպատակն է համալսարանի՝ հայաստանաբնակ և արտասահմանում գտնվող շրջանավարտների առավել պարզ եղանակով և լայնամասշտաբ ներգրավումը շրջանավարտների միավորման կազմում, ինչպես նաև շրջանավարտներին բուհի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը և նախատեսվող ծրագրերին մասնակցությունն ցուցաբերելու մոտիվացումը:

Կայքը կարող է յուրօրինակ գործիք հանդիսանալ համալսարան-շրջանավարտ փոխադարձ կապի հաստատման ու ամրապնդման, ինչպես նաև՝ համալսարանի գիտաարտադրական գործունեության և միջազգային համագործակցության զարգացման համար: Արդեն իսկ թվայնացվել են շրջանավարտների միավորման բոլոր անդամների վերաբերյալ հավաքագրված տվյալները, և ստեղծվել է բազա, որն արդեն կարող է համալրվել նաև առցանց եղանակով, աշխարհի ցանկացած վայրից:

Երկրորդը՝ «Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության կենտրոնի» կայքն է, որը հնարավորություն կտա ստանալ կարիերայի պլանավորման և հետագա զարգացման հետ կապված բոլոր անհանգստացնող հարցերի պատասխանները: Կտրամադրի խորհրդատվությունն ռեզյումեների և ուղեկից նամակների կազմման, հարցազրույցների և աշխատանքի որոնման տեխնիկայի վերաբերյալ, գալիք սեմինարների, ինչպես նաև կտեղեկացնի առկա թափուր աշխատատեղերի մասին:

Կայքէջը մեծապես կնպաստի շրջանավարտների աշխատանքի տեղավորման խնդիրների լուծմանը, քանի որ ստեղծելով տվյալների բազա, որտեղ յուրաքանչյուր շրջանավարտի վերաբերյալ զետեղված է մանրամասն տեղեկատվություն, գործատուին հնարավորություն է ընձեռվում անմիջականորեն ընտրություն կատարելու և կապ հաստատելու համապատասխան շրջանավարտի հետ:

2013 թվականին տեղեկատվության տարածման ոլորտում իրականացվեցին այնպիսի աշխատանքներ ինչպիսիք էին բուհի ներկայացումը Վիքիպեդիա ինտերնետային համաշխարհային հանրագիտարանում, մոտ 45-ից ավելի ներկայացուցչական միջազգային տեղեկատվական և ռեյտինգային կայքերում:

Մեծ մասայականություն վայելեց բուհի պաշտոնական ներկայացումը ֆեյսբուք սոցիալական ցանցում, որի միջոցով ավելի լայն զանգված է տեղեկանում ամենօրյա նորություններին և անհրաժեշտ տեղեկատվությանը: 2013 թվականին բոլոր

ստորաբաժանումների ու դեկանատների համար ստեղծվեցին և գործածության մեջ դրվեցին պաշտոնական էլեկտրոնային փոստեր:

Արտաքին կապերի դեպարտամենտի կողմից 2013 թվականին մասնակցության հայտ է ներկայացվել ավելի քան 20 միջազգային ծրագրերի, որի արդյունքում համալսարանը ձեռք է բերել 3 «Տեմպուս», 2 «Էրասմուս մունդուս» և մեկ դրամաշնորհային ծրագիր՝ ևորարարությունների մրցակցային հիմնադրամի հետ համատեղ: Եվրոպական հանձնաժողովի ֆինանսավորմամբ ներկայումս ՀԱԱՀ-ում հաշտողությամբ իրականացվում է 6 «Տեմպուս» ծրագրեր և ավարտվել են 2-ը:

2013թ. դեկտեմբերի 5-ին տեղի ունեցավ աշխատանքի տեղավորման և խորհրդատվության կենտրոնի կողմից կազմակերպված հերթական աշխատանքի տոնավաճառը՝ ավելի քան 30 գործատու կազմակերպությունների մասնակցությամբ: 2014-2015 ուսումնական տարվա ՀԱԱՀ-ի ընդունելության համակարգում տեղի ունեցած փոփոխությունների տարածման և լուսաբանման համար Կենտրոնի կողմից ձևավորվել ու տպագրվել է հայտարարության թերթիկ, որի մասին իրազեկվել են հանրապետության բոլոր դպրոցների տնօրենները՝ ծանուցում ստանալով էլեկտրոնային և ավանդական փոստի միջոցով:

Կենտրոնի կազմում գտնվող բաժինների կողմից բացի վերոնշյալ աշխատանքներից իրականացվել են նաև տարաբնույթ այլ աշխատանքներ, որոնք առավել հանգամանորեն ներկայացված են ստորև՝ համապատասխան ենթաբաժիններում:

7.1. ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գրադարանն արդեն մի քանի տարի է հանրապետության խոշոր գրադարանների հետ միասին իրականացնում է էլեկտրոնային գրացուցակի ստեղծման աշխատանքները: ՀԱԱՀ-ի գրադարանը, նպատակ ունենալով շարունակել գրադարանային գործընթացների ավտոմատացման աշխատանքները, ձեռնամուխ եղավ ընթերցողների սպասարկման աշխատանքների թվայնացմանը, ավտոմատացմանը: Այս նպատակով ուսումնասիրվեցին բաց կոդերով «Էվերգրին» և «Կոհա» համակարգերը, որի արդյունքում որոշվեց գրադարանում ներդնել «Կոհա» համակարգը:

Հանրապետության մի քանի խոշոր գրադարաններում արդեն իսկ սկսվել են գրացուցակավորման աշխատանքները «Կոհա» համակարգով, սակայն ընթերցողների սպասարկման աշխատանքները այդ համակարգով, հանրապետությունում

առաջինն իրականացրեց Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գրադարանը:

Համակարգն ունի մի շարք առավելություններ, մասնավորապես՝ գրադարանի գրացուցակի էլեկտրոնային տարբերակը հասանելի է նաև գրադարանի տարածքից դուրս առանց ժամանակային սահմանափակման, փնտրման արդյունքում արտացոլված ինֆորմացիան ավելի լիարժեք է, ունի փնտրման ավելի լայն հնարավորություն, հնարավոր է արագ ստուգել, թե գիրքը, որ գրապահոցում, կամ որ ընթերցողի մոտ է, ավելի հստակ կարելի իմանալ, թե որ գրքից քանի օրինակ կա գրադարանում, որ գրականությունն է ավելի շատ ընթերցվում:

Ընթերցողը կարող է գիրք պատվիրել առանց գրադարան այցելելու, ինքնուրույն կարող է ստուգել, թե քանի գիրք ունի գրադարանից վերցրած և երբ պետք է դրանք վերադարձնի:

2007թ. ALEPH ծրագրով մուտքագրված գրականության բազան ALEPH ծրագրի ադմինիստրատորի կողմից տրամադրվեց գրադարանի աշխատակիցներին, որից հետո համալրման և մշակման բաժնի աշխատակիցները սկսեցին տվյալ բազայի խմբագրման աշխատանքները: Համալրման և մշակման բաժնի աշխատակիցները ուսումնասիրեցին KOHA գրադարանային ծրագիրը և կատարեցին այդ ծրագրի համապատասխանեցումը ՀԱԱՀ-ի գրադարանի պահանջներին: Այս աշխատանքների ավարտից հետո սկսվեց ընթերցողական էլեկտրոնային քարտերի պատրաստման աշխատանքները:

ՀԱԱՀ-ի գիտական գրադարանի ֆոնդը առ 01.01. 2014 թ. կազմում է **558668** միավոր գրականություն:

Ըստ հրատարակության տեսակի՝

Ըստ լեզուների՝	միավոր գրականություն	ըստ գրականության տեսակի	միավոր գրականություն
հայերեն	179105	ուսումնական	191445
ռուսերեն	363590	գիտական	311137
այլ	15973	գեղարվեստական	51224
		փոխանակման ֆոնդ	4862

Հաշվետու տարվա ընթացքում ստացվել է 6356 միավոր (584 անուն)

գրականություն

այդ թվում՝		որից՝		ըստ լեզուների՝	
գիրք, բրոշյուր	6286	գիտական	1342	հայերեն	5909
ամսագիր	581	ուսումնական	5428	ռուսերեն	662
ատենախոսություն	70	գեղարվեստական	167	այլ	366

2013 թ. ստացված գրականության քանակը՝ ըստ համալրման աղբյուրների

Համալսարանում հրատարակված,	5008	միավոր	104	անուն
որից՝ մեթոդական ցուցումներ	1786	միավոր	89	անուն
Պայմանագրային ձևով	49	միավոր	4	անուն
Գրախանութներից և տարբեր կազմակերպություններից գնված	23	միավոր	4	անուն
Նվիրատվության կարգով	682	միավոր	176	անուն
Ընթերցողների կողմից կորցրած գրականության փոխարեն ձեռք բերված	252	միավոր	12	անուն
Ամսագրեր	581	միավոր	5	անուն
Ատենախոսություն	70	միավոր	70	անուն
ՄԱԿ-ի Գյուղատնտեսության և պարենի կազմակերպություն (ՖԱՕ)	235	միավոր	209	անուն
Վերականգնված գրականություն	37	միավոր	0	անուն

Հաշվետու տարում ՀԱԱՀ-ի գրադարանը մասնաճյուղերին տրամադրել է **451** միավոր գրականություն:

Արցախի մասնաճյուղին	334	միավոր գիրք
Սիսիանի մասնաճյուղին	44	միավոր գիրք
Վանաձորի մասնաճյուղին	73	միավոր գիրք

Ընթերցողների հաճախումը սպասարկման բոլոր կետերում կազմում է **118.058** հաճախում:

Այդ թվում՝

Բաժին	Հաճախում
աբոնեմենտում	46664
ընթերցասրահներում	52969
Էլեկտրոնային ընթերցասրահներում	6375
սպասարկման այլ կետերում	12050

Հաշվետու տարում սպասարկված գրականության քանակը կազմում է **109.327** միավոր գրականություն

2007թ.-ից գրադարանը կատարում է ALEPH գրադարանային ծրագրով գրականության մուտքագրում, մասնակցելով Հայաստանի գրադարանների Էլեկտրոնային համահավաք գրագուցակի ստեղծման աշխատանքներին: 2013թ. գրականության մուտքագրումը կատարվում է նաև Կոհա գրադարանային ծրագրով:

2013 թ. Էլեկտրոնային գրագուցակի ստեղծման նպատակով մուտքագրվել է

8.710 անուն գրականություն կամ 34. 226 միավոր գրականություն

2007 - 2013 թթ մուտքագրվել է

62.481 անուն գրականություն կամ 340.307 միավոր գրականություն

Վեց տարվա ընթացքում մուտքագրվել է ֆոնդի 61 %-ը :

Գրադարանի կայքում ներկայացված են համալսարանի գրադարանում առկա էլեկտրոնային գրքերը և նյութերը: Գրադարանում առկա, բայց քիչ օրինակ գրքերը և մնացած նյութերը, որոնք մեծ պահանջարկ ունեն ընթերցողների շրջանում թվայնացվում են (սկաների միջոցով) և տեղադրվում գրադարանի ինտերնետային կայքում: Թվայնացման համար ընտրվում են այն գրքերը, որոնց քանակությունը քիչ է, իսկ պահանջարկը՝ շատ: Արդեն ավելի քան **430** գրքի էլեկտրոնային տարբերակ կա ՀԱԱՀ-ի գրադարանի կայքում: Տպագիր աշխատությունների թվայնացված տարբերակները հասանելի են ավելի մեծ լսարանի, ֆիզիկապես չեն մաշվում և հեշտ են բազմացվում:

2007 թվականից Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը՝ փետրվարի 19-ը, Հայաստանի Հանրապետությունում նշվում է որպես գրքի նվիրատվության օր: Այս տոնի կապակցությամբ, ՀԱԱՀ-ի գրադարանը փետրվարի 13-22 հայտարարել էր գրքի նվիրատվության օր, իսկ փետրվարի 19-ին տեղի ունեցավ բաց դաս՝ Հովհաննես Թումանյանը թեմայով: Բաց դասը ՀԱԱՀ-ի գրադարանի հետ համատեղ կազմակերպել էր հայոց և ռուսաց լեզուների ամբիոնի դասախոս Կարինե Գևորգյանը՝ ՀԱԱՀ-ի Գյուղատնտեսական քոլեջի «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (ավտոտրանսպորտում)» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողների մասնակցությամբ: Տոնի շրջանակներում դասախոսներն ու աշխատակիցները գրադարանին նվիրաբերեցին 250 օրինակ գրականություն:

2002 թվականից ՀՀ-ում անց է կացվում ազգային գրադարանային շաբաթը: ՀԱԱՀ-ի գրադարանում այն միշտ հազեցած է լինում մշակութային միջոցառումներով: Այս տարի Ազգային գրադարանային շաբաթը մեկնարկեց ապրիլի 15-ին և կարգախոսն էր՝ «Գրադարան, այժմ նաև թվային»: Գրադարանային շաբաթվա շրջանակներում ՀԱԱՀ-ի ՏՏ և ԻԾ կենտրոնը նախաձեռնել էր մի շարք միջոցառումներ: Յուրաքանչյուր ֆակուլտետի համար առանձին ներկայացվեց «ՀԱԱՀ-ի էլեկտրոնային գրադարանի զարգացման նոր ուղիները և հեռանկարները, առաջարկվող ծառայությունները» թեմայով դասախոսություն, ինչպես նաև ներկայացվեց գրադարանի նոր կայքէջը, նրա բաժինները, առցանց պատվերի ձևը:

Ապրիլի 16-ից-18-ը ՀԱԱՀ-ի ճեմասրահում անցկացվեց ցուցահանդես-վաճառք, որտեղ ներկայացված էին Հայաստանի առաջատար հրատարակչություններն իրենց հրատարակած գրականությամբ:

Ապրիլի 17-ը դասախոսությունների և քննարկումների օր էր: 1-ին մասնաշենքի 329 լսարանում (փոքր դահլիճ) դասախոսությամբ հանդես եկան տ.գ.դ, ՀՀ Ագրարային քաղաքականության և խորհրդատվության ամբիոնի պրոֆեսոր, Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոնի տնօրեն Սամվել Ավետիսյանը և ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության հայաստանյան գրասենյակի տեղեկատվության գծով պատասխանատու Արմինե Հալաջյանը:

Մայիսի 3-ին ՀԱԱՀ-ի գրադարանում (302 սենյակ) տեղի ունեցավ Հովհաննես Շիրազին նվիրված բաց դաս: Բաց դասը կազմակերպել էին ՀԱԱՀ-ի գրադարանն ու հայոց և ռուսաց լեզուների ամբիոնը: Դասը վարում էր հայոց և ռուսաց լեզուների ամբիոնի դասախոս Գ. Կիրակոսյանը: Միջոցառմանը մասնակցում էին ՀԱԱՀ-ի Գյուղատնտեսական քոլեջի Ֆինանսներ (Ագրոպարենային համակարգում) մասնագիտության առաջին կուրսի ուսանողները, որոնք ներկայացրեցին հայ մեծանուն բանաստեղծի կենսագրությունը, ստեղծագործությունները:

Ավանդաբար ամեն տարի մայիսի նախավերջին կիրակին նշվում է իբրև Սայաթ-Նովայի հիշատակի օր՝ «Վարդատուն» անվանումով:

Մայիսի 21-ին «Վարդատուն»-ը նշվեց նաև ՀԱԱՀ-ում: Միջոցառումը կազմակերպել էին հայոց և ռուսաց լեզուների ամբիոնը, ՀԱԱՀ-ի ՏՏ և ԻԾ կենտրոնը, և գիտական գրադարանը: Գրադարանն այդ օրը վարդաշատ էր: Հայոց և ռուսաց լեզուների ամբիոնի դասախոսներ Արաքսյա Հակոբյանի, Գոհար Մաշուրյանի նախաձեռնությամբ առաջին կուրսի ուսանողները ներկայացրեցին աշուղ-բանաստեղծի ստեղծագործությունները: Հնչեցին աշուղի երգերը, ներկայացվեցին նրա երգերի հիման վրա բեմադրած պարերն ու անմահ ստեղծագործությունները:

Հայաստանի Հանրապետությունում հոկտեմբերի 7-ին նշվում է գրադարանավարի օրը: Մեր բուհում շատ կարևոր այս մասնագիտական տոնը ավանդաբար նշվում է հավուր պատշաճի եւ նշանավորվում ոլորտի հետ կապված առաջընթաց որելէ ձեռնարկով: Այս տարի այդ օրը նշանավորվեց վերանորոգված ընթերցասրահի բացմամբ, ինչպես նաև միջոցառման հյուրերին ներկայացվեց գրադարանի ավտոմատացման նոր «KOHА» համակարգը, իսկ 1-ին կուրսի ուսանողներին հանձնվեցին առաջին էլեկտրոնային ընթերցողական քարտերը: Տոնի գրական-գեղարվեստական մասն ապահովեցին քոլեջի ուսանողները՝ հայոց և ռուսաց լեզուների ամբիոնի դասախոս Կարինե Գևորգյանի ղեկավարությամբ:

Ուսանողները նաև 210 անուն գրականություն նվիրեցին գրադարանին: Գրադարանավարի օրը՝ հոկտեմբերի 7-ին, երկարամյա անբասիր աշխատանքի և գրադարանի օրվա կապակցությամբ, ՀԱԱՀ-ի մի շարք աշխատակիցներ պարզևատրվեցին Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պատվոգրով:

Դեկտեմբերի 11-ին, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գրադարանում, տեղի ունեցավ Ալբերտ Վաղարշակի Մանասյանի և Ֆիոդոր Բագրատի Ադամյանի «Անասնաբուժական թունաբանություն» գրքի շնորհանդեսը:

7.2.ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Հաշվետու ժամանակահատվածում ՀԱԱՀ-ի Արտաքին կապերի դեպարտամենտը համակարգված աշխատանքներ է իրականացրել ԱՊՀ, Եվրոպական և Ամերիկյան գործընկեր համալսարանների ու միջազգային ծրագրերի հետ՝ գործող ու նոր համագործակցության պայմանագրերի շրջանակներում:

ՀԱԱՀ-ի միջազգային կապերի զարգացմանը նոր լիցքեր հաղորդեց ս/թ հուլիսի 21-24-ը ռեկտոր Ա.Պ.Թարվերդյանի մասնակցությունը Գերմանիայում (Վայդենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարան) ագրարային բույերի ռեկտորների խորհրդի գիտաժողովին, ինչպես նաև ս/թ դեկտոմբերի 4-6-ը՝ ՀՀ կրթության և գիտության նախարար Ա.Աշոտյանի գլխավորած պատվիրակության այցելությանը Սլովակիա: Այցելության ընթացքում ՀԱԱՀ-ի և Սլովակիայի գյուղատնտեսական համալսարանի միջև կնքվեց համագործակցության հուշագիր, որը կնպաստի ՀԱԱՀ-ի մասնակցությանը երկկողմանի ծրագրերին, ինչպես նաև համատեղ միջազգային և մասնավորապես «Վիզեգրադ» ծրագրին:

2012-2013 ուս. տարվա ընթացքում դեռևս նախորդ տարիներից գործող շուրջ 50 համագործակցության պայմանագրերին ավելացան ևս մի քանիսը՝ Էլչեի Միգուել Ջերնանդես /Իսպանիա/, Ալմա-Լուրեա Իտալական համալսարանների ասոցիացիա, Վ.Է.Տաիրովի անվան Խաղողագործության և գինեգործության ինստիտուտ /Ռուսիա/, Լատվիայի գյուղատնտեսական համալսարան, Հանրապետական ունիտար ձեռնարկություն «Բելառուսի արտադրության գիտությունների ազգային ակադեմիայի գիտապրակտիկ կենտրոն», Սլովակիայի գյուղատնտեսական համալսարան Նիտրայում:

2013 թվականի աշնանը ՀԱԱՀ-ն հաջողությամբ ավարտեց ԵՄ ֆինանսավորմամբ գործող երկու «Տեմպուս» ծրագրեր, որոնց շրջանակներում բավականին լուրջ նյութատեխնիկական, կրթահետազոտական ներդրումներ կատարվեցին:

1. ԵՄ, Կիրառական կենսաբանական գիտություններ /MAPB/ Տեմպուս ծրագիրը, համակարգող Իսպանիայի Ալիկանտե համալսարան (MAPB-159340-TEMPUS-1-2009-1-ES-TEMPUS-JPGR, <http://www.biosciences-tempus.org/asau>): «Կիրառական կենսաբանական գիտություններ» ծրագրի /2010-2013թթ./ շրջանակներում ԶԱԱՀ-ում ներդրվեց կենսատեխնոլոգիական մագիստրոսական ուսումնական ծրագիրը: ԶԱԱՀ-ի համար կազմվեցին «Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա», «Սննդի կենսատեխնոլոգիա», «Առողջապահական կենսատեխնոլոգիա» և «Շրջակա միջավայրի պահպանության կենսատեխնոլոգիա» մասնագիտացումների ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը՝ Եվրոպական կրթական չափորոշիչներին համապատասխան: 2011-12թթ-ից ԶԱԱՀ մագիստրատուրայում իրականացվում է համապատասխան ուսուցում նշված մասնագիտություններով: Ծրագրի շրջանակներում ԶԱԱՀ-ից իրականացվել է 29 գործուղում, որին մասնակցել են համալսարանի 10 աշխատակից և 3 մագիստրանտ: ԶԱԱՀ-ից շուրջ 15 փորձագետ մասնակցել են գործընկեր համալսարաններում կազմակերպած սեմինարներին և աշխատանքային հանդիպումներին: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել 20 անուն ժամանակակից լաբորատոր սարքավորումներ, որոնց բազայի վրա ս/թ հուլիս ամսին կազմակերպվել է «Գյուղատնտեսության, սննդի անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության կենսատեխնոլոգիաների» ուսումնագիտական համահամալսարանական, միջամբիոնային լաբորատորիան: ԵՄ Տեմպուս կրթական ծրագրի կենտրոնական գրասենյակի փորձագետի մոնիթորինգային այցի գնահատականի համաձայն այս Տեմպուս կրթական ծրագիրը, իր արդյունքներով, ԵՄ համանման շատ ծրագրերի շարքում, հավակնում է դառնալ լավագույն տարածաշրջանային ծրագիրը:

2. ԵՄ «Աշխարհագրական տեղեկատվական տեխնոլոգիան Արևելյան հարևանության երկրների կայուն զարգացման համար» ծրագիրը, համակարգող Ստոկհոլմի արքայական տեխնոլոգիական ինստիտուտ (GIDEC- 511322-TEMPUS-1-2010-1-SE-TEMPUS-JPCR), <http://www.gidec.ecoma.am/index.php/>: Այս ծրագրի շրջանակներում ԶԱԱՀ-ում հիմնարար ներդրվեց աշխարհագրական տեղեկատվական տեխնոլոգիան (GIT), համապատասխան ուսումնական պլանները, հիմնադրվեց և գործում է GIS (Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր) լաբորատորիան, վերապատրաստվեցին երիտասարդ դասախոսներ և ուսանողներ: Հաշվետու տարում ԶԱԱՀ-ն ունեցավ մի շարք ձեռքբերումներ. ա/ ԶԱԱՀ-ի հողաշինարարության և

հողային կադաստրի ամբիոնում, համանուն մասնագիտությունում ներդրվել են նոր առարկաներ՝ «GIS-ը հողաշինարարության և ոռոգման ոլորտներում» և «GIS-ը հողային կադաստրում»: Որպես այլընտրանքային նոր առարկաներ նախապատրաստվում են «GIS-ը ագրոէկոլոգիայի ոլորտում» և «Հեռազննումը գյուղատնտեսության ոլորտում» դասընթացները. ք/ ՀԱԱՀ-ից իրականացվել են թվով 12 գործուղումներ, որին մասնակցել են 3 աշխատակից /մեկական շաբաթ/, 5 երիտասարդ դասախոս /2-ական շաբաթ/ և 2 ուսանող /3 ամիս յուրաքանչյուրը/, գ/ ՀԱԱՀ-ի Հողաշինարարության և հողային կադաստրի ամբիոնում հիմնադրվել է GIS (Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր) լաբորատորիա հետևյալ նյութատեխնիկական բազայով. 1 սերվեր, 10 համակարգիչ, 1 նոթբուք, 1 տպիչ, 1 սկաներ, 1 պլոտեր, 1 պրոյեկտոր, 30 լիցենզիոն GIS ծրագրային փաթեթ, 2- էլեկտրոնային տախտմետրեր՝ 4 ավտոմատ մակարդակներով:

2012-2013 ուս. տարում ՀԱԱՀ-ն աշխատանքեր սկսեց 3 նոր Տեմպուս ծրագրերի ուղղությամբ.

– **«Բարձրագույն կրթական ցանց՝ ուղղված մարդկային կապիտալի գնահատմանն ու շրջանավարտների աշխատունակությանը Հայաստանում» /HEN-GEAR/** ՎՆ համակարգող՝ Իտալիայի Ալմա-Լաուրեա միջհամալսարանական կոնսորցիում: Այս ծրագրի շրջանակներում, որին մասնակցում են Հայաստանի բոլոր առաջատար բուհերը և Իտալական Ալմա-Լաուրեա համալսարանական ցանցն արդեն նախապատրաստել է համաձայնեցված հարցաշար, որը պետք է լրացնեն բոլոր շրջանավարտները՝ հայտնվելով միասնական տվյալների շտեմարանում և հասանելի դառնալով պոտենցիալ գործատուներին: Իրականացվել է նաև հարցաշարի փորձաշրջանառությունը: Արդեն պայմամավորվածություն է ձեռք բերվել նաև համապատասխան նյութատեխնիկական բազայի ձեռք բերման հարցում, ինչպես նաև իրականացվել են 2 գործնական այցելություններ, հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների մասնակցությամբ:

– **«Կայուն զբոսաշրջության կառավարման միջազգային բակալավրիական և մագիստրոսական ծրագրերի նոր մոդուլների մշակում»** - համակարգող՝ Գերմանիայի Յադե կիրառական գիտությունների համալսարան: Այս ծրագրի շրջանակներում իրականացվել են համապատասխան գործուղումներ և ապահովել է մասնակցությունը գործնական քննարկումներին, կապված հետևյալ առարկաների

ուսումնական նյութերի նախապատրաստման հետ՝ «Ագրոտուրիզմ», «Փոքր և միջին ձեռնարկությունների կառավարում» և «Տրանսպորտային կառավարում», «Էլեկտրոնային տուրիզմ»:

– **«Բարձրագույն կրթության փոփոխությունների նախաձեռնում և կառավարում (LaMANCH)»** համակարգող՝ Բուլղարիայի Միջազգային համալսարան: Ծրագրի հիմնական նպատակն է խթանել բարձրագույն կրթության արդիակա-նացումը՝ մասնակից բուհերում ղեկավարման և կառավարման կարողությունների կատարելագործման, համապատասխան շահագրգիռ կողմերի միջև բարձրագույն կրթության բարեփոխումներին միտված արդյունավետ երկխոսության խրախուսման, բուհերում որոշումների կայացման գործընթացում ուսանողների ակտիվ ներգրավվածության ապահովման միջոցով:

2013 թվականին ՀԱԱՀ-ին հաջողվեց ընդգրկվել նոր 3 «Տեմպուս» ծրագրերում և 2 նոր «Երասմուս Մունդուս» ծրագրերում:

➤ **«Ինքնավարություն և պատասխանատվություն. ժամանակակից բարձրագույն կրթության կառավարման համակարգի մշակում՝միտված արդյունավետ փոփոխությունների նախաձեռնմանը՝ համաձայն Բոլոնիայի չափանիշների» /GOVERN/** Տեմպուս ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ Բոլոնիայի չափանիշներին համապատասխան ժամանակակից կառավարման համակարգի կատարելագործումն է՝ արդյունավետ կառուցվածքային փոփոխությունների նախաձեռնմամբ, որն էլ իր հերթին հանգեցնելու է ԲՈՒՀ-ի ինքնավարության և պատասխանատվության ամրապնդմանը: Ծրագիրը ԲՈՒՀ-ի ինքնավարության ու պատասխանատվության ամրապնդմանը միտված իր հիմնական նպատակներն իրագործում է հետևյալ գործառույթների իրականացմամբ.

– Վարչական անձնակազմի կարողությունների ամրապնդում՝ միտված համակարգի արդյունավետ փոփոխություններին,

– Իրավական /համակարգային մակարդակով/ և վերահսկման /ԲՈՒՀ-ի մակարդակով/ շրջանակների վերանայում՝ համաձայն Բոլոնիայի գործընթացի:

➤ **«Հայաստանում ազգային և սեկտորալ որակավորման շրջանակների ամրապնդում».** /ARMENQA Tempus/ ծրագիրը 3 տարի տևողությամբ ազգային ծրագիր է, որի հիմնական նպատակը Հայաստանում ԲՈՒՀ-ի շրջանավարտների զբաղվածության մակարդակի բարձրացումն ու աշխատաշուկայում՝ ազգային և

միջազգային մակարդակներով Հայաստանում ստացած որակավորումների ճանաչումն է:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝

– Հայաստանի որակավորման ազգային շրջանակի գնահատում՝ ստեղծելով և օգտագործելով մեթոդական, իրավական փաստաթղթեր,

– ԲՈՒՀ-ի, ԿԳՆ և ԱՓՃՇԱՏԿ /Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի/ համապատասխան անձնակազմի մոտ կարողությունների ամրապնդումն է՝ միտված ուսուցման արդյունքների վրա հիմնված որակավորումների և ծրագրերի ցուցիչների մշակմանը՝ Հայաստանի որակավորման ազգային շրջանակի համաձայն:

➤ **«Հայաստանում, Վրաստանում և Ուկրանիայում ցկյանս ուսուցման զարգացման ցանց»** Տեմպուս ծրագրի հիմնական նպատակը գործազրկության և նորարարության բացակայության հետ կապված խնդիրների լուծումն է, որի պատճառը աշխատաշուկայի կարիքների և աշխատուժի հմտությունների միջև եղած անհամապատասխանությունն է: Ծրագրի գործառույթները ներառում են համալսարանի և պետական քաղաքականության հետ կապված աշխատանքներ՝ շեշտադրելով ցկյանս ուսուցման մոտեցումների մշակման հետ կապված աշխատանքների վրա: Ցկյանս ուսուցման նպատակը անհատների կարողությունների ամրապնդման և աշխատաշուկայում շարունակական թրեյնինգների ապահովման միջոցով տնտեսության զարգացման խթանումն է:

2013թ-ին ՀԱԱՀ շարունակեց աշխատանքները «Էրասմուս-Մունդուս» «ELECTRA» ծրագրի շրջանակներում: Ծրագրի համակարգողն է Գերմանիայի Կարլ վոն Օսիեցկու անվան համալսարանը: Եվրոպական բուհերից կոնսորցիումի անդամ են Զիմիական տեխնոլոգիաների և մետաղաձուլության համալսարանը (Բուլղարիա), Ֆինլանդիայի Օուլու համալսարանը (Ֆինլանդիա), Լիմերիկ համալսարանը (Իռլանդիա), Տորինո համալսարանը (Իտալիա), Ջագիելլոնիան համալսարանը (Լեհաստան), Մինսո համալսարանը (Պորտուգալիա), Վալենսիա համալսարանը (Իսպանիա): Այս ծրագրի շրջանակներում 2013թ. ՀԱԱՀ-ի 4 բակալավր և 2 մագիստրանտ իրենց ուսուցումը շարունակում են (6-10 ամիս) Պորտուգալիայի Մինսոյի համալսարանում:

Սեպտեմբերի 1-ից Հայաստանի ազգային ագրարային համալսարանում մեկնարկել են Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող Էրասմուս-Մունդուս ծրագրի «EMBER» և «EFFORT» նախագծերը, որոնց նպատակն է խթանել

համագործակցությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև, ընդլայնել ուսանողների, դասախոսների և հետազոտողների փոխանակումներն ու աջակցել շարժունությանը հատկապես ոչ ԵՄ անդամ երկրներից դեպի ԵՄ անդամ երկրներ: Նախագծերի շրջանակներում Հայաստանի ԲՈՒՀ-երի ուսանողները, դասախոսական, վարչական անձնակազմը և հետազոտողները հնարավորություն կունենան ստանալ կրթաթոշակ և ուսանել եվրոպական մի շարք երկրների համալսարաններում՝ Չեխիա, Էստոնիա, Ֆրանսիա, Լեհաստան, Պորտուգալիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Իտալիա, Լատվիա, Լիտվիա, Շվեդիա և այլն: «EMBER» նախագծի համակարգողն է Սևիլիայի համալսարանը (Իսպանիա), իսկ «EFFORT»՝ Սալոնիկի Ալեքսանդրի տեխնոլոգիական կրթական համալսարանը (Հունաստան): Կարևոր է, նշել, որ «EFFORT» նախագծի համահամակարգողը Հայաստանի ազգային ագրարային համալսարան է:

«Նորարարությունների մրցակցային հիմնադրամի» /ՆՄՀ/ շրջանակներում 2013 թ. սեպտեմբերի 5-ին «Կրթական ծրագրերի» ԾԻԳ-ի և ՀԱԱՀ-ի հիմնադրամի միջև դրամաշնորհային պայմանագրով իրականացվում է «Ագրոպարենային համակարգի ուսումնաարտադրական կենտրոնի» /ԱՀՈՒԱԿ/ ստեղծման ծրագիրը՝ 15 ամիս տևողությամբ: Ծրագրի հիմնական ուղղություններն են՝

- Ագրոպարենային համակարգի գյուղտեխնիկայի գնում,
- Համապատասխան նորմատիվային-իրավական փաստաթղթային հիմքի ստեղծում:

Գերմանիայի միջազգային զարգացման գործակալության /GIZ/ աջակցությամբ 2012-2013թթ.-ին շարունակվել է ՀԱԱՀ-ի և Գերմանիայի Վայհենշտեֆան-Թրիսդորֆ կիրառական գիտությունների համալսարանի միջև սերտ համագործակցությունը «Ագրարային մենեջմենթ» մագիստրոսական ծրագրի հետագա զարգացման, ՀԱԱՀ-ի մագիստրոսների պրակտիկան շարունակաբար Գերմանիայում կազմակերպելու և համագործակցության բովանդակությունը ընդարձակելու ուղղություններով: 2013թ. ՀԱԱՀ-ից իրականացվել են թվով 7 ուսանողների և 3 աշխատակիցների գործողումներ դեպի Վայհենշտեֆան և 5 գործողում Վայհենշտեֆանից ՀԱԱՀ /դասախոսներ և ուսանողներ/: Միևնույն ժամանակ Վայհենշտեֆանի և ԴԱԱԴ-ի համագործակցությամբ ՀԱԱՀ-ից իրականացվել է մեկ գործողում Գերմանիա:

2013թ. շարունակվել է համագործակցությունը **Գերմանական LOGO** կազմակերպության հետ՝ ՀԱԱՀ ուսանողների արտադրական պրակտիկան Գերմանիայի Դաշնությունում կազմակերպելու վերաբերյալ: Այս ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում պրակտիկա են անցել 8 ուսանող:

2013թ. աշխատանքներ իրականացվեցին, Նիդեռլանդների կառավարության «Նուֆիկ» հիմնադրամի ֆինանսավորմամբ, Դելֆտի միջազգային ինստիտուտի կողմից «Շրջակա միզավայրի պահպանություն և Կլիմայի փոփոխություն» վերապատրաստման դասընթացների կազմակերպման ուղղությամբ: 2014թ-ին նախատեսվում են Հայաստանում, Վրաստանում և Նիդերլանդներում վերապատրաստման դասընթացների կազմակերպում ՀԱԱՀ-ի Ագրոէկոլոգիայի և Ընդհանուր երկրագործության ամբիոնների, ինչպես նաև Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետի համապատասխան մասնագետների համար:

Համալսարանը, ուղղակի կապերից բացի, տարբեր կոնսորցիումների և ցանցերի շրջանակներում որպես անդամ կամ գործընկեր համալսարան համագործակցում է բազմաթիվ կազմակերպությունների հետ: Դրանցից են.

– *ԱՊՀ առաջավոր ագրարային ուսումնական հաստատությունների ռեկտորների խորհուրդ:*

– *Կենտրոնական Ասիայում և հարավկովկասում գյուղատնտեսական հետազոտությունների զարգացմանը միտված ագրարային համալսարանների կոնսորցիում (CAC/ CACAARI, ICARDA),*

– *ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն, հատկապես կապված ՀԱԱՀ-ի գրադարանի թարմացման և էլեկտրոնային նյութերի ձեռք բերման հետ,*

– ISEKI-food 4 Պարենային ոլորտում սննդային շղթայի կրթական ցանց, որը համակարգում է Իտալիայի Տեռամո համալսարանը և ներառում է Եվրոպական երկրների 89 գործընկեր և 31 համագործակիցներ այլ երկրներից՝ Ռուսաստանից, Հայաստանից, Սերբիայից, Հյուսիսային և Հարավային Ամերիկայից, Աֆրիկայից, Ասիայից և այլն) <http://www.iseki-food4.eu/>,

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել են բազմաթիվ սեմինարներ՝ Գերմանական ակադեմիական փոխանակման ծրագրի (DAAD) տեղական գրասենյակի, Երիտասարդ դասախոսների վերապատրաստման ծրագիր (Junior Faculty

Development Program/JFDP), IREX և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների օգնությամբ և մասնակցությամբ:

2013 թ. ամրապնդվեցին կապերը Կուբանի ագրարային համալսարանի հետ: Այդ համալսարանի ներկայացուցիչների այցելությունից հետո ՀԱԱՀ-ից Կուբանի ագրարային համալսարան դասախոսություններով և փորձի փոխանակման նպատակով այցելել են ՀԱԱՀ 3 պրոֆեսոր, 1 դասախոս, 2 ուսանող:

Շարունակվել է համագործակցությունը Կ.Տիմիրյազևի անվան Ռուսական պետական ագրարային համալսարանի հետ: Հուլիս ամսին ՀԱԱՀ-ի Ագրոէկոլոգիայի ամբիոնի երկու մագիստրոսներ մասնակցեցին Կ.Տիմիրյազևի անվան Ռուսական պետական ագրարային համալսարանի Էկոլոգիայի ամբիոնի կազմակերպած ամառային դպրոցին:

Խանիայի միջերկրածովյան ագրոնոմիական ինստիտուտի (Կրետե, Հունաստան) հետ շարունակվում է համագործակցությունը «Կայուն գյուղատնտեսություն» հետբուհական /մագիստրոսական/ ծրագրի շրջանակներում:

ISEKI-food 4 ծրագրի շրջանակներում **Սան Պաուլոյի հետազոտությունների ֆոնդի** կողմից հայտարարված մրցույթում, որին մասնակցում էին ավելի քան 70 երկրների մագիստրանտներ, ՀԱԱՀ-ի մագիստրանտ Յ. Երիցյանը ճանանչվեց հաղթող՝ Սան Պաուլոյի մագիստրոսական ամառային դպրոցում կարճաժամկետ դասընթացին (2013թ. -ի ապրիլի 1-5-ը) մասնակցելով:

2012-2013 թթ. ընթացքում շարունակվել է աշխատանքը ՀԱԱՀ-ում սովորող մոտ 100 արտասահմանյան քաղաքացիների հետ տարվող կազմակերպչական, փաստաթղթային և այլ կարգի աշխատանքները:

7.3. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ

ՏՏ և ԻԾ կենտրոնի տեղեկատվական համակարգերի կառավարման բաժնի կողմից իրականացվող գործառնություններն են՝ կառավարել և զարգացնել համալսարանի ինտերնետային կայքը և համալսարանի էլեկտրոնային փոստի համակարգը, ստեղծել էլեկտրոնային դեկանատ, կազմակերպել համակարգչային ծրագրային գործընթացներ և կատարել ընթացիկ սպասարկում, նախագծել և համալսարանում սահմանված կարգով ներդնել ուսուցողական ու կրթական համապատասխան ծրագրեր, ներդնել և կառավարել անհրաժեշտ ծրագրային ու տեխնիկական համակարգեր ներքին փաստաթղթաշրջանառությունն իրականացնելու համար և մի

շարք այլ տեղեկատվական համակարգեր, որոնք կնպաստեն բուհի ընհանուր գործունեության զարգացմանը:

2013 թվականին բաժինը հիմնականում իրականացրել է բաժնի կողմից արդեն ստեղծված Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պաշտոնական կայքէջի ձևավորմանն ու զարգացմանն ուղղված գործառույթներ: Ամբողջությամբ նորացվել է համալսարանի կայքէջը, որը բավականին բովանդակալից է, ունի մեծ հնարավորություններ և գործիքներ, պարունակում է զգալի տեղեկատվություն, դինամիկ է:

Վերջին մեկ տարվա ընթացքում հանրապետության բոլոր բուհերի շարքում մեր բուհի կայքէջը, իր հաճախումների արդյունքում, վարկանիշով զբաղեցնում է երկրորդ տեղը ԵՊՀ-ից հետո՝ ունենալով օրական մոտ հազար այցելու:

«Էլեկտրոնային դասացուցակը» հնարավորություն է տալիս բուհի բոլոր մասնագիտությունների գծով ունենալ Էլեկտրոնային առցանց դասացուցակ, ինչը հասանելի է ուսանողությանը:

Ամբողջությամբ ձևափոխվել է նաև կայքում առկա «Դիմորդներին» բաժինը: «Դիմորդներին» բաժնում տարանջատվել են վարժարան, քոլեջ, բակալավրիատ, մագիստրատուրա և ասպիրանտուրա ենթաբաժինները, որնօգնում է դիմորդներին Էլ ավելի դինամիկ ու արագ փնտրել և գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը:

2013 թվականին բոլոր ստորաբաժանումների ու դեկանատների համար ստեղծվեցին և գործածության մեջ դրվեցին պաշտոնական Էլեկտրոնային փոստեր: Էլեկտրոնային փոստերի տրամադրման գործընթացը կրելու է շարունակական բնույթ և պաշտոնական Էլեկտրոնային փոստեր են տրամադրվելու նաև բոլոր ամբիոններին:

2013 թվականին բաժնի կողմից իրականացվել է նաև «ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2013» XI միջազգային ցուցահանդեսին մասնակցելու համար ընթացիկ բոլոր աշխատանքները, պատրաստվել են համալսարանը բնութագրող պաստառներ, տարբեր ձևաչափերի բուկլետներ և բազմաթիվ տեղեկատվական նյութեր: Ցուցահանդեսի նպատակն էր դիմորդներին և ուսանողությանը ժամանակակից կրթության վերաբերյալ համապարփակ տեղեկությունների տրամադրելը, ինչպես նաև աշխատաշուկայում առավել մեծ պահանջարկ ունեցող մասնագիտությունների մասին հանրությանը ներկայացնելը:

2013 թվականին բաժնի կողմից ստեղծվել են Շրջանավարտների միավորման և Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության կենտրոնի երկու նոր կայքէջեր:

Տեղեկատվական համակարգերի կառավարման բաժինը կենտրոնի այլ բաժինների հետ համատեղ 2013 տարվա ընթացքում մասնակցել է նոր Էլեկտրոնային լսարանների կահավորման, լոկալ ցանցերի նախագծման և իրականացման աշխատանքներին, կազմակերպել է մասնագիտացված լսարաններում օնլայն կոնֆերանսներ, դասախոսությունների անցկացում Ստեփանակերտի, Սիսիանի և Վանաձորի մասնաճյուղերի համար, և մի շարք այլ միջոցառումներ:

2014 թվականին բաժնի կողմից նախատեսվում է մշակել համալսարանի ինտերնետային պաշտոնական կայքի սպասարկման ընթացակարգ, որը կհստակեցնի պաշտոնական կայքի բաժիններում առկա տեղեկատվության համար պատասխանատուներին և այդ տեղեկատվության տրամադրման համար կսահմանի հստակ ժամկետներ: Ընթացակարգի ներդրումը կնպաստի տեղեկատվության առավել հանգամանալից, օպերատիվ տարածմանը, ինչպես նաև ընթացակարգում կսահմանվեն ժամկետներ, պատասխանատուներ կայքում տեղադրվող տեղեկատվության հրապարակման և տեխնիկական աշխատանքների իրականացման վերաբերյալ:

7.4. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔԻ ԲԱԺԻՆ

Տեղեկատվական տեխնոլոգիաների գիտելիքի բաժինը, համաձայն ՏՏ և ԻԾ կենտրոնի կանոնակարգի, իրականացնում է մի շարք գործառույթներ, այդ թվում՝ Էլեկտրոնային ուսուցման ներդրման կազմակերպում, ուսումնական և գիտական անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, մշակում և տարածում, նոր ծրագրերի ուսումնասիրում և ներդրում, գրադարանային գործի ավտոմատացման աշխատանքների աջակցում:

ՏՏ գիտելիքի բաժինը՝ որպես ՏՏ և ԻԾ կենտրոնի ստորաբաժանում, ակտիվորեն ներգրավված է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կայքէջի ձևավորման և զարգացման, ինչպես նաև կենտրոնի կողմից իրականացվող գրեթե բոլոր աշխատանքներում:

Էլեկտրոնային գրացուցակի ստեղծման և գրադարանային գործի ավտոմատացման KOHA համակարգը, որը բավարարում է ՀԱԱՀ-ի Էլեկտրոնային գրադարանի ծրագրային պահանջները, շահագործման հանձնվեց նոր ուսումնական տարվա սկզբից: Համակարգի հնարավորությունների շրջանակներում գրադարանը,

SS գիտելիքի բաժնի հետ համատեղ, մշակել է գրադարանային քարտի էլեկտրոնային տարբերակ, որնիր մեջ ներառում է տեղեկատվություն ընթերցողի անձնական տվյալների, պատվիրված գրականության, գրադարանից վերցված գրականության մասին և ուսանողին հնարավորություն է տալիս օգտվել ՀԱԱՀ-ի գրադարանի մատուցած ծառայություններից:

Բաժնի գործունեության համար շարունակում է առաջնային համարվել համալսարանում էլեկտրոնային ուսուցման ներդրման գործընթացի շարունակական զարգացումը, էլեկտրոնային դասընթացների ավելացումը, դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության մեծացման համար տեղեկատվության տրամադրումը և տարածումը:

Էլեկտրոնային ուսուցման շարունակական զարգացման նպատակով ուսումնասիրվել են ներկայումս առկա լավագույն տարբերակները և տեղադրվել է էլեկտրոնային ուսուցման հարթակի՝ Moodle ծրագրի նոր կատարելագործված տարբերակ, որի հնարավորությունները, մուլտիմեդիոն հագեցվածությունը, արտաքին ձևավորումը մի քանի անգամ գերազանցում է նախորդին: Ներկայիս տարբերակն ավելի մատչելի ու պարզ է իր կառուցվածքով:

7.5. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺԻՆ

Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի սպասարկման բաժինը, համաձայն SS և ԻԾ կենտրոնի կանոնակարգի, իրականացնում է համալսարանում առկա համակարգչային սարքավորումների տեխնիկական սպասարկումը, ծրագրային ապահովումը և տեղեկատվական ցանցի անվտանգ շահագործումը:

Հաշվետու ժամանակաշրջանում SS համակարգերի սպասարկման բաժնի կողմից սպասարկվել (վերանորոգում, լիցքավորում) է համալսարանի թվով 286 տպիչ, ինչպես նաև իրականացվել են թվով 100 համակարգիչների վերանորոգման, վիրուսազերծման և ծրագրային ապահովման աշխատանքներ: Իրականացվել են նաև համալսարանի ամբիոնների և ստորաբաժանումների համակարգչային տեխնիկայի պրոֆիլակտիկ աշխատանքներ:

Տեղեկատվական տեխնոլոգիական համակարգերի սպասարկման բաժինը կենտրոնի հետ համատեղ համալսարանում իրականացրել է ամբողջ համակարգչային տեխնիկայի և հարակից սարքավորումների գույքագրում:

2013 թ. իրականացվել է նաև համալսարանի կողմից ձեռք բերված համակարգչային տեխնիկայի (համակարգիչներ, տպիչներ, բազմաֆունկցիոնալ

սարքեր և այլն) բաշխման աշխատանքները: Այն ստորաբաժանումներին, որոնց անհրաժեշտ էր ավելի արդիական համակարգչային տեխնիկա, հատկացվել են նորերը, իսկ փոխարինված, տեխնիկապես փոքր-ինչ թույլ, համակարգիչները հատկացվել են այլ ստորաբաժանումներին:

7.6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության կենտրոնի (ԱՏԽԿ) առաքելությունն է մշակել և կիրառել այնպիսի համակարգ, որը հնարավորություն կընձեռի ՅԱԱՀ-ի շարժանավարտներին գտնել աշխատանք Յայաստանում գործող ագրոպարենային համակարգի կազմակերպություններում:

Այն կապող օղակ է հանդիսանում ՅԱԱՀ-ի և հայկական մասնավոր ձեռնարկությունների, գյուղատնտեսության նախարարության, ագրոբիզնեսի և հարակից ճյուղերի գործատուների և գյուղացիական ասոցիացիաների միջև:

Հաշվետու տարում ԱՏԽԿ հաջողությամբ շարունակեց իր գործունեությունը հետևյալ հիմնական ուղղություններով՝

- *գյուղատնտեսության և հարակից ոլորտներում աշխատատեղերի հնարավորությունների բացահայտում և դասակարգում,*
- *խորհրդատվություն կենսագրական փաստաթղթերի և հարցազրույցների տեխնիկայի վերաբերյալ,*
- *ծանոթացում ձեռնարկությունների գործունեության հետ,*
- *գործատուների և շրջանավարտների միջև կապերի ստեղծում և հարցազրույցների համակարգում,*
- *աշխատանքային տոնավաճառների կազմակերպում:*

ԱՏԽԿ-ն տարբեր ուղիներով ապահովում է բազմազան և գործնական տեղեկատվություն. այն Եվրոպայում և ԱՄՆ-ում կրթությունը շարունակելու հնարավորությունների մասին տեղեկատվություն տրամադրող տեղական և միջազգային կրթական հաստատությունների ցանցի անդամ է: ԱՏԽԿ-ը հրատարակում է էլեկտրոնային տեղեկագիր, որի միջոցով հաշվետու տարում շահառուներին տեղեկատվություն է տրամադրվել ավելի քան 400 թափուր աշխատատեղերի, կրթությունը շարունակելու, մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների վերաբերյալ:

ԱՏԽԿ-ի կարևոր գործառույթներից է համարվում աշխատանքային տոնավաճառների կազմակերպումը: Տոնավաճառի ընթացքում երիտասարդներին ներկայացվում են աշխատաշուկայի առկա պահանջները, թափուր աշխատատեղերը, աշխատանքային պրակտիկայի և նոր հմտություններ ձեռք բերելու հնարավորությունները: Աշխատանքի տոնավաճառը երիտասարդների մասնագիտական կողմնորոշման հզոր գործիք է, քանի որ երիտասարդները տեղեկանում են, թե որ կազմակերպություններին կարող են դիմել՝ հմտությունների զարգացման, աշխատանք փնտրելու ուղղությամբ աջակցություն ստանալու նպատակով, նաև ավելի իրատեսական պատկերացում են կազմում աշխատանքի պահանջների և վարձատրության վերաբերյալ, ինչն էլ բերում է ցանկալի մասնագիտության ընտրության կամ էլ վերամասնագիտացման:

Մինչ այժմ ԱՏԽԿ-ն կազմակերպել և անցկացրել է 7 ամենամյա աշխատանքի տոնավաճառ, որոնցից յուրաքանչյուրին մասնակցել են ավելի քան 30 մասնակից գործատու կազմակերպություններ և 500-800 աշխատանք փնտրող շրջանավարտ: 2013թ. դեկտեմբերի 5-ի անցկացվեց հերթական աշխատանքի տոնավաճառը ավելի քան 30 գործատու կազմակերպությունների մասնակցությամբ:

Կրթական ցուցահանդեսները բավականին կարևորվում են որպես ուսանողական կազմի համալրման գործիքներ: Մասնակցությունը ցուցահանդեսին հնարավորություն է տալիս հասարակության լայն հատվածին, հատկապես բարձր դասարանցիներին և նրանց ծնողներին, ներկայացնել բուհի ձեռքբերումները, տալ մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ տեղեկատվություն: 2013թ. ապրիլի 17-19-ը ԱՏԽԿ-ն մասնակցեց «Ուսուցումը Հայաստանում» 12-րդ միջազգային մասնագիտացված ցուցահանդեսին՝ ներկայանալով ՀԱԱՀ-ի և Ագրոբիզնեսի դեպարտամենտի հետ:

Կարևորվում է միջազգային և տեղական տարբեր կազմակերպությունների հետ համագործակցությունը: 2013 թ. ԱՏԽԿ-ն բանակցություններ է վարել Բիզնեսի աջակցման կենտրոն ՓԲԸ կենտրոնի և ՀԱԱՀ-ի հետ փոխհամագործակցության վերաբերյալ: Փոխգործակցության հաջողված օրինակ է դրամաշնորհային նախագծի նախապատրաստումը՝ Բիզնեսի աջակցման կենտրոն ՓԲԸ հետ համատեղ՝ ՀԱԱՀ-ի պարենամթերքի տեխնոլոգիաների և տնտեսագիտական ֆակուլտետների ուսանողների և շրջանավարտների վերապատրաստման վերաբերյալ:

Ծրագրի ընթացքում կատարվել է նշված ֆակուլտետների 50 ուսանողի ընտրություն՝ Բիզնեսի աջակցման կենտրոն ՓԲԸ կազմակերպած ուսուցողական

դասընթացներին մասնակցելու համար, 15 ուսանողի ուսումնաարտադրական վճարվող պրակտիկայի կազմակերպում ՅՅ-ի սննդի վերամշակող ընկերություններում:

ՊրոԿրեդիտ Բանկ ՓԲԸ հետ համագործակցության շրջանակներում 2013թ. մայիս- հունիս ամիսներին ՅԱԱՀ-ին հարող տարածքներում կազմակերպվել են բացօթյա միջոցառումներ, որոնց նպատակն էր ՅԱԱՀ-ի շրջանավարտներին և ավարտական կուրսի ուսանողներին հնարավորություն ընձեռել դառնալ «Երիտասարդ բանկիրների ծրագրի» մասնակից՝ հետագայում համալրելով ՊրոԿրեդիտ Բանկի թիմը:

Իր գործունեության ընթացքում ԱՏԽԿ-ն կազմակերպել է ավելի քան 65 սեմինար-համոթիպումներ, որոնց մասնակցել են 1400-ից ավելի ուսանողներ և շրջանավարտներ: Սեմինարների հերթական շարքը «Ձեռներեցությունը որպես կարիերա» անվանումով ԱՏԽ կենտրոնը կազմակերպել էր 2013թ. մայիսին ԱՄՆ ՄՁ Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության ծրագրի Ձեռներեցության զարգացման կենտրոնի փորձագետների և ՅԱԱՀ-ի տնտեսագիտական ֆակուլտետի ուսանողների մասնակցությամբ:

Պարբերական համոթիպումներն ավագ դպրոցների աշակերտների հետ մասնագիտական կողմնորոշման լավ գործիք են համարվում: Դպրոց-բուհ համագործակցության շրջանակներում ԱՏԽ կենտրոնի աշխատակազմը մշտապես մասնակցում է նման հանոթիպումների Երևան քաղաքի և մարզերի բարձր դասարանցիների հետ, ներկայացնում ՅԱԱՀ-ի մասնագիտությունները, հեռանկարները, ագրոպարենային և հարակից ոլորտներում կարիերայի հնարավորությունները: 2013 թ. ընթացքում կազմակերպվել են հանոթիպումներ ՅԱԱՀ-ի հենակետային վարժարանի, Մուսալեռի և Ախթալայի ավագ դպրոցների աշակերտների հետ:

Աշխատուժի նկատմամբ կարիքների բացահայտումը չափազանց կարևոր է ԱՏԽԿ գործառույթների լավագույնս իրականացման համար: 2013թ. մայիս-օգոստոս ամիսների ընթացքում ԱՏԽԿ-ն ուսումնասիրություն է կատարել ՅՅ Սննդի վերամշակման ընկերությունների, մասնավորապես գինու և կոնյակի գործարանների վերաբերյալ՝ ճշտելու դրանց իրական թիվը, կոնտակտային տվյալները՝ աշխատուժի նկատմամբ պահանջներն այժմ և հետագա 1-3 տարիների կտրվածքով:

Աշխատանքի տեղավորման կենտրոնում անհատապես աշխատում են յուրաքանչյուր ուսանողի կամ շրջանավարտի հետ, ով այցելում է Կենտրոն: Օգտագործվում է եղած կամ հնարավոր շահառուների հետ անմիջականորեն աշխատելու յուրաքանչյուր հնարավորություն: Ամսական միջինը 100 ուսանող կենտրոնում

ստանում է խորհրդատվություն ինքնակենսագրական փաստաթղթերի նախապատրաստման, ուսումը մագիստրական ծրագրերում շարունակելու, աշխատանքային հարցազրույցներին մասնակցության վերաբերյալ:

2013-15թթ. ընթացքում ՀԱԱՀ-ում, ի թիվս այլոց, գործում է ԵՄ ՀԵՆ-ԳԵԱՐ ՏԵՄՊՈՒՄ «Հայաստանում մարդկային կապիտալի գնահատման և շրջանավարտների աշխատունակությանն ուղղված բարձրագույն կրթության ցանց» ծրագիրը: ԱՏԽԿ ակտիվ մասնակցում է այս ծրագրի շրջանակներում կազմակերպված համաժողովներին, կազմել է համապատասխան հարցաշար ՀԱԱՀ-ի մասնագիտությունների արտացոլմամբ, միջհամալսարանական խմբերում ՀԱԱՀ-ն ներկայացնում է որպես ՀԱԱՀ-ի հետազոտական խմբի ղեկավար:

ԱՏԽԿ-ուսանող, ուսանող-ԱՏԽԿ երկկողմ տեղեկատվական հոսքի արդյունավետությունն ապահովելու համար, ՀԱԱՀ-ի տեղեկատվական համակարգերի կառավարման բաժնի հետ համատեղ աշխատանքեր են տարվել աշխատանքի տեղավորման և խորհրդատվության կենտրոնի նոր ենթակայքի գործարկման ուղղությամբ, ինչը կգործի 2014թ.ից: Այս ենթակայքի միջոցով թե՛ գործատուներին, թե՛ ուսանողներին ու շրջանավարտներին կտրամադրվի լիարժեք խորհրդատվություն և տեղեկատվություն համապատասխանաբար աշխատակիցների ընտրության և աշխատանքի տեղավորման հարցերում:

7.7. ԱՌԱՋԻԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆԱԽԱՏԵՍԿՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Կենտրոնն իր ծրագրերը և գործունեությունը իրականացնում է ելնելով համալսարանի առաքելության, ռազմավարական զարգացման ծրագրի, սեփական աշխատանքային պլանի դրույթներից և առաջավոր բուհերի փորձի ուսումնասիրությունից:

Կենտրոնի կողմից մշակվեց ՀԱԱՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ռազմավարական ծրագիրը, որը ներառվեց բուհի զարգացման ռազմավարական ընդհանուր ծրագրի մեջ: Կենտրոնի կողմից նախատեսվող հիմնական աշխատանքները բխում են վերոնշյալ փաստաթղթի հիմնադրույթներից:

Մասնավորապես՝ 2014 թվականին նախատեսվում է.

- Համալսարանի առաջին և երկրորդ մասնաշենքերում, անվտանգության և օպերատիվ կառավարման անհրաժեշտությունից ելնելով, տեղադրել տեսանկարահանման համակարգ, որի միջոցով հնարավորություն կլինի վերահսկել մասնաշենքերի և դրանց հարակից տարածքների հիմնական հատվածները:

- Նկարահանել համալսարանը ներկայացնող ֆիլմ և տեսանյութերի շարք, տպագրել տեղեկատվական թերթիկներ, բուկլետներ և գովազդային այլ նյութեր, որոնք առավել հանգամանալից կներկայացնեն բուհը և նրա առանձին կառուցվածքային ստորաբաժանումները դիմորդներին, միջազգային և տեղական համագործակցող ու շահագրգիռ կազմակերպություններին:

- Գրադարանում առկա էլեկտրոնային ընթերցասրահները հնարավորություն ընձեռեցին կազմակերպել էլեկտրոնային ամսագրերի սպասարկում: Նախատեսվում է իրականացնել միջազգային առցանց էլեկտրոնային բազաների բաժանորդագրություն, որի միջոցով ընթերցողները հնարավորություն կունենան օգտվել միջազգային գիտական անսպառ և արդի պաշարներից:

- Շարունակել գրադարանում առկա, բայց քիչ օրինակ գրքերի և նյութերի թվայնացման աշխատանքները և դրանց տեղակայումը գրադարանի ինտերնետային կայքում: 2014 թվականին նախատեսվում է թվայնացնել մեծ պահանջարկ ունեցող մոտ 450 անուն գրականություն, որի արդյունքում կլուծվեն սպասարկման և գրականության ձեռքբերման մի շարք խնդիրներ՝ հնարավորություն ստեղծելով տնտեսված գումարներով առավել շատ ու արդյունավետ կերպով համալրել մասնագիտական գրականության ֆոնդը:

- Գիտական խորհրդի հանձնարարականի համաձայն՝ բուհում ներդնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը, որը հնարավորություն կտա համալսարանում իրականացվող փաստաթղթաշրջանառությունը իրականացնել էլեկտրոնային եղանակով: Նախատեսվում է նաև համակարգը գործարկելու համար տեղադրել սերվերներ՝ համապատասխան ծրագրային ապահովմամբ, ինչպես նաև իրականացնել համալսարանի վարչական կազմի ուսուցում՝ նշված համակարգով աշխատելու համար և համակարգի գործարկման փուլի ամբողջ ընթացքում աջակցել համալսարանի աշխատակիցներին:

Ներկայումս կենտրոնը, ուսումնական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ, իրականացնում է երկու մեծածավալ նախագիծ.

- Առաջինը վերաբերում է էլեկտրոնային ուսուցման համակարգի զարգացմանը: Այս համակարգի ներդրումը և շարունակական զարգացումը իրականացնում է տեղեկատվական տեխնոլոգիաների գիտելիքի բաժինը:

Պետք է նշել, որ հարթակը, որը ներկայացված է moodle ծրագրային փաթեթով, ամբողջությամբ տեղադրված է, կատարվել են մի քանի պիլոտային ծրագրեր՝ մասնավորապես տեղադրվել են էլեկտրոնային դասընթացներ և կազմակերպվել է զուգահեռ ուսուցում՝ հեռակա դեպարտամենտի ուսանողների հետ, որի արդյունքները գոհացուցիչ են: Համակարգի ամբողջական գործարկման ժամանակ հնարավորություն կընձեռվի կազմակերպել հեռահար ուսուցում այն մասնագիտությունների գծով, որոնք թույլատրվում է կրթության և գիտության նախարարության կողմից:

- Երկրորդ ծրագիրը վերաբերում է դեկանատներում իրականացվող մի շարք աշխատանքների ավտոմատացմանը: Բուհում գնահատման բազմագործոնային համակարգին անցնելու հետ խնդիր առաջացավ մշակել համակարգչային ծրագիր՝ գործոնների հաշվառման և ուսանողի ամփոփիչ գնահատականի ստացման համար: Կենտրոնի մասնագետների և ուսումնական մասի հետ համատեղ մշակվեց և ներդրվեց կրեդիտային համակարգի գնահատման ավտոմատացման ծրագիր, ինչպես նաև կազմակերպվեցին սեմինարներ բոլոր ամբիոնների վարիչների և դեկանատների աշխատակիցների համար: Ներկայումս ստեղծում ենք միասնական մեծ համակարգ, էլեկտրոնային դեկանատ անվամբ, որն իր մեջ կներառի բացակայությունների հաշվառման ամբողջ գործընթացի ավտոմատացումը, ուսանողների միասնական տեղեկատվական բազան, նրանց բազմագործոնային համակարգով գնահատման տեղեկատվությունը, ուսանողների անձնական թերթիկները, ավարտական դիպլոմի միջուկը, ինչպես նաև հնարավորություն կտա ստանալ բազմատեսակ հաշվետվություններ, ինչպիսիք են առաջադիմության, բացակայության հաշվետվությունները, 34, 10 ձևերը և այլն: Ներդրվող ծրագիրը կհեշտացնի տեղեկատվության փոխանակումը դեկանատների և ամբիոնների միջև (առցանց ռեժիմով), հնարավորություն կընձեռի ավտոմատացնել դեկանատներում իրականացվող մի շարք գործառույթներ և դրանով իսկ առավել արդյունավետ դարձնել ուսումնական գործընթացը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ծրագրերի զարգացման և առավել արդյունավետ իրականացման համար կենտրոնը նախատեսում է շարունակել կազմակերպել նախորդ տարիներին իրականացված միջոցառումների համախումբ, որը հիմնականում ուղղված է մի շարք գործընթացների կազմակերպմանը՝ էլեկտրոնային դասընթացների ծրագրերի ստեղծում, տեղեկատվության և գիտելիքի փոխանցման յուրահատուկ մեթոդների ներդրում՝ ուսուցման կազմակերպում

համացանցի միջոցով և հեռուստակոնֆերանսների կիրառմամբ, համապատասխան մասնագիտությունների գծով էլեկտրոնային ուսուցման ուսումնամեթոդական նյութերի մշակում, մասնագիտության համար անհրաժեշտ գիտելիքների էլեկտրոնային շտեմարանի ստեղծում, ուսանողների շրջանում տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ և համապատասխան մասնագիտական այլ ծրագրերի ուսուցման կազմակերպում:

Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության կենտրոնի կողմից նախատեսվում են հետևյալ աշխատանքները.

ԱՏԽԿ-ուսանող, ուսանող-ԱՏԽԿ երկկողմ տեղեկատվական հոսքի արդյունավետությունը ապահովելու համար աշխատանքեր են տարվում Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության կենտրոնի նոր կայքէջի գործարկման ուղղությամբ, ինչը կգործի նոր ուսումնական տարում:

Նախապատրաստել և տարածել շրջաբերական՝ ուղղված ագրոպարենային համակարգի բոլոր գործատուներին և կազմակերպություններին, թափուր հաստիքների և աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվությունը ԱՏԽԿ կայքի միջոցով տարածելու և շրջանավարտներին տրամադրելու վերաբերյալ:

Կան ՅԱԱՅ-ի ուսանողների և շրջանավարտների տվյալների հավաքման հետ կապված դժվարություններ, այդ պատճառով նախատեսվում է ներդնել դյուրօգտագործելի «տվյալների էլեկտրոնային բազա» տեղեկատվական համակարգ ԱՏԽԿ ծառայություններից օգտվող ուսանողների տվյալների մուտքագրման համար ԱՏԽԿ ներքին օգտագործման համար, ինչը մի քանի անգամ էֆեկտիվ կդարձնի ԱՏԽԿ աշխատանքները:

Կազմակերպել ՅԱԱՅ ուսանողների և ԱՏԽԿ աշխատակիցների համակարգված սեմինար-հանդիպումներ:

2013թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին կազմակերպել հերթական աշխատանքի տոնավաճառը՝ ստեղծելով գործատուների հետ ուսանողների և շրջանավարտների հանդիպման հնարավորություն:

Արտաքին կապերի դեպարտամենտի կողմից նախատեսվող աշխատանքները

Երասմուս-Մունդուս ծրագրի շրջանակներում, ինչպես նաև Գերմանիայի Վայհենշտեֆան-Թրիսդորֆ կիրառական գիտությունների համալսարանի հետ «Ագրարային մենեջմենթ» մագիստրոսական ծրագրի շրջանակներում, Լոգո կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում 2014-2017 թթ

Նախատեսվում է իրականացնել ակադեմիական և ուսանողական (բակալավր, մագիստրանտ, ասպիրանտ, հետազոտող) փոխանակումներ:

Տեմպուս ծրագրերի շրջանակներում 2014-17թթ ընթացքում նախատեսվում է՝

- Լրացուցիչ սարքերի և սարքավորումների ձեռքբերում,
- պրոֆեսորադասախոսական և ադմինիստրատիվ կազմի վերապատրաստում: Եվրոպական գործընկեր համալսարաններում, մասնակցել Եվրոպական կառավարման ամառային դպրոցի ուսուցմանը,
 - կիրառել Եվրոպական համալսարանների մոդուլային ծրագրերի կառավարման, որակի ապահովման, գնահատման մեթոդների փորձը,
 - «Ազրոտուրիզմ» ուսումնական ծրագրի մոդուլի մշակում
 - Նպաստել դասավանդման նոր մեթոդների զարգացմանը, ներառյալ էլեկտրոնային ուսուցումը և այլ մեթոդներ:
 - Որակավորման ազգային և սեկտորալ շրջանակների անհրաժեշտ փաստաթղթային փաթեթի մշակում,
 - Համալսարան-շրջանավարտ-աշխատաշուկա եռակողմ համագործակցության զարգացում՝

2014թ-ին նախատեսվում են Հայաստանում, Վրաստանում և Նիդերլանդներում վերապատրաստման դասընթացների կազմակերպում ՀԱԱՀ-ի ազրոէկոլոգիայի և ընդհանուր երկրագործության ամբիոնների, ինչպես նաև հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետի համապատասխան մասնագետների համար՝ **Նիդերլանդների կառավարության «Նուֆիկ»** հիմնադրամի ֆինանսավորմամբ, Դելֆտի միջազգային ինստիտուտի կողմից «Շրջակա միջավայրի պահպանություն և Կլիմայի փոփոխություն» ծրագրի շրջանակներում:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի միջազգային համագործակցության հետագա զարգացման նպատակով նախատեսվում է համալսարանի արտաքին կապերի զարգացում, միջազգայնացման ընդլայնում, Լիսաբոնի կոնվենցիայի և Բոլոնյան պրոցեսի պահանջներին համապատասխան ուսումնառողների, դասախոսների և գիտաշխատողների շարժունության ակտիվացում, ԲՈՒՀ-ի միջազգային հեղինակության բարձրացում:

Այդ առումով նախատեսվում է

- զարգացնել համագործակցությունը արտասահմանյան համալսարանների և միջազգային կազմակերպությունների հետ՝ ամրապնդելով հին և ստեղծելով նոր կապեր, անդամակցել/ընդգերկվել մասնագիտական և գիտակրթական միջազգային ասոցիացիաներում և կազմակերպություններում,

- խթանել Համալսարանի ուսանողների և գիտամանկավարժական անձնակազմի մասնակցությունը միջազգային փոխանակման ծրագրերին,
- ընդլայնել համալսարանի մասնակցությունը շարժունության ծրագրերին և բարձրացնել շարժունության համալսարանական ցուցանիշը,
- ընդլայնել համալսարանի մասնակցությունը Էրազմուս պլյուս, ՅԲ, Twinning և այլ դրամաշնորհային ծրագրերում,
- զարգացնել համագործակցությունը արտասահմանյան երկրների ԲՈՒՀ-երի հետ՝ համատեղ ուսումնական (բակալավրային, մագիստրոսական) ծրագրերի ստեղծման և որակավորման աստիճանների շնորհման ուղղությամբ, արտասահմանյան կրթագիտական ուսումնական հաստատությունների հետ համատեղ հեռահար ուսուցումների կազմակերպում,
- աշխատանքներ տանել ՀԱԱՀ-ում արտասահմանյան ուսանողներ ներգրավելու և օտարերկրա դասախոսներ հրավիրելու ուղղությամբ:

**8. ՀԱԱՀ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
